1287-UZ

333

2000

№ 7



Армянскаго
Лазаревыхъ
Института
Восточныхъ языковъ

20+241



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна

551 1287-122 539 6. 699-57

# ԳԻՐՔ

## ՊԱՏԱՍԽԱ՛ՆԱԿԱ՛Ն

Սրբոյն Աթանասիոսի.
Հարցմանցն Սրբոյն Կիւրղի
Երուսաղէմացւոյ:

Տպեցեալ ՚ի Հայրապետութեան Տեառն Ղազարու
Սրբազան Կաթողիկոսի ամենայն Հայոց
Եւ ՚ի պատրիարգութեան մերոյն
Երուսաղէմի Տեառն Գրիգորի Շղթայաբան Վարդապետի:
՚Ի Կոստանդնու պօլիս Քաղաքի:
Հրամանաւ Նորին դիտողի
Տեառն Յակոբայ Շղթայաբան
Պատրիարգի:
(Ի տպարանի չնչին Յովհաննիսի)

## Ա. Ճառ Ընդհանրական։

Գիտեմք՝ զի ամ ոք որ գտերք մի առնու՛ ի ձեռին, նախ զանունն, եւ երկրորդ զվարս շարադրողին կամի իմանալ։ Գրքուկս այս կոչի Տոմարաբանութի· ճ, հարց՝ եւ Պատասխանի։ Որոյ հարցմունքն եղեն ՚ի սբյն Կիւրղէ եճմացւոյն, եւ պատասխանիքն ՚ի սբյն Աթանասիոսէ Աղեքսանդրիոյ Հայրապետէն։ որ մինչ երկոքեանքն հալածեցեալք յարիոսական Թագաւորէն ՚ի Կոստանդինոսէ, որդւոյ մեծին Կոստանդիանոսի, գնացեալ ՚ի Տարսոն առ Միւղիանոս Եպիսկոպոսն, զոր սիրով մեծաւ ընկալաւ։ Եւ թուի թէ յայնմ միջոցի գոլով պնդորդք· մինն հարցանէր, եւ միւսն պատասխանէր։ Իսկ թէ որպիսի ոք էր սբն Աթանասիոս։ էր Ազատ Սարկաւագ Աղեքսանդրոսի Հայրապետին Աղեքսանդրիոյ, անխայեան ընդդէմ արիոսի՝ ՚ի սբ ժողովն Նիկիոյ։

2 Որում

А. МЯСНИКЯН

Որում Հոգին սբ. երեւեալ ՚ի կերպա
րանս սբյն Աղէքսանդրոսի. հրամայ
եաց առնուլ քարտէզ և Թանաք, և
գրել՝ զինչ և հրամայէրն: զոր գրեալ
զհաւատամք ՚ի մի ա̃ծն, տարեալ մա_
տուց սբյն Աղէքսանդրոսի և ասաց.
Տէր իմ եւ հայր՝ կատարեցի զոր հրա
մայեցեր: եւնոյն ժամայն իմացաւ սբն
Աղէքսանդրոս, թէ ՚ի հոգւոյն սբյ
էր շարադրեալ դաւանութին, եւ ծա_
նուցց սբ. ժողովոյն: Որք հրաման ե_
տուն սբյն Աթանասիոսի ելանել ՚ի
բարձր տեղւոջ և ընթեռնուլ: զոր
մինչ ընթերցաւ, այնու վճռեցին սբ.
հարքն զդատապարտութին արիոսի,
և կնքեցին զուղիղ կանոնն հաւատոյ:
զՍա ՚ի մանկական տիս, հա̃կակից
մանկունքն նստուցեալ յաթոռ իբր
Եպիսկոպոս, ձեռնադրութի ընդունէ
ին Եպիսկոպոսական և Քահանայ
ական: զոր տեսեալ սբյն Աղէքսանդ
րոսի՝ մտախոհ լեալ սքանչանայր, և
ցուցումն յա̃յ ասէր զպատահեալսն,

սմ̃ խուկ յետոյ եղև այնպէս։ Ուստի սբն Աղէքսանդրոս հրամայէց զմանկունսն տանել և հոգաբարձութ̄ կըրթել։ Ուստի լեալ Նհատ Սարկաւագ սբյն Աղէքսանդրոսի, և մարտակից նմա ՚ի սբ ժողովն Նիկիոյ ընդդէմ պղծոյն Արիոսի, բազում քաջութիւ եցոյց։ Նա զկնի ննջման սբյն Աղէքսանդրոսի, լեալ Եպիսկոպոս Աղէքսանդրիոյ Նահատակին Մարկոսի աթոռոյն. ոչ միայն երկրորդ Լուսաւորիչ եղև Աղէքսանդրիոյ վիճակին Եգիպտոսի, այլև վիճակի Մատթէոսի (կամ Մատաթեայ) Հնդկաց և Հաբէշաց։ Րանգի Մեռոպիոս անուն ոմն՝ տիւրացի հաւատացեալ՝ առեալ երկուս մանկունս, Փռումէնդիոս, և Եդեսիոս կրթէր ա̃ծգիտութ. և նոքօք նաւեալ ՚ի Հնդիկս. և զինուորք Թագաւորին Հնդկաց յափշտակեալ զմանկունսն, հասուցանէին առաջի Թագաւորին. որ զԵդեսիոս արար իւրն մատռուակ, և զՓռումէն



դիոս

դիոս դպիր հիմանդացւոց. զարգա
ցեալք սիրելիք եղեն յաջս Թագաւո
րին եւ Թագուհւոյն։ վախճանի Թա-
գաւորն, եւ առնէ զնս ազատս։ Եւ
էր մանուկ Թագաւորին ժառանգ
աթոռոյն։ իսկ մայր Թագաւոր ման
կանն, աղաչէր զարսն, մի՛ Թողուլ
զհօգս որդւոյ Թագաւորին, հնալան
դեալ նոքա, զարգացուցին զորդի
Թագաւորին քրիստոնէական հաւա
տով, աշինեցին եկեղեցիս։ Այպա ա-
ղաչանօք հրաման առեալ ՚ի Թագա
ւորէն եւ՚ի դշխոյէն՝ դարձան յՍպէք
սանդրիայ, եւ ծանուցին զեղեալսն
մեծին Աթանասի. զորս մեծն Աթանաս
արար զՓռումէնդիոս եւ զԵդեսիոս
Եպիսկոպոս Հնդկաց հապէշաց եւ
ճակեաց յՁն նշ իբրեւ զՄաքեալս.
որոց քարոզուն լուեալ Թագաւորն
եւ բոլոր աշխարհն դարձան յածգի-
տուն։ Եւ Թուծի Թէ յայնմ օրէ մին
չեւ ցարդ, եղեւ սովորութն հապէշաց
առնուլ զձեռնադրութիւն ՚ի ղպտաց
Պատ

Պատրիարգէն որ Նըստի այժմ յեգիպտոս։ ո՛չ ասի Սոկրատ պատմագրքոյ Ե՟Գ գլուխ ։ գրեաց սուրբն Աթանաս և զպատմութի՟ւն մեծին Ան՟տոնիոսի • ո՛չ ասէ նոյն Սոկրատ ԺԵ՟ գլուխ։ Մեծն Կոստանդիանոս, ոչ լուեալ չարախօսացն նբ՟յն Աթանասիոսի • սորոյգ՝ ևճշմարիտ սէր նյ՟ կոչեաց զնա։ Սբ՟ն Աթանասիոս, նման քն՟ անըմբռնելի եղ՟լ յարիանոսաց ժողովոյն որ յանտիոք, հովանաւորութ՟ն նյ՟ ծածկի 'ի գռնապանաց, եչոքեալ 'ի հռոմ առ Պապն Յուլիոս • պատմէ զվէշտս նբ՟ հաւատոյն ևեկեղեցւոյն որ 'ի յարիանոսաց, և մեծաւ պատուով ընկալեալ լինի 'ի նբ՟յն Յուլիոսէ պապէ։ Աթանասիոս էր սիւն և ամուր աշտարակ նբ՟յ եկեղեցւոյ ։ ուստի արիանոսքն անշուշտ կարծէին, թէ 'ի յաղթելն ըզնա, կարեն յաղթել և զամ՟ ուղղափառսն • Սոկրատ Լ՟Է գլուխ։ Ուրեմն նա Ի՟ նմանութե Երեմիայի • Ճ՟ •18.

էր

էր քաղաք ամուր, նախն երկաթի, նպարիսպ պղնձի ամուր, զոր ոչ կարացին ստանալ արիանոսքն ։ Բազում նայլ բանք եգործք գտանին ՚ի պատմութեան զսբ՟յն Աթանասիոսէ։ Այլ զգովութ՟ե սբ՟յն Աթանասիոսի զինչ ասելի է. մինչ զի սբ՟ն Գրիգոր Ածաբան ՚ի գովասանութ՟ե նր՟ ճառին ասէ, թէ զԱթանասիոս գովելովս՝ զառաքինութիւն գովեսցես ։ վ՟ս զի նոյն է զնա ասել՝ և զառաքինութիւն գովել ։ զի զա՟մ յինքեան ունէր միահամուռ զառաքինութի։ զի ա՟յ կեան ա՟մքն՝ որք ը՟ն ա՟յ կեցին. ոպ՟ Աբրահամ, Իսահակ, և Յակոբ։ որոց եզկնի ննջմանն՝ Ած՟՝ իբր նոքօք պանծալով ասէր. ես եմ Ած՟ Աբրահամու նայլն։ Ըհ զի բազում են կարգք սբ՟ց, զորս թուէ Ածաբանն ։ որպիսիք են՝ Օրէնսդէրք, Զօրավարք, Քահանայք, Մարգարէք, Աւետարանիչք, Առաքելք, Հովիւք, և Վարդապետք։

Կամ

Կամ թէ յատէկապէս ո՛պ ՙՍղ. Աբ-
րահամ, Իսահակ, Յակոբ. երկոտա
սան ՙնահապետքն, Մովսէս, Ահա-
րոն, Յեսու, Դատաւորքն, Սամու-
էլ, Դաւիթ, Սողոմոն։ Եղիա, Եղի
սէոս, նախ քան զգերութիւն բաբե
լացւոց. և որք զկնի գերութեան, և վեր
ջին նոցա կարգաւ, և առաջին ճշմար
տութեան։ որք՝ քան զբանն՝ ձայնն,
և քան զլոյս ճրագն, նախ քան զՄիջ
նորդն՝ միջնորդ հնոյ և նորոյ կտա-
կին Յովհաննէս։ Ընդ այսոսիկ Աթա
նասիոս, ընդ ոմանս նախանձեցաւ,
և յոմանց սակաւ ինչ վերջացաւ. էր
զի և զոմանս գերազանցեաց։ ոմանց՝
բանիւ, կիսոց՝ և գործով։ Այլոց հե
զութեամբ, նախանձու մեծապաշտութեամբ,
և վտանգօք։ ոմանց տուաճել, և կի-
սոց ամենայնիւ նմանեցաւ։

Ո՞ այլ յայլմէ զգեղեց
կութիւն էառ, և՛ ինքն
գին իւր համա
քեց և այլն։

Ու-

Ուրեմն այսորիկ գերազանցագունի, եւ զնիւն ծառայի մ̅ր բանիցն՝ սիրա-
հար գոլով վերջացելս 'ի գործոց ն̅ր, Յակոբ մեղաներկ Պատրիարգ եւ Արք Եպիսկոպոս Կոստանդնու-
պօլսոյ, եւ պաշտօնեայս ս̅րբյ Ե̅մի, ետու հրաման Տպեցման այսորիկ (փոքրիկ ըստ Թղթոյ, եւ մեծաց ըստ բանից) գրքոյս ․ եւ յորդորեմ զա̃մ ա̅ծասէր եւ բարեմիտ օրհնեալ ազգ-
իմ, առնուլ՝ օգտիլ, շահիլ եւ շահե-
ցուցանել զայլս, ողջ կալով
'ի Տէր։



Սբըն Կիւրեղ հարցաքըն նէր,
Սբն Աթանաս պատասխան նէր։
քաղցեալ մանկանց սեղան եդին,
՚ի ճաշ բանից հրաւիրին ցին։

(Յորդումն)

# ՀԵՏԵՒՈՒՄՆ

Համարիմ ընդ Ա՟յ երկս բանս և ապա այսուհետև 'ի մէջ գալ. ք՟ զի բազմաց խնդրելի եղև վ՟ս այսմ իրի քննութե՟ց և երկոճանալի երկպառակուէ, և ասացից իսկ. զի այսպիսի իցէ պիտանացու հոգւի մարդոյ. եթէ ուստի՞ հաստատեցաւ. և ընդէ՞ր 'ի մարդկանէ ոչ եկն յաշխարհս յայսմիկ 'ի մեռելոցն և պատմեաց մեզ, և հաւատարմացոյց վ՟ս հոգւոյ մարդկան բան ինչ ուսուցանել. վասն այդմիկ հարցանեմ ընդ Ս՟րբութիւն քո ո՞վ երանելի Հայր։

(Պատասխանի)

Իսկ հոգի մարդոյ գոյութիւն է. ան-
եմանալի՝ անմարմին և անտեսանելի
՚ի նմանութի հրեշտակաց ընդունա-
կան և ոչ երբէ զհուր գոյացեալ, զի
շաղփաքանուէ որոգենի աստացՀածոյն
և ոչ դարձեալ քան զհոգիքն էին
մարմինքն՝ և ոչ մարմինքն էին քան
զհոգիքն, որպէս մանիքեցիքն չարաբար
աղանդեցին. այլ ՚ի յօրինակ քարի և
յերկաթոյ՝ որ ընդ միմեանս հարկա
նելով յերկոցունց անտի հուր ծնանի
նոյնպէս յառնէ և ՚ի կնոջէ հաստատի
հոգին հրամանաւն այ. և հաւան
առնէ զքեզ ածային առաքեալն Պօղոս
որ ասէ. սերմանի մարմին շնչաւոր,
և յառնէ մարմին հոգևոր. յայտ է թէ
յաւուրն դատաստանին:

(Հարցումն)

Ուստի՞ յայտ է՝ թէ ՚ի ժամ մահուն
ոչ մեռանի հոգին ընդ մարմնոյն:

(Պատասխանի)

Բանն ած յայտնապէս ուսուցանէ

 մեզ

մեզ վասն մահու մարմնոյն և կենդա
նութեան հոգւոյն, ասէ՝ մի՛ երկնչիք
յայնցանէ որք զմարմինն սպանանեն
և զհոգին ոչ․ յայտ է թէ զի անմահ
և անչարչարելի է հոգին ։

(Պորփիւռ)

Պատճառաւորիմ է բանդ․ այլ զայս հար
ցանեմ՝ թէ որո՞վ աղագաւ բաժա-
նի հոգին 'ի մարմնոյն ։

(Պատասխանի)

Ի չորից գոյութեանց հաստատեցաւ
մարմին մարդոյն․ յարենէ, 'ի մաղձէ
'ի մաղասէ, և 'ի հիւթոյ․ այսինքն
'ի ջրոյ․ 'ի վերոյ չորից գոյացութեանց
հաստատի մարմին մարդոյ և 'ի նմա
նութեան աղաւնոյ 'ի ներքս 'ի մարմինն
բնակեալ է հոգին․ և 'ի ժամ մահուն
հրամանաւն այ բաժանի չորս գոյա
ցութիս և ելանիցէ անդէն աղաւնին
արգելեալ, որէ օրինակ հոգւոյ մարդոյն
և յետ ելանելոյ և բաժանման հոգւոյն
'ի մարմնոյն, արիւնն ցամաքի, որ է
ջերմ և կենդանագոյն գոյութեան․ ուս

տի մեռեալ մարմինք զկնի մահուանն ոչ ունին արիւն, այլ են ցամաքեալք

(Հորդուեան)

Ո՞ւր լիցեն արդեօք յաւուր երթա լոյ հոգիք մարդկանց։

(Պատասխանի)

Ստո՛յգ և ահաւոր է հարցումն այդ և ծածկեալ 'ի մարդկանէ. քանզի յայնցանէ որք անդ երթեալ լիցեն՝ ոչ հրամայեալ մ̃ծ գալ այսր, և թէ ուր լիցին կամ ո՞պ̃ լիցեն անդ հոգիքն։ այլ սակայն ոպ̃ 'ի գրոց ուսաք այսմ̃ գիտեմք. զի հոգիք մեղաւորաց 'ի դժոխս են 'ի ներքոյ երկրի և ծովու. ոպ̃ և Սաղմոսն ասէ. եդին զիս 'ի գուբ ներքնումն։ և Յոբ ասէ. յերկիր խաւարային և մէգ մառախուղ։ երկիր խաւար յաւիտենական՝ ուր ոչ գոյ ճանապարհ արփիէ, և ոչ ժամանակ մարմնոյ։ Իսկ հոգիք արդարոցն զկնի գալստեանն Քրի̃ առ մարդիկս, ոպ̃ ուսաք յաւիտենական՝ զի 'ի դրախտին լիցեն. զի ո՛չ եթէ վասն ահա-



դա

զակէն միայն եբաց ած զդրախտն, այլ վս ամ հոգւոց մբց արդարոց։

(Հարցումն)

Ապա զի՞նչ, ընկալան միանգամայն արդարքն զվարձս․ և մեղաւորքն զտանջանսն։

(Պատասխանի)

Ոչ․ այլ ունիցին զխնդումն և զուրախութիւն հոգւոյ սրբոյն և մասնաւոր վայելումն իսկ իցէ․ նոյնպէս և տրտմութիւն մեղաւորաց, զոր ունիցին մասնաւոր տանջանք իսկ իցէ․ զոր օրինակ յորժամ հրաւիրէ ոք մեծատուն զոմանս, զի ունիցին ճաշ ընդ նմա, և նոքա ակն ունիցին վայելել 'ի պէսպէս խորտկացն։ սոյնպէս և որ մեղանչական են և ակն ունիցին տանջանաց՝ զաւուրս իւրեանց սգով և տրտմութեամբ անցուցանեն։ այսպէս պարտ է իմանալ և վս հոգւոց արդարոց և մեղաւորաց։

(Հարցումն)

Իսկ եթէ այդպէս ասացեր, և ոչ հո-



գւք

գիրք արդարոց յարքայութն մտանեն՝
եւ ոչ մեղաւորքն 'ի տանջանս դժոխոց՝
զի ա՛րդ ապա վն մեծատանն եւ ղա-
զարու լսեմք 'ի Քրէ 'ի ձեռն սբ
աւետարանին որ ասէ. զի մեծատունն
'ի հուր գեհենոյն պապակէր եւ ա-
ղաչէր հաբր՛համ առաքել զղազա-
րոս, որպէս եւ լուաք.

(Պատասխանի)

Առակօք խօսեցաւ ած զայդ. զոր
օրինակ եւ վն կուսանացն եւ այլոցն.
եւ արդ՝ զի ոչ եղեւ գործն ղազարու
արդեամբք, քանզի որք տանջելոց են
'ի գեհեններն՝ տեսանեն զարդարսն
որք առ աբրահամու վայելեն յար
քայութեն. բայց զմիմեանս ո՛չ է հնար
մեղաւորացն տեսանել. եւ ա՛յդ է ան
հնարին տանջանք մեղաւորացն. իսկ
արդարքն՝ ոչ միայն զանձինս իւրէնց
տեսանեն, այլ եւ զամ արդարսն. որպ
եւ 'ի Թաբօրական լերինն ծանեան
առաքեալքն զմովսէս եւ զեղիայ. իսկ
մեղաւորքն տեսանեն զամ արդարսն

 'ի փառս

'ի փառս, և ինքեանք զմիմեանս ո՛չ
տեսանեն՝ զի մի՛ մխիթարեսցին։ Իսկ
արդարքն ճանաչեն զմիմեանս
և զմերձաւորսն։

(Հարցումն)

Արդ ուրեմն այդ արդարոցն հոգիքն
յետ գնալոյ նց յաշխարհէս թէ ոչ։

(Պատասխանի)

Ո՛չ երբէք լուար մարգարէին դաւ
թի որ ասէ՝ Մարդոյ ոպ̃ խոտոյ են
աւուրք իւր. ոպ̃ ծաղիկ վայրի այնպ̃
ծաղկեսցի։ Ո՛ նչէ 'ի նմա հողմ ոչէ,
և ոչ ևս երևի տեղի նորա։

(Հարցումն)

Իսկ եթէ այդպէս իցէ՝ սբ̃քն զիա՞րդ
երևին 'ի տաճարս իւրեանց. և լինի
ցի երևումն սրբոց արանց։

(Պատասխանի)

Լո՛ւր եղբայր և մի՛ երկմտիր. յորժամ
'ի գերեզմանս և 'ի տաճարս լինի ե-
րևումն սբ̃ց՝ ո՛չ եթէ 'ի ձեռն սրբոց
արանց է երևումն՝ այլ 'ի ձեռն հր
րեշտակաց սբ̃ց։ աստ ուսցիս. մի գոյ

ութն հոգւոյ երանելոյն Պետրոսի և Պօղոսի 'ի մի ժամ յական թօթափել երևանալ 'ի տեղիս բազումս և 'ի բիւր տաճարս նշ̄ ընդ ա̄մ երկիր, զոր և ոչ հրեշտ̄կ կարէ առնել զայդ․ զի ևիմանալի զօրութիւքն՝ յորժամ 'ի սպասաւորութիւն առաքին, պակասին յերկնային փառաբանութ̄էն։

(Հօրդուսին)

Զի՞նչ լաւագոյն առաւելապ̄ կերպս բերէ հշ̄տկց քան զհոգիս մարդկան։

(Պոտոսխոնէ)

Երեքեան գոյութիւնք անհասանելիք քան զմարդկան՝ զոր ոչ ոք երբէք կարասցէ տեսանել 'ի վ̄ր երկրի։ ասեմ իսկ զա̄յ՝ զհրեշտակի՝ և զհոգւոյ։ այլ սակայն զայս գիտեմք․ զի որչափ լաւագոյն և պայծառ է արեգակն քան ըզլուսինն՝ այնչափ առաւելագոյն վերագոյն է գոյութ̄ հշ̄տկց ք̄ զմարդկան։

(Հօրդուսին)

Զի՞ որդ մարգարէքն բազում անգամ տեսանէին զա̄ծ։

(Վարդապետն)

Յետ մարգարէից, և յետ յարութ՟ն Ք՟ի, ասէ Յօհաննէս Ա՟ծաբանն, զԱ՟ծ ոչ ոք ետես երբէք, բայց միածին Որդին որ 'ի ծոց Հօր: և Պօղոս ասէ՝ զոր ոչ ոք ետես 'ի մարդկանէ, և ո՛չ տեսանել կարող է: Ք՟զի ո՛չ եթէ նոքա մերկ զգայութ՟ն Ա՟յ տեսանէին, այլ ըստ կարողութ՟ե մարդկան աչաց զիջանելով ա՟ծ կերպարանի. որ յայնժամ անմարմին էր և առանց անդամոց, ո՛չ մարդ նոցա երևէր 'ի ձևս մարմնոյ. ուստի յայտ է, զի ոչ տեսանէին զգոյութ՟ն ա՟յ, այլ զփառս: այսպէս վ՟ն հրեշտակաց և վ՟ն մեր հոգւոց պարտ է զայս իմանալ: բայց միայն ա՟ծածին մարիամ, զի տեսեալ սոսկ գոյութ՟ն հր՟շտկի, ո՟ր զգաբրիէլ:

(Հարցումն)

Ապա և ո՛չ հրեշտակք երևին ըստ գոյութեան իւրեանց մարդկան:

(Վարդապետն)

Ո՛չ երբէք. քանզի ո՛չ զօրեն աչք ա-

պականացու տեսանել զգոյութիւն անապականն։ և աստանօր ստուգապէս է տեսանել. զի ոչ ըստ գոյութե երևին մեզ հրեշտակք, այլ 'ի կերպս երիտասարդի զինքեանս ցուցանեն։

(Հարցումն)

Զի՞նչ իցէ գոյուն հրեշտկի անմարմնոյ

(Պատասխանի)

Հրեշտկն է կենդանի գոյուն. աննիւթ և բանաւոր օրհնաբանող և անմահ։

(Հարցումն)

Զի՞նչ գործ իցէ յերկինս զօրացն երկնաւորաց։

(Պատասխանի)

Օրհնաբանութիւն անդադար, և ըղձանք հանապազորդ, կալ առաջի մեծ վայելչութեն այ. թերևս աղաչանս ցաւագինս մատուցանեն վս փրկութե մարդկան։ քանզի և դասք այդոքիկ ըստ իւրաքանչիւր կարգեալ են դասք։ վարդապետութե դասք՝ շուրջ կանգնելով. դասք իմացողականք. դասք պահպանողք. դասք սպասա-

Ճո՛րկանք. դասք տնջողականք. դասք
հոգոց աճանդօղք. դասք պատերազ
մականք. դասք մարդկան վերակա
ցուք. և ո՛ւթ դասք զանազանք զերկ
նային զուարթունքն ճանաչեցաք
կացութբ և կարգօք. իսկ զաթոռք
և զքերովբէք առանց միջոյ ա՛ծութե
ճանաչեմք. զի 'ի վեր է քան զա՛մ.
և մերձ են առ ա՛ծ. իսկ սերովբէքն
ուսուցանեն զստորնագոյնն ազգ և
դասք. և այնպիսի է կարգ վերնա-
գոյնն. իսկ ցածգոյն դասքն հրշտկք
սրբք՝ որք են մարդկան վերակացուք.

(Հարցումն)

Իսկ ընդէ՞ր յիշեն զմեզ հոգիքն եր-
թէլքն 'ի մէնջ, ո՛չ և հրշտկք յիշեն

(Պատասխանի)

Հոգիք սրբցն յիշեն յա՛մ ժամ. իսկ
մեղաւորայն որ 'ի դժոխս են՝ նաև
ո՛չ զա՛ծ յիշեն, թողթէ զմեզ. լո՛ւր
յաղագս այսմիկ եթէ զինչ ասէ երա
նելին Դաւիթ, ո՛չ ոք է որ 'ի մահու
յիշէ զքեզ կամ 'ի դժոխս խոստո-

վա՛ն լիցի առ քեզ։ և դարձեալ՝ թէ ո՛չ մեռեալք օրհնեսցեն զքեզ. և այլն։

(Հորացիոսի)

Զի՞նչ արդեօք լիցեն յառաջ երթալոց հոգւոյն գործք։

(Պղատոնէ)

Յորժամ հոգին 'ի մարմնոյն բաժանի՝ ո՛չ բարի ինչ գործէ, և ո՛չ զչար։ զոր օրինակ՝ զնուագարանն՝ յորժամ ոչ էցէ ոք որ հարկանէ զտաւիղն, խափանեալ տեսանի և առանց գործոյ։ այսպէս մարմինն և հոգին յորժամ բաժանին 'ի միմեանց ոչ ինչ կարասցեն գործել։ իսկ հոգիք սրբոց՝ 'ի հոգւոյն սրբոյ ներգործեալք՝ ընդ հրեշտակս յերկրին կենդանեաց զա՛ծ օրհնաբանեն և ցնծան։

(Հորացիոսի)

Ապա ոչ իմանան հոգիք մեղաւորաց՝ յորժամ լինի վասն նոցա ողորմութիւն, կամ պատարագ։

(Պղատոնէ)

Որք ճշմարիտ հաւատով են վախ

ծանեաւ՝ թէ և յանցեալ լինի ՚ի տկա
րութէ մարմնոյ, և դարձել գայցեն
՚ի միտս խորհրդոց և յապաշխարութին
ընթանան՝ և ՚ի չար երից ժամու ժա
մանակի ՚ի բաց կացցեն ՚ի մեղաց և
՚ի կենցաղոյս յայսմանէ, ամ ինչ որ
լինի վս՟ նց՝ ընդունելի և օգտակարէ
զոր օրինակ յորժամ այգին ծաղկեա
ցի յադարակի անդր, ապա լինիցի գի
նւոյն որք յամանս ածեալ են. այնպէս
և մեղաւորացն յորժամ լինիցի վս՟ նց
ողորմութին և պատարագ անարիւն :

(Հարցումն)

Արդ՝ հնար է ինչ լինէ իմանալ՝ թէ
վս՟ էր ոչ եթող ած ՚ի հոգւոյն եր
թալոց, գալ այսր և պատմել մեզ զա
՚ի յօգտութին մեզ: կամ թէ զի արդ
լինիցի կերքն ՚ի դժոխս. կամ որպէս
սի նեղութիւնք լինին անդր :

(Պատասխանի)

Բայց զայս գիտեմ զի բազում մոլո
րութին ծնանելոյ էին անդ. քանզի
դևք բազում անգամ այնու հնարեն ՚ի



8699-54
ГОС. БИБЛИОТЕКА ՀՍՍՌ-АРМ. ССР ИМ. А. МЯСНИКЯНА
8699-54

ձև մարդկան փոխակերպեալք լինէ
ին և ասացեալք թէ յարեալք 'ի մեռե
լոց և բազում ինչ սուտ աւանդեալ
էին և չար հերձուած սերմանէին վասն
հեշտութ. կենցաղոյս այս առ 'ի մոլո
րութ. և 'ի կորուստ մեզ հետեւելոցս։

(Հորացիուս)

Լաւագոյն էր մարդոյ՝ եթէ կարէր
գտանել զօր մահուան իւրոյ։

(Պոպալիանէ)

Այ զամ ինչ օգտութ. մարդկան
աւանդէց. նաև ոչ իսկ զայս թողէր
էր առանց քննութ.՝ եթէ էր մեզ
յօգուտ. քանզի եթէ գիտէր ոք զօր
մահուանն իւրոյ՝ զամ աւուրս կենաց
իւրոց մեղանչէր առանց երկիւղի և
ողորմութ. և բազում չարիս գործէր.
և ոչ աւելի քան զերիս աւուրս դառ
նայր յապաշխարութ. նաև ոչ զայն
ևս զօրէր ապաշխարել. քանզի տեսա
նէր զինքն առ մահն մերձեալ՝ թու
լացեալ ջլատէր, և 'ի վայր յափշտա
կութէն կործանէր։ Լուր Այ յասելն



'իձեւն

’ի ձեռն մերձօկայ մարգարէին. Թէ
յոր ինչ գտոյց զոք. յայն իսկ դատա-
ցեց զնմ մարդ: եւ զինչ խորհէր այն
ասա դու ցիս. եթէ ոք բազում սպա-
նութին գործեալ եւ գրկեալ, եւ այլ
զանազան չարիս արարեալ. եւ արհա-
մարհեալ զպատուիրանսն այ, եւ ’ի-
ձեռն երից աւուրց միայն լուեալ ’ի
չարեաց, զի՞նչ օգուտ էր նմա:

(Հարցումն)

Որդ մինչեւ ցայժմ ասէին թէ՝ յան-
ցանք հարցն գան ’ի վերայ որդւոց
մինչեւ յերրորդ եւ ’ի չորրորդ ազգ:

(Պատասխանէ)

’Ի ձեռն Մովսիսի միայն ասացաւ
այդ՝ հրամանաւ այ. իսկ ’ի ձեռն
Երեմիայի դարձեալ ասաց, քաւ լիցի.
այլ որք ուտէին զագուխն՝ նոցին առ-
ցեն եւ ատամունքն: լուիցուք անպրէն
Քրի որ ասէ՝ ամէն ամէն ասեմ ձեզ
եկեսցեն մեղք հարց ձերոց ’ի վերա ձեր
յարենէ աբելի արդարոյ մինչեւ զա-
քարիանն զաքարիայ որդւոյ բարաքեայ

 զոր

զոր սպանին ընդ մէջ տաճարին և
սեղանոյն ։ ուստի յայտ է զի այնոքիկ
որք ոչ են մըկրտեալ՝ գայցէ 'ի վ̃ր ն̃ց
յանցանս հարցն ։ իսկ զհաճոյացեալքս
մբ մըկրտութիւն սրբէ յամ̃ ախտից ։

(Հարցումն)

Ասեն ոմանք՝ թէ վասն յանցանաց
ծնողաց մեռանին որդիք և այդ̃պ իցէ

(Պատասխանի)

Լա՛ւ է այդպէս լինել՝ քան թէ դի-
ւահարին վասն հարցն յանցանաց ։

(Հարցումն)

Վասն է՞ր տղայք մեռանին, և այլք
ծերանան առաւել քան զչափն ։ և
ոմանք արդարագործ ոչ լինին և բա
զում ամս հարսանեօք վայելեն և ապա
մեռանին ։ և այլք բարեգործ լինին
և առանց որդոց և աղքատք ։ և այլք
ամբարիշտք և քաջաբերք որդւոց
հարք և ոչ մեռանին ։

(Պատասխանի)

Բազում բանք են յաղագս այդմիկ,
այլ սակայն զոր յամ̃ծաշունչ գրոց ու-

սեալ եմք՝ ասասցուք. համառօտեցելոց մանկունք՝ ոչ վս̃ յանցանաց հարցն մեռանէին, այլ վս̃ ողջախոհութեան ծնողացն: երկու պատճառ բարեաց յո̃յ առաջի եդեալ կայ. նախ զի մաքուր մատչին առաջի ա̃յ և հասանին փրկութե̃, թերևս չարագոյն են հանդերձեալ ի կենցաղոյս կեալ. և ա̃ծ վս̃ այնորիկ յափշտակեաց զն̃ս. և ծնօղք նց̃ զպտուղսն, և զինչսն զայն որ՚ի ձեռն կտակացն թողլոց էին մանկանցն՝ զայն աղքատաց բաշխեսցեն: և դարձել. զի ո՜չ ոք է առանց մեղաց ծնօղք նց̃ թէ գոհութե̃ տարցեն վըշտայն՝ քաւէին ՚ի յանցանաց իւրեանց զոր ունիցին, և անդ վայելեսցեն զարքայութին: այդպէս իցեն բանքդ յաղագս մեռանելոյ տղայոց արդարոց արանց բարեգործաց: իսկ որ բարով են հանապազ և քաջաբերք լինին որդիք ամբարշտ̃ացն՝ սակայն և նոքա թերևս սուղ ինչ բարիս գործեալ են և փոխանակ բարեացն այն աստէն վայ



ելեն

եղեն և տուցեն զհատուցումն, որպ և
մեծատունն այն լուաւ յաբրահամէ
թէ ընկալար զբարիսն քո․ այսինքն
թէ լցար բարութբ գործովքն զոր
արարեր։ և յորժամ դժոխարականս
լինին արդարքն և սուրբքն՝ և նոքա
թերևս սուղ ինչ յանցանս գործէլեն
և՛ի ձեռն նեղութէցն այնորիկ մաք
րեալ սրբին, որպ և ղազարոս 'ի յան
ցանաց իւրոց, և՛ի ձեռն դժոխար կե
նացն հանդիստ գտանիցեն․ զի զոր
սիրէ տր և խրատէ։ և վս այդորիկ
մի՛ խռովիր յորժամ տեսանես զամ
բարիշտն 'ի բարեկենդանութեան և
զարդարսն 'ի դժոխարութե և իբրև
'ի մսուր նեղ․ զի այնու իբրև ոսկի
մաքուր մծային ցորենովք պարար
տանան․ մի՛ ապա խռովիր այսուհե_
տև․ քանզի զինչ աստ վայելեմք,
անդ պակասիմք․ և զինչ աստ պակա
սիցեմք, անդ վայելիցեմք, 'ի ձեռն
տրտմականացն գալ 'ի գիտութն և
վայելել զերկնից արքայութն․ վսնկ

 բաղում

բազում ժամանակս տացէ մեղաւո-
րաց, գուցէ և ՚ի մետասան ժամու ա-
ռուրն հասանեն վարձուց, որ է խո-
րին ծերութե̄, զի և յապաշխարութե̄
հասանեն։ Իսկ զարդարն բազում ան-
գամ փութայ սակաւ ամաց յափշ-
տակել աստի, զի մի՛ չարութի̄ն փո-
խեսցէ զիմաստութի̄ն հանճարոյ նր̄·
կամ նենգութի̄ն պատրեսցէ զմիտս նր̄։
Վ̄ն կատարին սուղ ինչ ժամանա
կաւ յառաջ· զի հոգիք նց̄ առաքի-
նութե̄ վայելեսցեն զկեանսն յաւի-
տենից։

(Հարցումն)

Որ տառապեալ ՚ի կեանս յայս, մտանէ՞
յարքայութի̄ն· և կամ որ աստ ՚ի բարե-
կենդանութե̄ են, մտանե՞ն ՚ի գեհենն

(Պատասխանի)

Այո՛ ասէ, բազումք ՚ի մարդկանէ մե-
ծամեծ տանջանօք խորատին աստ և
դարձեալ կրելոց են զպատիժս, որպ̄ս
զսոդոմայեցիսն գտանեմք։ Իսկ այլք
զի մատուցին ա̄յ զվաստակս բազումս·

ոմն Սրբ. Աբրահամ Իսահակ. Մել-
քիսեդեկ. Յակոբ. Յովսէփ, և այլք
ոմանք, որք բարեկենդանութե՟ վայե-
լեցին աստ. և անդ կայ և՛նմայ նոցա
արքայութի՟ն երկնից։ Ոչ դարձեալ ո-
մանք կրեն զչարչարանս և ոչ տեսեն
զչտայցն գոհութե՟, այլ հայհոյեն. նո-
քա աստ մարմնով տանջին, և անդ
՚ի յաւիտենական տանջանսն պատժե-
լոց են։ Ոչ այլք վայելեսցեն զկեանս
զայս ոպ՟ մեծատունն և անդ զտան
ջանսն։ Ոչ այլք կատարեսցեն զժա-
մանակս մաշկովք և մորթովք այծե-
նեօք հրաժարելով յա՟մ վայելմա-
նէ Տէրս այս. որք մեծապէս արժա-
նաւորին պարգևացն այն քան զբա-
զումս։ Ոչ այլք մեղանչեն ինչ մաս-
նաւոր այլ, և աստեն առցեն զխրատ
բուռ չափու յանցանայն և գոհութե-
մատուցանելով ազատեսցին ՚ի յաւի-
տենական տանջանացն։ Ոչ ոմանք
աստ և անդ ընկալցին զտանջանս.
քանզի զվերայ եկեալ վտանգն գո-

հութե ոչ ընկալան։ Իսկ այլ տես֊
ցին եղոհայան և անդ վայելեսցեն։
Են այլք աստ ոչ կրեցին վիշտս, և
ոչ անդ կրեսցեն։ Են ոմանք աստ և
անդ տանջին։ Են դարձեալ ոմանք
աստ վայելեսցեն, և անդ կամին վայ
ելել։ Քանզի բազում անարժանից և
մեղաւորաց մեծութի շնորհէ ած զի
նոքա ՚ի ձեռն ողորմութե ՚ի բաց
լուանային ՚ի մեղաց և յանցանաց իւ֊
րեանց․ քանզի ողորմութի մաքրէ ըզ
մեղս ասէ ոմն իմաստուն։

(Հորյո-նի)

Զի՞նչ ասեմք մեք այնոցիկ որք յան
կարծակի մեռանին․ կամ դահավէժ
լինին․ կամ այլ մահուամբ որ յայս
նման լինի։

(Պատասխանի)

Ամենայն այդպիսի մահ, անյայտ է
՚ի մարդկանէ և ծածուկ բաց ՚ի միոյն
այ․ այլև չէ պարտ երկուանալ։ Լուր
տն զի՞նչ ասէ․ աշտարակն ՚ի սելո֊
վամ անկաւ․ զի՞նչ արդեօք․ մի թէ



մեղա

մեղաւո՛րք էին նոքա քան զամ որք
բնակեալ էին յեղէմ, ո՛չ։ արդ յայսմա
նէ ուսջիք, զի ոչ եթէ որ դառնա
գոյն մահուամբ մեռանին՝ ամքն ամ
բարիշտք են, քանզի որդիքն Յոբայ
արդարք էին. և Զաքարիա և Յովհան
նէս և այլք բազումք, այլ չէ պարտ
զայս զմտաւ ածել, քանզի այսմ ժա
մանակի յորժամ երկիւղածք եւբա_
րեպաշտք դառնամահ մեռանին՝ յան
ցանս ինչ գործեալ իցեն, եւ աղատին
յայնմանէ չարաչար մեռանելոյն, զի
անդ մեծամեծ պատուոյ արժանասցին։

(Հոբյուշն)

Եթէ ոք խնդրէ ողորմութի՛ւն՝ եւ տայցէ
ոք, եւ ոմանք մերձ լինին, զի՛ ոչ
պարտ է առնել. քանզի այնպիսույն
չէ հնար ՚ի ծածուկ առնել զողորմութի՛ւն։

(Պապաքինէ)

Զմիտս մարդկան քննէ ած. զի թէ
՚ի միտս իւր յօժարի ՚ի ծածուկ առ_
նել, թէպէտ եւ ՚ի բիւրուց առաջի առ_
նէ, ոչ դատապարտի. ապա թէ յօժա
րի,

րի, զի տեսցեն մարդիկ՝ թէ և՛ ի խորս
շտեմարանաց արարացն, չէ օգուտ։

(Յորդյունն)

Ուսոյց ածայինն Առաքեալն թէ, ոչ նեղելով եւոչ՛ի հարկէ, այլ զզուարթ տուրս սիրէ Ած․ ապա ոչ է պարտ առնել ողորմութիւն յորժամ սիրտն բռնադատի յողորմելուն։

(Պղատոնի)

Կատարեալ իսկ այն է, որ հանապազ առնէ ողորմութիւն առատապէս․ իսկ որ բռնադատեսցի ՚ի պատուիրանս այ, ընդունելի է առաջի այ․ ոպ եւ ինքն ասէր․ բռունք յափշտակեն զարքայութիւնն այ։

(Յորդյունն)

Եթէ ոք վս մեղաց իւրոց ապաշխարեսցէ, յայտ է թէ ջնջէ զմեղս իւր․ ապա ուրեմն թէ ոք առնէ ողորմութիւն եւ ապաշխարիցէ՝ եւ ապաշաւս բերէ զծախուած իւրայն․ ապաշաւանելոյն այն կորոյս զինչսն եւ զվարձսն։

(Պետրոս Ոսկեխօսն)

Բայց լիցի. այլ զոր օրինակ, ապա-
շաւելն իւր մեղաց, ա՛ծ լինի առիթ
ապաշխարութե. նոյնպէս և իւր ապա-
շաւանաց ողորմութե, սոյն լինի գոր-
ծոյդ այդպիսի առիթ. վս այդորիկ ոչ
լուծանին եղեալ վարձքն. այլ սա-
կայն չէ բաւուց յապաշաւ բերել
զգործս բարիս. քանզի որ սակս ա-
պաշաւէ, դանդաղագոյն գտանիցի
առնել զբարիս։

(Հ[illegible])

Ոչ է պարտ որպէս կարծեմ առաւել
հարցաքննութե առնել ողորմութեն.
այլ հարցանել և իմանալ ստուգապէս
եթէ կարօտեալ ոք իցէ, որոյ առնես
զողորմութի. քանզի Սաղամոն ասէ.
յորժամ առնես ողորմութի, տես թէ
ում արասցես զայն։

(Պետրոս Ոսկեխօսն է)

Այդպէս իմանայք զգիրս և չարա-
չար ածէք զմտաւ և դարձուցանէք
զբանն ՚ի միտս անձանց. զի ոչ եթէ



վս

մի աղքատի ասաց զայս Սողոմոն, այլ այսպէս ասէ. տե՛ս՝ թէ ո՛ւմ արտացես զողորմութի՛ւն. քանզի տեառն ամենակալի արասցես. քանզի ինքն ասաց, ինձ արարէք. եղբարն ասէ թէ, որ ողորմի աղքատին, փոխ տայ Աստուծոյ ըզտուրսն զայն: Իսկ եթէ ընտրել հրամայեալ էր զխնդրօղն՝ ապա ընդէ՞ր ասաց, թէ որ խնդրէ 'ի քէն՝ տուր. իսկ եթէ այսպէս է ասացեալ, ապա ամենայն հասարակաց խնդրողաց պարտ է տալ եւ ոչ քննել:

(Հարցումն)

Որ ելեղջեցեալ մատուցանեն այն է ընդունելի, թէ այն որ կարօտելոց բաշխէ:

(Պատասխանի)

Յասելն Յիսուս ընդ այնոսիկ որք ընդաջմէն են, ուսանիմք՝ թէ քաղցեալ եւ ետուք ինձ ուտել. այսու երեւի զի պատճառականագոյն է տալ աղքատին. զի ասաց թէ, ինձ արարիք. քանզի ըստ պատկերի իւրոյ արարեալ ըզմարդն.

մարդն. նմոյա պարտ է առնել ողոր
մուճ, զի նոքա խակ են տաճար ան-
մահ բանին այ. խակ յաղագս եկեղե
ցւոյ ուսաք 'ի պոռնկէն. զի յոր ինչ
եփոփագի ոք գործել վս այ, ընդու-
նելի է առաջի նր. զի թէ միւսն զեղ
բայր նր սիրեաց եւեթ. եզմիւսն ըղ-
տուն եղբարցն նորոգէ, բարւոք է և
այն. այլ սակայն եթէ զերկու կողմն
ոչ կարէ կատարել, լաւագոյն է յաղ
քատն տալ:

([illegible])

Եթէ անհաւատ ոք վստահացեալ
լինիցի ինչս առ հաւատացեալ, նմա
տացէ զայն, ուրեմն դատապարտեսցի յայ

(Պ[illegible])

Ասաց տրն թէ, տուք զկայսերն կայ
սեր. քաջայայտ է զի կայսրն այն հե
թանոս էր. ուսցուք աստանօր զի չէ
պարտ առնուլ յայնմանէ. իսկ եթէ
մեռանիցի այն որ վստահացաւն,
պարտ է զայն աղքատաց
ծախել:



Հր

## Կարօղ է ողորմութիւն ջնջել զմեղս։

(Պատասխանի)

Եթէ առնես զողորմութիւն զոր պա՛րտ է կարի կարօղ է․ ապա եթէ ոխակալութիւն ունիցի ոք ընդ ընկերին և ոչ թողու զպարտս նորին եթէ բիւր ողորմութիւն արասցէ, ոչ օգտի։ ըստ բանին տն․ եթէ ոչ թողուցուք զպարտս ընկերին ասէ տր, և ոչ հայրն երկնաւոր թողցէ զյանցանս ձեր ։ բայց ա՛յլ է որ կայ 'ի մեղս և առնէ ողորմութիւն, և ա՛յլ է այն որ այլք վստահանան տալ ինչս աղքատաց․ այլ վարձք են երկրագործին որ 'ի քրտանց իւրեանց առնեն ողորմութիւն, և ա՛յլ է որ յայլոց աշխատանաց․ ա՛յլ է որ 'ի սակաւէն, և ա՛յլ որ յաւելորդացն․ և ոչ եթէ այսու միայն է որոշումն, վն զի որք մարմնով յ͞ղիս են, ոչ կարեն վն յանցանաց իւրեանց այլ ինչ մատուցանել այլ։ պահք, կամ աղօթք, կամ տքնութիւն, զայնպիսւոյն սրբէ ըզ

մեզ ողորմութիւն. իսկ ՚ի կրօնաւորայն
այլ ինչ պահանջեսցի. զի պարտ է նց
մեծամեծ քաղաքաւարութիս ցուցա_
նել, և ապա զողորմութիս. սակայն ո_
ղորմութի որ զ՞Նաբուգոդոնոսոր զայն
պխսի ամբարիշտն կարաց արդարա
ցուցանել, կարօղ է նա և զայլ զան
բժշկել մեզ ջնջել. ոմ լուաք ՚ի
մարգարէէն Դանիէլէ յասելն ցնա.
զմեղս քո ողորմութբ ջնջեսցես. և զա_
նօրէնութիս քո որոք տնանկայ: և
դարձեալ ասէ գիրն ողորմութբ ջըն
ջեսցես զանօրէնութիս քո և նուաղե_
ցուցանես զմեղս մեծամեծս: և դար
ձեալ ասէ. փրկանս մեղաց առատու
թին առն: և Դաւիթ ասէ. երանի որ
խորհի զաղքատն և զտնանկն յաւուր
չարի փրկէ զնա տր. Խ, յաւուր դա
տաստանին: Իսկ որ ոխ ունի ընդ ըն
կերին, ոչ ինչ օգտի յողորմութէն:
Իսկ որ ողորմութի ոչ առնէ և անոխա
կալ է եղբարին բարի առնէ մեծապս
օգտի. իսկ որ զայս ՚իմոի եղեալ է

գործել վասն արքայութեան՝ նաեւ զաղ-
քատս ոչ անտես առնէ։

(Հարցումն.)

Համարձակեցան ոմանք երանել ըզ կատարեալսն, վասն զի զնշանս բազումս գործեցին։

(Պատասխանի)

Ո՛չ է պարտ զվճիռդ զայդ տալ ու-մեք. այլ սակայն լսեցուք 'ի Փրկչէն որ ասէ. յայսմ ծանիցեն ամենեքին, եթէ իմ աշակերտք էք, ոչ զի զնշանս առ-նիցէք, այլ սիրեսջիք զմիմեանս. եւ քաջայայտ է՝ զի ճանաչումն սիրոյն ողորմութիւն է. քանզի յորժամ կացցեն արդարքն ընդ աջմէ քո, ոչ ասէ թէ եկայք օրհնեալք հօր իմոյ ժառանգեցէք պատրաստեալ ձեզ զարքայ-ութիւն, զի բազում նշանս եւ արհեստս արարէք, այլ թէ քաղցեայ եւ ետուք ինձ ուտել: այնպէս եւ այնոցիկ որ յա-հեկէն իցեն՝ անիծեալք ասէ եւ 'ի գե-հենն առաքէ վասն անողորմութեան եւ անգթութեան իւրեանց. քանզի նշանս

առնելն միայն. այ է շնորհք և կարո
ղութն. իսկ սէր ընկերին և ախտակցու
թն 'ի բարուց բնութէ մարդոյն է.
լո՛ւր երանելոյն Պօղոսի որ ասէ վս
այնոցիկ որք նշանս առնեն. եթէ զլե
զուս մարդկան և զհրեշտակաց խօսի
ցիմ, և մատնիցեմ զմարմինս իմ յայ
րումն, և զամ հաւատս մինչև զլերինս
փոփոխելոյ, և զսէր ոչ ունիցիմ, ոչ ինչ
օգտիմ. և տրն ասէ. եղերուք՝ մի՛ նշա
նագործք, այլ գթածք. ոպ և հայրն
ձեր երկնաւոր գթած է։

(Հոբյու-Ձս)

Քանի՞ բաժին յընչից մարդոյն պա
հանջի առնել ողորմութն։

(Պոպոսխանի)

Ասաց ածային առաքեալն թէ, ձեր
առաւելութն եղիցի 'ի նց պակասութն.
վս զի ոչ հայի Ած 'ի տուրս մարդոյն
եթէ աւելորդն ձեր եղիցի 'ի պակա
սութն նց. զի 'ի ձեռն ընչից մերոց կա
րօղ եմք զբազումն ապրեցուցանել
'ի մահուանէ՝ և ոչ ապրեցուցանեմք,
այլ անտես առնեմք։

(Հարցումն)

Զի՞նչ համարեսցի այն զոր թողումք յետ մահու 'ի ձեռն այլոց տալ 'ի պէտս մեր։

(Պատասխանի)

Մեռելոյն պատրաստ է․ սակայն թէ 'ի կենդանութեան իւրում արարեալ է ողորմութիւն՝ այնպիսւոյն ընդունելի է և այն, զոր յետ մահուն 'ի ձեռս այլոց կարօտելոց բաշխի․ զի նայնու առաւելապէս պայծառասցի։ Իսկ եթէ 'ի կենդանութեան սովորութիւն ոչ ունէր տալոյ, և զոր այլք առնեն ը̄ վայր է և անօգուտ, և սակայն ևկրծնի մտօք առնէ․ ոմ՞ և Պօղոս ասէ թէ, որ ճըշդիւ սերմանէ, ճշդիւ հնձէ։

(Հարցումն)

Եթէ ոք մեղօք ծերանայ և ոչ սպահել կարէ, և ոչ գետնախշտիկ լինել կամ տքնել, կամ՝ այլ ինչ աշխատութիւն կրել, և ոչ ունիցի ինչ զի առնիցէ ողորմութիւն, և ոչ կարասցէ հրաժարել 'ի կենցաղոյս յայսմանէ, ո՞պ կարասցէ այնպիսին ապրել։

(Պատասխանի)

Զոր օրինակ ապրեցաւ մաքսաւորն. Եւ որպէս Դաւիթ ասէ. խոնարհ եղէ և Տէր կեցոյց զիս. Եւ որպէս պատարագ անարիւն՝ մատուցին Աստուծոյ և ողորմութիւն. այնպէս համարեսցի եւ այն որ խոնարհ է սրտիւ եւ հեղու զարտասուս. զի պատարագ Աստուծոյ հոգի խոնարհ է, զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ, ոչ արհամարհէ Աստուած։ Եւ դարձեալ ասէ. մերձ է Տէր առ այնոսիկ որ մաշեալ են սրտիւք, և այլն. Եւ որպէս երանին ողորմածքն, նոյնպէս եւ որ սուրբ են սրտիւք. նախ քան զայլ երանութիւնս երանին, որ խոնարհ են սրտիւք եւ աղքատք են հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից. փրկութեան ճանապարհ է այս գնացողացն. եւ զճանապարհս զայս կարող են գնալ աղքատք, եւ տնանկք. տկարք, եւ ծերք. ռամիկք, եւ տգէտք. եւ ուղղել զգործս իւրեանց խոնարհութեամբ։

(Հարցումն)

Զի՞նչ է խոնարհութիւն. կամ զի՞նչ պարտ է խոնարհիլ։

(Պատասխանի)

Խոնարհութիւն այն է, ոչ հայիլ 'ի յանցանս այլոց՝ այլ իւրն։ և ոչ դատել զոք, և ոչ բամբասել. այլ հանապազ զանձն իւր կացուցանել պարտական դատաստանին յաւիտենից. և հանապազ այսպէս կարդալ առ Ած. ապրեցո զիս տէր ըստ ողորմութեան քում, և ոչ 'ի ձեռն ողորմութեան իմոյ։ իսկ այն, որ զանձն իւր պարտական և մեղաւոր համարի, ոչ երբէք լինի անյիշատակ գործոց իւրոց. և ոչ պահէ ոխս ընկերի իւրում և ոչ բամբասէ կամ դատէ զընկերն իւր, որ մեղուցեալ ինչ իցէ, այլ թողութիւն մեղաց մատուցանէ եյերից բարուցս յայնցանէ առցէ ըզթողութիւն. ոչ դատել, և ոչ դատապարտել. լինիլ խոնարհ, և արդարանալ. թողուլ զյանցանս, և ինքն հայցէ թողութիւն. զերեք առաքինութիւնս զայս ոչ ծերութիւն խափանէ և ոչ տկարութիւն. ոչ աղքատութիւն և ոչ այլ ինչ անկարութիւն։

(Հարցումն)

Եթէ ոք բազում անգամ անկանի ՚ի յանցանս բազում եղարձէլ յապաշխարութեն գայ ևնկեանի ապաշխարել. և յապաշխարելն, դարձէլ յայլ ևս մեղս անկանի և ՚ի բազում յանցանս, եղարձեալ կրկին ապաշխարէ, ընդունի՞ ած զայնպիսին թէ ոչ:

(Պատասխանի)

ՈՉ որ փխտէ զդիւրափոփոխ բնութն մարդկան; եթէ բիւրապատիկ իսկ մեղանչէ և դարձեալ բիւրապատիկ ապաշխարէ, ոչ ընկենու յերեսաց իւրոց ՚ի բաց. զի այն որ պատուէր ետ եօթանասնեկին եօթն թողուլ եղբօրն. նա ինքն բիւր անգամ թողու մարդկան որք ապաշխարեսցեն. զի այլ է բնութն այ, և այլ բնութն մարդոյ. բայց մեզ պարտ է ստուգապէս զայն իմանալ զի ՚ի սովորութն յայն և ՚ի մեղանչելն և անդէն յապաշխարելն արհամարհէ ած. նաև սովորութե ստէպ ստէպ ՚ի մեղս դառնայ և

 դժուա

դժուարաւ կայցէ 'ի մեղայն այնպէս սին 'ի բնաւ· այլ որպէս շուն իսպանդանոց սովորի, և ոչ 'ի բնաւ կասցէ 'ի սովորութէն' մինչև սատակի· Նոյնպէս և մարդ որ 'ի մեղսն է սովորել։ դարձեալ կատարումն կենաց մերոց ծածկեալ է 'ի մէջ, և ոչ է յայտ մեզ որ ելից մերոց· գուցէ գայցէ իբրև զգող՝ և 'ի մէջ մեղաց գտանիցէ զմեզ անապաշխարս, և մատնէ տանջանացն յաւիտենից։

(Հարցումն)

Քանի՞ դէմք են շնուէք մեղացն։

(Պատասխանի)

Երկու դէմք· քանզի առնակին և այր կանամբի որ երթայ յօտար· և դարձեալ եթէ առնակին և կամ այր կանամբք բաժանի յառ'ջնոյն, և առցէ այլ՝ շնայ· և որ զթողեալն առնու՝ շնայ· և աններելի են յանցանքդ այդ առ ած։

(Հարցումն)

Ասեն ոմանք, թէ դիւրաւ քաւին



յան

յանցանք պոռնկին տուածել քան զայլ յանցանս։ քանզի բնական է և բռնադատէ զբնութիւն, եղախտս շործէ

(Պոտոսխանէ)

Ըղաքեալն քան զամ մեղս զոա համարի ծանր․ ասէ, զամ մեղս զորս գործէ մարդ՝ արտաքոյ մարմնոյն գործէ․ իսկ որ շնայ՝ ՚ի մարմին իւր մեղանչէ․ քանզի ՚ի մարմնոյ անտի շնութիւն, քաղցրութիւն, հեշտութիւն․ զայս ամ սերմանս չարեաց որպս զոհ ինչ մատուցանէ սատնյի պոռնիկն զսերմունս իւր ՚ի գործոյ իւրոց․ ըստ ժամու ժամու որպ թէ պարտական իցէ՝ այնպէս կատարէ եանկանի ՚ի մոլորութի․ կէսն ՚ի տածարէ իւրմէ, և այլն ՚ի սատանայէ․ և այս ՚ի բնութէն ոչ լինի․ քանզի բնութե է շարժումն այլև ուտելն և ըմպելն․ իսկ զմեղանչելն ՚ի կամացն է։ զի թէ կամի մեղանչէ, և եթէ ոչ կամի, ոչ մեղանչէ։ ահաւասիկ ամծ այսու զաղամ իբրև զանյաւոր դատապարտեաց․ զի եթէ ոչ էր կամեցեալ, ոչ էր յանցեալ։

(Հարցումն)

Ո՞րանի՞ մեղք յանցանաց են պոռ-
նկութէ։

(Պատասխանի)

Բազում են և ազգի ազգի· իսկ մե-
ծագոյն այն է, որ կին ունի և շնայ,
քան զայն որ ոչ ունի։ Եւ մեծ յան-
ցանք առաւե՛լ ևս այն է, որ կին բա
րի ունի և շնայ, քան զայն՝ որ չար։
Եւ այն՝ որ ՚ի ծերութէ շնայ, քան զայն
որ ՚ի մանկութէ· և այն՝ որ ոչ պակաս
է ՚ի շնութէ, քան զայն՝ որ ՚ի ժամանա
կէ ժամանակ· Եւ մեծագոյն յանցանք
այն է, որ ոչ է ջերմագոյն ախտի՛,
այլ ցուրտ· և ջան դնէ, զի ՚ի ձեռն
դեղոց ջերմացուցանէ զախտսն և ՚ի
հեշտութիս մարմաջեցուցանէ· Եւ այլ
բազում ինչ ասել վս պոռնկութէ,
զի ազգի ազգի են, և ունիցին դատա
պարտութի յոյ· այլ մեղք է, որ Ը մի
կին շնայ, Եւ այլ չարագոյն, որ ընդ
բազումս ընթանայ, և զբազում ան-
ձինս կորուսանէ· այլ մեղք է որ խըտ

 րէ

րէ և երկխուղիւ մեղանչէ քան զայն
որ լրբութբ̅ ևյանդգնման 'ի մեղս մտա
նել զանձինս իւրեանց. այլ է որ կին
ունի և յառնակին մեղանչէ, և այլ է
որ ոչ ունի կին և ը̅ առնակին շնայ:
քանզի սաստիկ յանցանք է զկին օ
րինաւոր ամաչեցուցանել. են և այլ
պէսպէս չարիք մեղաց որ 'ի մէջ ե
կեղեցւոյ մեղս գործեն և որ ը̅ կինս
բարեկամաց շնան և պարտական լի
ցին յուդայական սիրոյն. այլ պարտ է
զգուշանալ և ոչ անկանել 'ի չարիքս
յայս. զի արդար ակն ա̃յ ը̅ անձառ
դա̃ստանին իւրոյ, դատեսցէ զմ̃մն.
ևզդատաստանս նր̅ անաչառ և անբիծ
ո՞ պատմեսցէ:

(Հորդուն)

Բազումք յարդարոցն երկու և երիս
կին ստացան 'ի մխասին, մեզ ընդէ՞ր
ոչ հրամայեք. այլև ոչ հարճս որպէս
զԱբրահամ և զայլ Հարս. և Մարգա
րէքն ունէին և ոչ
նախատեին:

Ո՛չ թէ քո՟ զայն միայն խափանեաց երկու կին ստանալ. այլև 'ի միոյ կնո ջէ 'ի բաց կալ հրամայեաց. ամէն ա_ սեմ ձեզ որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս, չէ ինձ արժանի. ապա թէ զայդ խնդրես, լո՛ւր զմե_ ծագոյնսն. լուարո՛ւք՝ զի ասացաւ մի՛ շնար. բայց ես ասեմ ձեզ, թէ ա՟մ որ հայի 'ի կին մարդ առ 'ի ցանկա_ նալոյ նմա, անդէն շնացաւ ը՟ նմա 'ի սրտի իւրում. իսկ եթէ քո՟ զցան կունի աչայն շնունի համարի, զիա՛րդ ապա մեք որ 'ի քո՟ հաստատեալքս զքաղաքավարութի պահանջեմք զա_ ռաջնոյն . զի թէ խնդրեք մի առն երկու կին ստանալ, ապա և միոյ կնոջ պարտ է երկու այր ստանալ ։ լո՛ւր զի՞նչ ասէ յաղագս առն և կնոջ, եղի ցին երկոքեանն 'ի մարմին մի . և ոչ ասաց երեքեան կամ չորեքեան ։ իսկ առն առաջին՝ կին, մի միայն տուաւ. ենա զայր իւր եղտիեզերս ա՟մ դա_



ճաձա

Հաճանեալ կործանեաց. ապա եթէ երկու կին իսկ հրամայէլ էր, զի՞նչ էր հանդերձեալ լինել նոցա. իսկ եթէ կամիս գիտել եթէ ընդէ՞ր առաջինքն կանայս բազումս առնուին, ուսի՛ր զըստոյգն. զի բազում էր բըռնութեն սըղոյնի. եշատ ուտելովն եւ ըմպելովն բազմանայր ախտքն. իսկ քս զերկոսեանն խափանէց, եւ զբազումս ՚ի դիւաց ՚ի միջոյ ՚ի բաց հերքեալ հալածեաց. զոմանս յանդունդս, եւ զայլս յանապատ տեղիս կործանէց:

(Հարցումն)

Բազում հրէայք եւ հեթանոսք բարի գործս գործեն, մտանե՞ն յարքայութն այնոքիկ. եւ կամ ընդունի՞ն պարգեւս ինչ. եւ կամ ո՞վ պարտ է վասն նոցա իմանալ:

(Պատասխանի)

Տէրն ասաց ցՅիսկոդիմոս. ամէն ասեմ քեզ. եթէ ոք ոչ ծնցի ՚ի ջրոյ եւ ՚ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութն այ. եւ որք ՚ի քս հաւատացեալք



են,

են, քաջայայտ է իմանալ, զի առանց մկրտութե ոչ մտանիցէ ոք ՚ի նմա. իսկ դու եթէ հարցանես զայս, իսկ պարտ է իմանալ, զի բարի գործքն այնպիսեացն ոչ կորնչի, բայց ՚ի կենս յայս առցեն զհատուցումն եւ ընկալցեն զվարձս. բայց ՚ի կեանսն այն ընդ տանջանսն ընկալցեն մս անհաւատութե իւրեանց. այլ թեթեւագոյն մս բարի գործոց իւրեանց զոր արարին, քան զայլ անհաւատսն, որք ոչ են բարիս գործեալ: Իսկ եթէ մծային առաքեալն ասէ. փառք՝ պատիւ՝ եւ խաղաղութի ամե, որ գործէ զբարգա_րութի. նախ հրէի, եւապա հեթանոսի. մի՛ սքանչանար՝ զի մս այնոցիկ ասաց, որ յառաջ էին քան զգալուստն Քի:

(Հարցումն)

Ուրեմն արդեօք ունի՞ վախճան տանջանք մեղաւորացն թէ ոչ:

(Պատասխանի)

Տեառն ասացեալ մս գեհենին թէ, որդն նց ոչ ննջէ եւ ոչ մեռանի. եւ



հուր

հուր նոցա ոչ շիջանի։ Եւ դարձեալ ասէ
թէ երթիցեն նոքա ՚ի տանջանսն յա-
ւիտենականս։ Եւ Պօղոս ասէ. մի՛ խաբիք
ո՛չ շունք, ոչ գողք, ոչ պոռնիկք, ոչ
արուագէտք, ոչ իգացեալք, ոչ ար-
բեցողք, ոչ բամբասողք, ոչ յափշտա-
կողք զարքայութիւն Աստուծոյ ժառանգել
կարասցեն։ Քանզի յայտ է՝ զի յաւիտե-
նական է արդարոց վայելումն. նոյն
պէս և տանջանքն մեղաւորաց։ Տէրն
ասաց վասն յուդայի, լաւ էր նմա՝ թէ
ոչ էր եղեալ։ Իսկ եթէ տանջանացն
վախճան գոյր՝ ապա լաւ էր յուդայի
թէ յետ սակաւ ամուրց ելանելոց էր
՚ի տանջանաց և յարքայութիւն մտանէր,
քան զոչ ևս լինելն։ Բազումք ՚ի հեր-
ձուածողացն ասացին զբանդ զայդ,
այլ ոչ է այդպէս։ Զի արդար դատաս
տանն Աստուծոյ զարդարութիւն մարդոյ և զ
յանցանս համասարէ իրերաց, զի ՚ի
միասին և արժանաւորին հանգստեան։
այլ ո՛չ է հնար ելանել ՚ի դժոխոց,
կամ յարքայութենէն։

(Հարցումն)

Ուստի՞ իցէ այս՝ զի տեսանեմք զար-դարս զի աճուրս երկայնագոյնս ոգե-վարին․ և մեղաւորքն խաղաղագոյն և փութով աւանդեն զհոգիսն և մե-ռանին այնպէս ։

(Պատասխանի)

Զա՟մ իրաւունս ա՟յ՝ անհնար է իմա-նալ։ բայց վ՟ս այդմիկ իմանալ և ըղ-մտաւ ածել, զի որք երկիւղածք վ՟ն այնորիկ 'ի վախճանին տանջին կամ 'ի ժամ մահուն, զի մեք տեսանելով երկիցուք և զգաստասցուք և իմաս-ցուք, զի թերևս մարդիկք ս՟բք իցեն և փոքր ինչ յանցանս ունին, և յան-ցանք նց՟ 'ի փոքր տանջանացս սրբես-ցի, և նոքա անբիծ երթիցեն աստի ։

(Հարցումն)

Ուստի՞ իցէ՝ զի ոմանք յօժար կա-մօք 'ի յախտ պոռնկութեան մատ-նին, և այլք 'ի հեշտութենէդ յայդ-մանէ 'ի բաց հատա-նին ։

(Պտփտախտնի)

Ի մարմնոյ ցանկութէ մարդոյն լինի
այդ ա̃մ, կամ 'ի ջերմութէ ախտի
մարմնոյն, կամ յառաւելայ̃ փափա-
գանացն, կամ 'ի գինւոյ և 'ի հեշտ
հանգստութէ մարմնոյն, թերևս 'ի ներ
գործութէն սննդյի: իսկ այլոց ուղղոց
յորժամ լինիցի այդ կամ 'ի բարձ-
րամտութէ լինի, և կամ զընկերին դա
տելոյ. զի յորժամ հպարտանայ ոք
'ի վ̃ր ուղղութէն խորոյ և բարձրա
միտ լինիցի, այնպիսւոյն թոյլ տայ
ա̃ծ անկանիլ. ո̃պ զի 'ի ձեռն սրու-
նկութէն 'իբաց դիցէ զհպարտութին,
և հասանիցէ փրկութէ. զի յերկուց
ընտրելոց չարեացս՝ թեթևագոյն է
բնական ցանկութին՝ քան զամբար
տաւանութէ յանցանս: և որք ախտից
յայսպիսեաց հովանացեալ են՝ յո̃յ
հովանաւորեալ էին, կամ 'ի ձեռն
բազում ճգնութէց զանձինս իւրեանց
բռնադատեն, և ոչ դատապրտեն զոք:
իսկ եթէ ոմանք ամբարտաւանք են,

եւ յախտէ եւ այլ յանցանաց մ̃ք են, պարտ է իմանալ զի այնպիսիքն 'ի սոյնյէ արհամարհին. քանզի բաւա_ կան է ախտ ամբարտաւանութ̃ե քան զայլ ախտս ա̃մ առաւելապէս պա_ տակ'ն առնել զըստացիչն իւր յաւի տենական տանջանայն, եւ աղարտել զայլ ինչ գործս ուղղութ̃ե, զոր գո ծեալ իցէն։

(Հարցումն)

Իսկ զայս առաւել խնդրեմք իմա_ նալ քան զա̃մ իրս, թէ կա՞յ օր մա_ հու եւ ժամ թէ ոչ. եւ եթէ ժամ ոչ կայ մահու, զի՞արդ ասէ Դաւիթ մի ընկենուր զիս 'ի ժամանակս ծերու_ թե̃ն։ եւ եթէ սահմա՞ն ոչ գոյ եւ ոչ ժա_ մանակ կենաց, զի՞արդ դարձել ասէ ահա չափով եդեր զաւուրս իմ։ եւ թէ օ՞ր կայ մահու եւ սահման կենաց, զի՞ արդ դարձեալ ասէ Սողոմոն. մի՛ լինիր խիստ եւամբարիշտ զի մի՛ մե_ ռանիցիս յաւուր, որ ոչ է ժամանակ մահու։

Ո՛չ եթէ ՚ի վճար կենացն գայ ՚ի վ͞ր մանկն. քանզի Եզեկիայ և Նինուէկա_ցիքն հայցեցին կեանս և յաւելաւ ն͞ց։ և կամ սոդոմյեցիքն և գոմո͞րցիքն հաւասար ա͞մյւն ն͞ց պարտ էր ՚ի մի աւուր մեռանիլ։ և եթէ հրամայեալ էր ՚ի միում աւուր մեռանիլ, ապա չէին չարագործք, և ոչ առին խրատ վ՟ն յանցանաց իւրեանց. ապա թէ խրատ ընկալան ըստ գործոց իւր͞էնց պա՛րտ է իմանալ զի մահն ժամ ոչ ունի. զի Պօղոս որ է աղբիւր իմաս_տու͞է և մեծ ընդունող ա͞մ գիտու͞է գրէ առ կորնթացիսն թէ, որ ուտէ և ըմպէ անարժանու͞բ ՚ի մարմնոյ և յարենէն ք͞ն, ՚ի դատաստան անձին իւրոյ ուտէ և ըմպէ. վ͞ս այդորիկ իսկ են ՚ի ձեզ բազում հիւանդք և ախտաժէտք. և շատ ևս այնք են՝ որ ննջեցեալքն իսկ են։ և արդ՝ մտադիք և ստուգապէս իմացիք. զի ՚ի ձեռն անարժան հաղորդելոյ որ է մեծագոյն



յան

յանցանք․ մեռանելին՝ այլ ոչ օրինա_
ւոր ժամանակ եւ ոչ սահման կենաց․
եւ դարձեալ առ Եղիայ զԹեսբացի
ասէ ա̃ծ․ մեղար դու եւերկու բարե
կամք քո․ եւ եթէ ոչ էր վն̃ Յոբայ
ծառային իմոյ սատակեալ էի զձեզ։
արդ՝ թէ վն̃ Յոբայ առաքինութե̃
զոր ունէր առ տ̃ր ա̃ծ, ոչ մեռան․
յայտ է թէ, չէր հասեալ ժամանակ
իւրեանց եւ ոչ մեռան․ եւեթէ սատա_
կեալ էր, ոչ զի ժամանակ էր մեռա_
նելոյ։ Իսկ եթէ հաստատած սահ
մանած է կեանք մարդոյ, զիարդ որ
հանդերձէլ էին մեռանել անօրէնու
թե̃՝ ընթանան առաջի արանց սբ̃ց եւ
աղաչէին զի դարձցին 'ի կեանս եւ ա_
պաշխարեսցեն․ Նաեւ ոչ ոք աղաչէր
զա̃ծ վն̃ որդւոց իւրեանց լինել եր
կայն աւուրք, եւ բազում հասանեն
խնդրոց իւրեանց։ Իսկ եթէ սահման
էրէ մահու, զիարդ ապա ասէ գիր․
պատուեա զհայր քո եւզմայր, զի եր
կայն աւուրբք լինիցիս ։ Իսկ սահ
ման

ման կենաց մարդոյն կամքն է ա՟յ, ում կամի երկայնագոյն ժամանակ տայ. և ում կամի 'ի բաց բառնայ ը՟ խուրաքանչիւր օգտի. զոր օրինակ ա՟ր հօտից յորժամ կամի առաքեսցէ յանդ և բերէ ոչխարս: այնպէս ա-րասցէ ա՟ծ և յաղագս մարդկան՝ յոր ժամ կամիցի և յայնժամ առաքէ և գայցէ 'ի վ՟ր մահ խուրաքանչիւր. սահ

ման կենաց կամքն է ա՟յ:

(Յորդուն.)

Բազումք 'ի վեր քան զբանս և զմիտս ինչս անհնարին իրս ածեն զմտաւ. զի ասեն յաղագս ապականելոյ մար մնոյն՝ եթէ 'ի յարու՟է զիա՞րդ հնար էցէ առնել. որոյ յոլովակի նաւակո-ծեալ եղ՟ն կերակուր ձկանց. և զայլս առեւծ եկեր և որ.ք կերակուր լիցին գազանաց, նոքին իսկ գազանքն սա-

տակեալ ապականեցան:

(Պոտոսխոնէ)

Խոստովանեսցի իսկ անմիտն այն որ զայդ ածէ զմտաւ, զի ամենազօր է ա՟ծ.

ած. եասէ գէր, զ՚ինչ գոյացոյց
զա՛մ եւ՚ի հողոյ արար ած զմարդն.
եւ հողն փոշի է, որ հոսի առաջի հող-
մոյ. եւայն որ ՚ի փոշոյ այնպի ոսկերս
եանդամս ստեղծ, կարող է եւ զմար
մին ապականեալ եզոսկերս մանրել
եւփոշի եղեալ անդրէն վերստին ըս
տեղծանել, որ է հեշտագոյն. ասա
դու ցիս՝ որ ՚ինչ գոյէ անօթս գործէ
եթէ զանօթս բեկեալ եւ մանրեալ
անդրէն նորոգէ. յայտ է զի եղեալն
վերստին Թէպէտ եւ՚ի բազում կող
մանս ցրուեալ լինիցի յարմարի դիւ-
րաւ: Եւ արդ՝ պարտ է յօրինակէս
յայսմանէ հաւան առնել զանհաւա-
անս: քանզի հուրն շիջանի, եւ տապն
եարեգակն վերանայ յօդս եանտես
աչաց մարդկան. եդարձել՝ յորժամ
լուսանայ անդէն, գայ ջերմութի.
յայտ է՝ զի արեգականէ անտի գայ
ցէ. այդպէս իմա՛ զապականել մար
մին մարդկան: զի ամբողջ կացուցա
նէ զմարմինս մարդկան, գազանաց,

Հկանց, և Թուչնոց. որովք բաժանի մարդն ըստ չորս տարերցդ ևլուծանի, և՚ի բաց գնայ. ուստի հաստատեցա՟ն ըստ նմանութ՟ե եօրինակի արեգական: որպ՟ս ՚ի ջրոյ հիւթն իջէ. և ցուրտն յօդոյ. տապն ՚ի հրոյ. և հուրն ՚ի տապոյ. և ՚ի ժամանակի յարութ՟ե հրամանաւ՟ն այ՟, աներևոյթ տայէ իւրաքանչիւրոք, զոր առ՟եալ է ՚ի մարդոյ, և խառնի հոգին ՚ի մարմինն իւր և յառնէ մարդն. և թէ զիարդ, ինքն միայն գիտէ որ ստեղծ զնա, սփռ՟եալ յերկիր ապականացու բնութ՟ե և յառնէ անապական. ուստի և զսամարացիսն աստանօր կշտամբեսցուք. զի նոյն մարմին որ մեռանի, նա ինքն յառնէ. զոր օրինակ հատ ցորենոյ ծածկի ՚ի ներքոյ երկրի, այնպէս և մարմին մարդոյ, և զայս ակամայ խոստովանեսցի մարդ. զբուսանիլն ծածկեալ սերմանցն այնպիսի յուսով և ծածկեալ թաղեալ մարմինք: Իսկ եթէ մեռելոց յարութ՟ե ոչ գոյ, ոչ և

 հերձ

հերձուածողքն ասեն. ապա ա̃ծ ան-
լրան գտանի, զի զարդարս և կ̃ըս
աստ տառապանօք ելթող 'ի չարչա-
րանս նեղու̃է. և մեղաւորաց համբա-
րշտաց եւ զծնունդս բազումն կեպազ
մապարգևս. այլ մի 'իզուր մոլորես-
ցին որդիք սամարացւոց. վ̃ս զի ստու-
գապէս գ̃ղ յարութի̃. զի որք աստ
տառապանօք չարչարին, բարեպաշ-
տու̃ք անդ պսակին. և որք աստ ամ-
բարշտու̃ք 'ի բարեկենդանու̃ես վայ-
ելեն, անդ յաւիտենական հրոյն
դատապարտին։

(Հորբյունհ)

Ո՞ւր երթիցեն հոգիք տղայոց ան-
հաւատացելոց 'ի ք̃ս. 'ի տանջա՞նս
թէ յարքայութի̃։ Նոյնպէս և որդիք
հաւատացելոց 'ի ք̃ս որ առանց մը-
կրտու̃է են, և որդիք անհաւատից
ընդ հաւատացելոց մանկունս դա-
սի՞ն և թէ ընդ հարս իւրեանց։

(Պոփոսխոնէ)

Զայս իսկ ստուգապէս գիտասցաք,

 զի

զի վայելեսցեն տղայք զարքայութին
երկնից. յաւելոյն Տն զի ասաց Թո՛ղ
տուք մանկտւոյդ գալ առ իս, զի այդ
պիսեացդ է արքայութին երկնից. և
դարձեալ՝ թէ ոչ դարձջիք և լինի
ջիք իբրև զմանուկ՝ ոչ մտանէք յար
քայութին երկնից։ Նա՛ յորժամ տղայք
հաւատացելոց մռ լիցին, յայտ է զի
անբիծք և անարատք գնասցին աստի
և մտանեն յարքայութի։ Իսկ տղայք
հաւատացելոց, որք ոչ են մկրտեալ,
և տղայք անհաւատից, ոչ ՚ի տանջանս
մտանեն, և ոչ յարքայութին վայելեն.
քանզի ոչ չար գործեցին, և ոչ բարի։

(Հարցումն)

Ամենայն հերձուածողք, ՚ի կորուստ երթիցե՞ն թէ ոչ։

(Պատասխանի)

Պէսպէս և զանազան իցեն հերձուա
ծողք. որո՛ց այլ և այլ են յանցանքն.
ա՛յլ կորուստ իցեն մանիքեցւոյն, և
ա՛յլ մոնդանացւոյն, և ա՛յլ է որ զմար
մինն տա՛յ հերձուածիցեն. կէսքն ա-
սեն

սեն թէ, մարմին ապականացու զգե ցաւ քս․ եւ այլք ասեն թէ, մարմինն ոչէ ած, ոչ եթէ այս միայն լցէ՝ զի մի հերձուածս՝ բազում զանազանու թիւք լցեն․ զի այլ մեղք լցեն եպիս կոպոսին հերձուածող լինիլ․ եւ այլ․ որ 'ի ժողովրդեննէն․ այլ է որ կարող է ուսուցանել զժողովուրդն, եւ այլ է որ ոչ կարէ․ եւ այլ նոքա՝ որ նզովեն զճշմարտութիւն եւ հակառակին մեզ․ այլ է որ գիտութե սխալէ, եւ այլ է որ տգիտութե ։

(Հարցումն)

Զի՞նչ արդեօք համբերեցին այնք՝ որ յերազի երբեւ զմեռեալ մեռանէյին, եւ տեսիլս տեսանէյեն, եւ զկնի երկու աւուր կամ երից յառնեն եւ զտեսիլն ամենայն պատմեն ։

(Պատասխանի)

Այնպիսիքն՝ ոչ եթէ կատարեալ մահ ուամբ մեռանին, այլ երբեւ 'ի հիւաց ման լինիցին ։ իսկ այն որ զտեսիլն 'ի միտ առնու եւ ամենայն պատմեսցէ, որ

հաճիլք առնելով ած ցուցանէ մեզ։

(Հորբյուճի)

Զիա՞րդ ած հոգի առանց մոլորե-
լոյ ճանաչէ զմարմինն իւր 'ի յարու
թե՞ և յօտար մարմին ոչ մտանէ։

(Պոփոսխոնի)

Բնական հետևողութե՞ պարտ է իմա
նալ յաղագս այդմ իրաց. զոր օրինակ
գառինք երկու օրեայք, կամ երեք
օրեայք բաժանեցին 'ի մարց իւրե՞նց
և վազիճն արձակելով բնական իրօք
իւրաքանչիւր զմայր իւր գտանէ։

(Հորբյուճի)

Եթէ ոք բարի գործս գործիցէ, և
գչարս 'ի միասին հաճասար, և նոյն
գործովն չարե՞ն և բարե՞ն մեռա-
նի, զի՞նչ պարտ է իմանալ զայնմսին

(Պոփոսխոնի)

Զայդ միայն ա՛յ է գիտելի. զի եոչ
հրեշտակք են այդմ իրաց հասու,
թող թէ մարդիկ։ բայց շնորհելովն
ա՛յ զայս ասեմք. զի թէ լինիցի 'ի
մարդն ծանկեալ չարիք, որ ապակա



նէ

նէ զմ̃մ գործս բարութ̃ և լիցէ գործ
բարի ծածկեալ որ ապականէ զմ̃մ
գործս չարեաց զմեծամեծս. այլ որ
հա՛մա̃ր է գործել զբարին և զչարն
և ապա մեռանի, յաւուր դատաստա
նին լինիցի կանգնեալ յանդիման
հրոյ գեհեննին, և ահաբեկ լինիցի ըզ
գուշասցի թէ, գուցէ գայցէ 'ի վե̃
ր̃ բոց հրոյն, և յահէն հալի և մաշի,
և ճողոպրել ոչ կարէ, և հուրն զնա
ոչ ուտէ բայց հանապազ յահէ գե-
հեննին 'ի տանջանս կայ ահիւն այնմիկ

(Հարցումն)

Յո՞ր ամիս ստեղծ մ̃ծ զադամ, և
կամ զիա՞րդ:

(Պատասխանի)

Նիսան և հինգ մարտի ամսոյ յաւ-
ուր վեցերորդի, որ է ուրբաթ.

(Հարցումն)

Ո՞ նախ յառաջ ասաց զանուն ա̃յ:

(Պատասխանի)

Օձն՝ բերանով սատանայի ասաց
ընդ եւայի:



Հար

(Հարցումն)

Զի՞նչ է եօթն վրէժն՝ որ խնդրեւր 'ի կայենէ։

(Պատասխանի)

Զի զա̃ծ՝ չար գործովք իւրովք բարկացոյց. զի զհեզուն սպանանեցոյց. զի զմայրն անորդի արար. զի եղբայրասպան եղև. զի զերեսս երկրի պղծեաց. զի արիւն եհեղ ապականութն յայտնեաց. զի զդժոխս նորոգեաց։

(Հարցումն)

Յո՞րժամ մեռաւ չորրորդ մայրն Եւս։

(Պատասխանի)

Յորժամ կայէն սպան զեղբայրն իւր աբէլ։

(Հարցումն)

Ո՞ է որ ոչ ծնաւ 'ի մօրէ եւմեռաւ։

(Պատասխանի)

Ադամ, որ 'ի հողոյ ստեղծաւ։

(Հարցումն)

Ո՞վ են մարդիկքն այնք, զոր ասէ մարգարէն. երկինք պատմեն զփառս աստուծոյ։

(Պատասխանի)

Թէպէտ եղատաքեալսն ասեն․ այլ սոքա են Սէթ․ Ենովս․ Ենովք․ Սմ Աբրահամ․ Իսահակ․ Յակոբ։

(Հարցումն)

Քանի՞ մասն հերձուած ծովն՝ յորժամ անցին որդիքն Իէլի յելանելն յեգիպտոսէ։

(Պատասխանի)

Երկոտասան մասն․ զի իւրաքանչիւր ազգ՝ ճանապարհաւ իւրով ճանապարհորդեր։

(Հարցումն)

Զի՞նչ է սիոն․ կամ յորմէ՞ կոչեցաւ։

(Պատասխանի)

Ուստի ստեղծաւ ադամ, այն կոչեցաւ սիոն։

(Հարցումն)

Ուստի՞ առաւ հողն՝ յորմէ ստեղծաւ ադամ։

(Պատասխանի)

Յերկրէն մադիամու ուր բնակեցաւ ադամ յորժամ ելաւ 'ի դրախտէն

մադիամ ՚ի մէջ երկնի և երկրի. ո՞վ
ասէ սաղմոսն. ա͞ծ թագաւոր մեր յա
ռաջ քան զյաւիտեանս, որ արարեր
զփրկութի ՚ի մէջ երկրի, և անդ խա
չեցաւ ք͞ս :

(Հարցումն)

Բանի՞ գործս արար ա͞ծ ձեռօք
իւրովք :

(Պատասխանի)

Երեք գործս. զադամ. զդրախտն. և
զգրեալ տախտակսն :

(Հարցումն)

Ո՞վ մահ ոչ ճաշակեաց և ինքն փա
խեաւ ՚ի մահուանէ :

(Պատասխանի)

Հեղիաս ոչ մեռաւ, և փախեաւ յե
զաբելէ :

(Հարցումն)

Ո՞ր արուեստ յառաջ ածաւ յ͞ս :

(Պատասխանի)

Կարկատելն. զ͞ի, զոր ադամ և եւա
կարկատեցին և
սփածան :

(Հարցումն)

Ո՞ զերկինս ոչ ետես, և յերկիր ոչ կոխեաց, և աչօք ոչ ետես, և ո՛չ եր կերեւպատ. ոչ ո՛պ յերկինս՝ և ոչ երե_ եալ ՚ի վ՛ր երկրի։

(Պատասխանի)

Կարապետն յովհաննէս։

(Հարցումն)

Ո՞ր յանցանք անընդունելի արասցէ զաղօթս մարդոյն առաջի այ։

(Պատասխանի)

Ոխակալութն. ըստ բանի տն որ ասէ. եթէ մատուցանիցես զպատարագն քո ՚ի վ՛ր սեղանոյն, և անդ յիշեսցես, ե_ թէ եղբայր քո ունիցի ինչ խէթ ընդ քեն, թո՛ղ զպատարագն ՚ի վ՛ր սեղա նոյն, և երթ նախ հաշտեաց ընդ ըն կերի քում. զի ոխակալութին անըն դունելի արասցէ զպատարագն, յայտ է թէ ևզաղօթսն։

(Հարցումն)

Ո՞ր յանցանք ոչ զօրէ զղջացուցա_ նել զանձ։

(Պատասխանէ)

Անյուսութիւն որով ըմբռնեցաւ յուդայ և խեղդեցաւ վաղվաղակի։

(Հարցումն)

Ո՞ր յանցանք ծանր է ք̃ զա̃մ մեղս։

(Պատասխանէ)

Ո՜պ սէր ընկերին վերագոյն է քան զա̃մ առաքինութիւն. որպ և Պօղոս ասէ. այնպէս և եղբայրատեցութիւն վերագոյն յանցանք են՝ ք̃ զա̃մ յանցանս. սոյն պէս անողորմութիւն և անգթութիւն։

(Հարցումն)

Զո՞ր օրինակ պատուիրան գործէ մարդ, որով քաւին ա̃մ յանցանք իւր։

(Պատասխանէ)

Ասաց տ̃րն. մի՛ դատէք, և ոչ դատիցիք. ևեթէ թողուք, թողցի ձեզ. և որով չափէք, չափեսցի ձեզ։

(Հարցումն)

Եթէ ոք արասցէ յանցա՞նս մեծագոյնս և ապաշխարեսցէ, զիա՞րդ կարասցէ իմանալ թէ թողաւ նմա թէ ոչ։

(Պատասխանի)

Ակամայ լինիցի ՚ի մարդկանէ երգ- այդ· այլ սակայն ո՟չ ծառայ և տ՟ր, այնպէս և այն· զոր օրինակ ծառայն յորժամ մեղանչէ, և ՚ի կերպս բանիցն ծանիցէ զկամս տ՟ն իւրոյ, զի ոչ հայի ընդ նմա աչօք բարի, և ոչ կամօքն այնպէս, որ՟պ յառաջագոյն էր նախ քան զմեղանչելն· և ՚ի բաց թողու ըզ համարձակուին, զոր ունէր առ տ՟րն իւր· իսկ յորժամ հաշտի ընդ նմա ՚ի խօսիցն իմանայ, այնպէս և ապաշխա- րօղն որ ըստ արժանեացն լինիցի, զի դարձեալ շնորհեսցէ ա՟ծ նմա զա- ռաջին շնորհն, զոր ունէր յառաջ ք՟ զմեղանչելն· և աստանօր իմասցի մարդն, եթէ եթող նմա ա՟ծ զյան- ցանսն զոր յանցեաւ։

(Հարց․ ―ձ)

Եթէ ոք արասցէ զմեղս մեծագոյնս և ապաշխարէ յանձն իւր, և սկսանի ա- պաշխարել· և ապա յետ երից աւուրց մեռանի, զայնպիսին զի՞նչ պարտ է իմանալ։

(Պատասխանի)

Եթէ սկսեալ է յապաշխարութիւն եւ ցածուցեալ է զանձն իւր 'ի չար խորհըրդոց, եւ դադարեալ է 'ի սրտի առաջի Այ, որ ոչ երբէք անցանէ զդարձն, եւ ոչ դառնայ յանցանս առաջինս, զոր գործեալ իցէ, եւ ոչ յայլ մեղս ինչ անկանիցի. եթէ վաղւճն սկսանի ապաշխարել եւ երեկոյին մեռանիցի, ընդունելի է առ Ած ապաշխարութիւն նր ոպ զաւազակին: քանզի սկսանելն յապաշխարութիւն 'ի մարդոյն՝ իսկ իցէ, եւ յաջողելն Այ. քանզի բազումք սկսանին յապաշխարութիւն, եւ վաղվաղակի յափշտակէ զնս Ած: ոպ բարերար Նախախնամութեամբն իւրով, զի մի՛ գուցէ յերկարանայ ապաշխարութիւն եւ դարձել 'ի մեղս անկանիցի եւ 'ի նմին կորնչիցին:

(Հարցումն)

Ուստի՞ իցէ, զի երբեմն բարի լինի բնութիւն մարդոյն, եւ երբեմն խիստ առ 'ի յողորմութիւն:

(Պատասխանի)

Այդ բնութե̄ ա̄յ միայն է լինիլ, զի անփոփոխելի մնայէ միշտ․ քանզի գիտեմք՝ զի եւոչ հրեշտակք մնացին անփոփոխ բնութե̄․ զի ո՛չ կեանքն մեր յեղյեղուած ունի 'ի վ̄ր երկրի, նոյնպէս եւ բնութիւնք մեր։ իսկ յորժամ բնութն մարդոյն բարի լինի, այն իսկ իցէ, զի ըստ պատկերի ա̄յ իցէ։ իսկ այն որ երբեմն խոտանայ, ո՛չ թէ 'ի թշնամեաց պատերազմելոյն․ բայց է թէ մարդ զանձն իւր յողորմութն եւ 'ի բարի առնելն սովորեցուցանէ, զանձն ա̄մի հասանէ։

(Հարցումն)

Եթէ ոք ոչ ունի ինչ առնել ողորմութն եւ փափագի առնել, զի՞նչ լինիցի, կամ համարեսցի այնպիսին։

(Պատասխանի)

Ա̄ծ զբարի ցանկութն՝ առաւել ընդունի քան զչար ցանկութն․ եւ արդ՝ թէ որ զցանկանալն կնոջ շնութն համարեցաւ, եւասաց թէ, շնացաւ 'ի



սրտի

սրտի խորում ցանկացողն . ապա որ
չափ ևս առաւել որ զծարին ցանկայ
և կատարէ, գործք բարի համարեսցի
զնա ած . զի որ ոչ ունի ինչ՝ և տեսա
նէ զաղքատն ծարաւեալ և քաղցեալ,
մերկացեալ, ցրտացեալ, և ոչ կարէ զի
ինչ յայսցանէ լինել, և փափագի իբր
թէ կատարեալ զայն . այնպէս համա
րեսցի նմա ած և պսակեսցէ։ ապա և
թէ կարող է լինել զայն ամ և ցան
կայ լինել և ոչ լինի, դատապարտի
չարաչար։

(Ճ. բյուն)

Եթէ ոք ոչ ունիցի, զի լինեցու զամ
կարօտութն աղքատաց . և զոր ունի կա
րողութն լինել՝ և զայն ոչ լինի, զինչ
համարեսցի այնպիսին։

(Պ[illegible])

Աստ այսօրինակ ած՝ մինչև ցքաժակ մի
ջուր ցուրտ ընդունեսցան զողորմնն .
զի թէ ոք ոչ է ստացեալ ինչս, սա
կայն կարող է ջուր արբուցանել ծա
րաւելոց . ապա եթէ կարող է կերակ

րել եւ արբուցանել եւ կերակրելն ան-
տես ա՞րդեօք եծանր համարի, եջուրն
որ թեթև է, զայն միայն արբուցանէ
ոչ է ընդունելի. զոր օրինակ եթէ ոք
յերկու անդամսն վէրս ունիցի, և կա-
րօղէ բժիշկն զերկուսն բժշկել. և
նա զմինն բժշկէ, և զմիւսն անտես
առնէ, ոչ է ախորժելի այնպիսին.
նոյնպէս՝ թէ կարողութ՟ ունիցի զգե-
ցուցանել եւ անտես առնէ եւ կերակրէ
միայն և արբուցանէ. և այդպէս որ
ինչ ՚ի կարգին է համարեսցիս։

(Հարցումն)

Իսկ՝ եթէ եջուր ոչ ունի արբուցա-
նելոյ, զի՞նչ լինիցի։

(Պատասխանի)

Որպէս ասացի՝ այնպէս կատարեալ է
վարձք նր. այլ անհնարին է լինել
կարողութ՟, ողորմութ՟ ոչ առնել, կամ
այլ գործք բարի ողորմութ՟ այ հան-
դիպիլ։ քանզի և բանիւք առնել ո-
ղորմութ՟, վերագոյն է քան զտուրս.
այլև իցեն գործք բարի, որ պահան-



ջեն

ջեն 'ի չքաւորէն և 'ի մեծատանէն և յանապատականէն և 'ի շինաւորէն. Եւ որ լսէ այն, զի է որ զոխս ընկերին արմատաքի խլէ 'ի սրտէն. զայս ոչ աղքատութիւն կարէ խափանել, և ոչ տկարութիւն մարդոյ. արդ՝ եթէ ոք առաջնորդէ մոլորելոյն և զպէտս գործոյ իւրոյ անտես արասցէ, նմա առաջնորդեսցէ, այս առաւելապէս ողորմութիւն է, և ոչ ինչ պակաս քան ըղտուրս ընչից:

(Հարցումն)

Ո՞ ցանկայ և յօժարի ակնափագի կատարել, և ոչ պատրաստի առ 'ի լնուլ զցանկութիւն իւր, զի՞նչ համարեսցի այնպիսին. կամ որ ցանկայ և կարող է կատարել, իսկ և ոչ կատարէ:

(Պատասխանի)

Պէսպէս են ցանկութիւնքս այս և ազգի ազգի բնութիւն գործոյդ այդ, և օրինակօք հաւանեցուցից զքեզ: է ցանկութիւն, որ հանապազ լուցանի ցանկուն՝ եթէ ոչ կտրէ և խափանէ զցանկութիւն,



այն

այնպիսին համարեսցի իբրև զայն՝ որ առնու զսուր իւր և երթիցէ 'ի դուռն թշնամւոյն, և պատրաստէ ըզ գործ սպանութեան. զի թէ ելանէ յարկ է իւրն սպանանէ զնա. և եթէ ոչ ելանէ, ոչ սպանանէ. այնպիսին՝ ոչ դատապարտի մարդասպանութեան դա-տաստանաւ: Իսկ այն՝ որ կայ և մնայ հանապազ 'ի ցանկութեան, և հասանէ 'ի վերայ մահու իւրև անողորմ. յանողոր-մութեան մեռանի, և դատապարտի. և ամ-բարտաւանն՝ յամբարտաւանութեան. և շնացողն՝ 'ի շնութեան. և յոխակալն՝ յոխա-կալութեան, այնպէս դատապարտի ցան-կացողն չարեաց, որ 'ի ցանկութեան մե-ռանի. և այլ են ցանկութիւնք որպէս ասա-ցի. զի Աստուած զբարի ցանկութիւն լաւ ըն-դունի քան զչարն. զի թէ բազումք ցանկան մտանել յարքայութիւն, և ոչ կատարեն զգործս արքայութեան. այլ շնան, գողանան, սուտ վկայեն, և ոչ առնեն գործ ողորմութեան. այլ ցանկա-նալովն միայն, ոչ հասանեն տենչա-նացն.

նայն։ Որպէս եւ որ ցանկայ կատա-
րել զգործ մեղաց, եւ ոչ արասցէ ըզ
գործ ցանկութե. այլ արասցէ ողոր
մուն, անոխակուն, պահք, աղօթք,
եւայլ առաքինուն, սակայն ցանկու-
թեն այն ոչ դատապարտի։ Իսկ այն
որ ցանկայ մեղաց եւ կարօղ է կատա-
րել եւ ոչ կատարէ վս ահի գեհեննին,
այնպիսին պակսի քան թէ դատապար-
տեսցի. ով այն որ կարօղ է առնել
ողորմուն եւ ցանկայ առնել եւ ոչ առ-
նէ, դատապարտի զի յաղթեցաւ 'ի
մարմնէն. այնպէս եւ որ կարօղ է կա-
տարել զչնուն եւ ոչ առնէ եւ կարօղ է
առնել եւ ոչ կատարէ՝ պսակեսցի։ Զի
այն՝ որ կարօղ է առնել զողորմուն եւ
ոչ արար՝ դատապարտի, զի յաղթե-
ցաւ 'ի մարմնէն. այնպէս եւ որ կարօղ
էր կատարել զչնուն եւ ոչ կատարեաց
պսակեսցի, զի յաղթեաց մարմնին։

(Ժողովուն)

Որ թողու զած եւ հեռանայ վս ցան-
կութե, եւ որք մնան 'ի քաղաքս եկայղ

 թեն

թեն ցանկութեան, հաւասա՞ր են երկուքեան, եթէ առաւելապէս պտուղ ունիցին որոշեալքն, քան զընակեալն 'ի քաղաքի։

(Պատասխանի)

Իսկ այն՝ որ բնակի այլ ուրեք եւ թողու զքաղաքս, եւ բնակի 'ի տեղի ուրեք, ուր ոչ տեսանիցէ զդէղ կանանց եւ ցանկայ, ո՛չ կոչի նա առաքինի, զի բորբոքի նա հեշտութեամբն եւ ոչ գտանէ տեղի զի կատարէ զցանկութիւն։ Ըստ որում գողն՝ որ ոչ գտանիցէ ինչ, զի գողասցի · եւ սպանողն՝ զի սպանանիցէ · այնպէս որ ցանկայ յանապատին՝ եւ ոչ գտանէ տեղի կատարել զցանկութիւն։ Եւ դարձեալ՝ զի ոչ տեսանէ զդէղ կանանց՝ ոչ ցանկայ · այլ ոչ է անընդունելի որոշեալն նորա 'ի քաղաքէն, բայց առաքինի ոչ համարեսցի · այլ միայն զգաստ եւ ողջախոհ · զի ոչ ճակատեցաւ ընդ մարտնչողն, այլ փախեաւ։ այնպէս փախուցեալ լինիցի 'ի դժնդամարտէն, միայն ապրեցաւ 'ի տանջանաց,



Եւ ոչ

եւս պսակեցաւ 'ի նահատակարանն.
այսպէս եւ որ միայն փախեաւ 'ի դժխմա
մարտէն. զո̃ր, 'ի ցանկութենէն միայն 'ի
տանջանաց ապրեցաւ: իսկ այն՝ որ 'ի
քաղաքի բնակեսցի, եւ տեսանիցէ ըզ
գեղ կանանց եւ ոչ կամ̃րէ զցանկութն,
դիմամարտեսցէ ընդ պատերազմօղն,
եւ յաղթեաց մարտին, եւ պսակեսցի 'ի
նահատակարանն: Այլ պարտ է ոչ
ցանկալ ամենեւին. քանզի ցանկայ եւ
առնու արմատ զցանկութն. զորօրինակ
ագռաւ կլանէ զպտուղ թզենոյն, եւ
երթեալ արձակէ արտաքոյ որովայ
նի իւրոյ, եւ անկեալ հատ թզենւոյն
'ի վր̃ ապառաժի վիմի. եգտեալ անդ
հիւթ ինչ հողոյ բուսանի. եւ սուղ
ինչ սակաւ սակաւ առցէ արմատ, եւ
արձակեսցէ ոստս, հաստատի տերեւօք
եւ պտղաբերեսցէ: Նոյնպս եւ ցանկութն՝
զի բնութն մարդոյ 'ի հիւթոյ եւ 'ի ցա
մաքոյ հաստատեալ է, որչափ եւ ա
պառաժացեալ ցուցեալ իցէ ոք մար
մին 'ի հիւթի ախտից. այլ սակայն


ոպ̃

որպէս 'ի մարմնոյ եկայարէնէ գտանիցէ անդ սուղ ինչ արմատ և հաստատէ զոստս եղպտուղ չարութ̃է։

(Հոբյուն)

Չի՞նչ ապաշխարութ̃ի փութապէս մաքրէ և սրբէ զա̃մ յանցանս։

(Պղատոնէ)

Լուաք յաւետարանին՝ որ ասէ ցմեզ. բարի արարէք ատելեաց ձերոց, օրհնեցէք զանիծիչս ձեր. եղերուք նմանողք հօրն ձերոյ, որ յերկինս է։ և արդ՝ եթէ ոք գործեսցէ զառաքինութ̃իդ զայդ, և սրբէ և 'ի բաց հատանէ 'ի սրտէն զա̃մ արմատ ոխակալութ̃է ընկերին. այնպէս՝ մինչ զի յորժամ չար լինիցի նմա, վշտանայ. և յորժամ բարի լինիցի նմա, ուրախանայ. այնպիսին՝ թէ բնաւ չարիք գործեալ իցէ, շնութ̃ի, գողութ̃ի, ագահութ̃ի. եթէ ոչ է պահեալ, եթէ ոչ է աղօթեալ, այլ ընդ բազում մեղօք շաղախեալ իցէ, զայն ա̃մ 'ի նմին ժամու յական թօթափել ջնջէ, և ոչ

 թէ

թէ յանցանացն միայն մաքրի․ այլև ըստ կարի մարդկան՝ նման լինի ա̃յ։

(Հորացիոս)

Զի՞նչ գործ չարեաց, որ աղարտէ և ապականէ զա̃մ գործս բարեաց։

(Պոպլիոնէ)

Ո՞չ յառաջին ասացաք թէ, որ ոչ սիրէ զեղբայրն, ծանրագոյն մեղք է․ և որ սիրէ, վերագոյն առաքինութի, սոյնպէս և որ ոխապահ է ընկերի իւրում, և չար հատուցանէ, եթէ ոչ է չնացեալ և գողացեալ․ այլ թէ և պահս է պահեալ և աղօթեալ․ և թէ զա̃մ առաքինութիս է կատարեալ, այդու աղարտէ զա̃մ եդատապարտի․ զի որպէս անոխակալութին զա̃մ յանցանս աղարտէ և ապականէ, այնպէս և ոխակալութին զա̃մ առաքինութիս ապականէ։

(Հորացիոս)

Ամենայն գողութի միապէ՛ս է․ և որ գողանայ՝ հաւասար դատի։

(Պոպլիոնէ)

Ո՛չ․ այլ պէսպէս իցէ․ քանզի այլ է



որ

որ քաղցեալ եւ կարօտեալ իցէ՝ եւ գո-
ղանայցէ; եւ միայն զկարօտութիւն լնու,
այլ է որ ջանս բազումս դիցէ՝ ի մի՛
գողութե, եւ ամբարեցուցանիցէ զինչս իւր.
այնպիսին առաւել տանջանս կրէ
քան զայնոսիկ, որ վասն լնելոյ զկարօ
տութիւն գողանան:

(Խորհուրդ)

Ըսայեր թէ՝ որ չարին չար հատու-
ցանէ, դատապարտի. իսկ որ բարոյն
չար հատուցանէ, զի՞նչ լինիցի:

(Պատասխանի)

Կարի սաստիկ եւ չարագոյն է. զի զոր
օրինակ այն՝ որ աղքատին ոչ տայ,
այլ առնու եւ, չարչար տանջի քան
զայն՝ որ թէպէտ ոչ տայ՝ եւ ոչ յա-
փշտակեսցէ. այնպէս եւ այն առաւե-
լապէս տանջեսցի, որ բարւոյն չար
հատուցանէ քան զայնոսիկ՝ որ չարին
չար հատուցանեն առ ընկերս:

(Խորհուրդ)

Իսկ այն՝ որ ոչ չար արարեալ է ու-
մեք եւ ոչ բարի, եւ նմա ոք չար արաս
ցէ, զի՞նչ լինիցի այնպիսոյն:

(Պատասխանի)

Չարագոյն գտանի քան զայնոսիկ՝ որ բարւոյն չար հատուցանեն և թեթևագոյն քան զայն՝ որ չարին չար հատուցանէ։

(Հարցումն)

Եթէ լինիցի՛ն ասէ տանջանք չարագոյն մին քան զմիւսն և թեթևագոյն։

(Պատասխանի)

Այո՛ յոյժ. զի զորօրինակ ասէ Քս՜, ՚ի տան Հօր իմոյ օթևանք բազում են. ոչ հաւասար արդարք զարքայութիւն վայելեն, և ոչ մեղաւորք զգե-հենն, զոյ հանդիստ պէսպէս. այլ է որ վայելէ զարքայութիւն, և այլ է որ հանդիստ միայն գտանէ. այլ է որ մեծապէս վայելէ, և այլ է որ նուաստագոյն. այլ է որ պայծառանայ լուսով պայծառապէս, և այլ է որ վայելէ վատթարագոյն։ Սոյնպէս, այլ է որ տանջի ՚ի հուր գեհենին, և այլ որ ՚ի ցածագոյն տանջանս. այլ է այն որ սրով հարկանեն, և այլ է այն որ



բրով.

բրով. մ՚յլ է այն որ կախեն հանդէպ եհարկանեն, և մ՚յլ է որ առանց կախելոյ հարկանեն. վ̃ս որոյ պարտ է իմանալ, զի են տանջանք՝ որ թեթևադոյն են, և են տանջանք՝ որ խստագոյն են տանջանք՝ կարի չարաչար։

(Հարցումն)

Որք աստ տանջին և աղքատանան և քաղցնուն և տառապին, օգտի՞ն ինչ և ազատի՞ն 'ի տանջանացն յայնմիկ։

(Պատասխանի)

Այսպէս ուսաք 'ի զօրուէ սբց գրոց ոմ̃ք յառաջն ասացաք. զի լինիցին ոմանք արդարադործք, լինիցին գործել աչար ինչ. մ̃ծ այնպիսւոյն՝ տացէ աղքատութի, հալածանս, մահ վըշտաց, կորուստ ընչից, և այլ պէսպէս պատուհաս վշտաց, որ կարօղ է սրբր մեղուցանել զմարմինս մեր. զի այնու յանցանքն այն քաւեսցին, և անդ զմէծադոյն հանդիստն վայելեսցեն։ են ոմանք, զի ոչ տեսեն վշտաց ևնե ղուէս և հայհոյեն և կորուսանեն ըզ



վարձս

վարձս խուրեանց. և են ոմանք 'ի մեղս անզղջանալի և բազում տրտմութեց տանջանս արկանէ 'ի վր̃ նց̃· որպ̃ և 'ի վր̃ սոդոմայեցւոցն և գոմորայեցւոցն և անդ դարձեալ տանջեսցին, բայց թէթևագոյն· որպ̃ և տ̃րն ասաց· զի եթէ 'ի տիւրոս և 'ի սիդոն եղեալ էին զօրութիւնքն որ 'ի ձեզ եղեն, վաղու ևս արդեօք խորգով և մոխրով նստեալ էր ապաշխարեալ· բայց ասեմ ձեզ՝ դիւրագոյն լիցի երկրին տիւրոսի և սիդոնի յաւուրն դտ̃նի, քան ձեզ։ արդ՝ քաջայայտ է· զի նոքա աստ տանջեցան և անդ դարձեալ տանջեսցին, բայց թէթևագոյն։

(Հարցումն)

Զինչ յափշտակեալ, կամ հրձիգ եղեալ, կամ նահատակութիւնս կրեալ, կամ յանօրինաց աւար եղեալ, տերանցն վարձք են թէ ոչ։

(Պատասխանի)

Երանելին Պօղոս՝ զհամբերութիւն վշտացն մեծամեծ գովէ և ասէ· տըրտ

մութն զհամբերութն գործէ, եւ համ
բերութն զհանդէս. հանդէս զյոյս.
յոյս ոչ երբեք ամաչեցուցանէ. արդ՝
որ համբերէ 'ի վր̄ եկեալ վշտացն,
եթէ մահ իցէ, եթէ ընչից կորուստ
իցէ, եթէ անօրէնք յափշտակեցին,
եթէ հրայրեցուք իցէ, եթէ նաւա
կոծութ կրեն, եւ գոհութ̄ ընդունին,
առաւելպ̄ս ընդունելի է քան զայն՝
որ եղեալ իցէ 'ի ձեռս աղքատաց.
Իսկ եթէ ասես՝ եթէ զի՞արդ անցք
անցին ընդ Յոբ, եւ անտի յարմարիմ
համան առնել զքեզ. արդ՝ յորժամ
զանդղանս բարեաւ եղեալ էր, եւ հա
նապազ ոչ եւս պարապէր 'ի սպասա
ւորելոյ կարօտելոց, զի գային եւյա
պենային 'ի բարեաց նր̄, եւ այնպս կա
տարէր զկեանս իւր։ Բայց սմ̄ն ոչ
համարեցաւ զայն առաքինութիւն նմա,
այլ դէմ եղեալ այնու մարտնչէր ը̄
նմա. զի եթէ զայն ամ̄ բարձցէ 'ի
նմանէ, եւ ապա կարող լինիցի յաղ
թել նմա։ Իսկ իբրեւ յափշտակեցին

անօրէնքն զինչս նր̅, եւ հուր իջեալ
երկնից եկեր զխաշինս նր̅, եւ տունն
կործանեալ մահացոյց զորդիս նր̅, եւ
կրեաց բազում ցաւս հիւանդութե̅ եւ
գոհութե̅ համբերեաց, ապա եւ առա
ւելապէս յաղթեաց սատանայի․ եւ այդ իսկ
ոչ եթէ Յոբայ միայն եղեւ, այլ ամենայն
որ զայդ գործեն՝ երանեսցին եւ հա_
մարեսցի նմա արդարութի̅․ զի եթէ ոք
սովոր իցէ տալ աղքատաց, եւ ապա
զինչս իւր հուր այրեսցէ, կամ գետ
տանիցի, կամ անօրէնք յափշտակես
ցեն, կամ գողք ական հատանիցեն,
եւ նոքա գոհութե̅ համբերեսցեն, առա
ւելապէս համարեսցի նց̅, քան զե_
դեալն զայն ՚ի ձեռս աղքատաց։

(Հարցումն)

Իջանէ՞ հոգին սր̅բ ՚ի պատրաստ արա_
տաւոր քահանային, եթէ պիղծ հա
մարեսցի պատարագ նր̅։

(Պատասխանի)

Ա̅մ ժողովրդեանն որչափ եւ պիղծ է
քահանայն, հոգին սր̅բ ոչ արգելու

 զշնորհսն

զշնորհսն իւր, այլ իջանէ 'ի պատա_
րագն. զի եթէ 'ի ձեռն իշոյն և քա_
ղամայ այնպէս փրկութն եղև ճլի, ա_
պա որչափ ևս առաւել 'ի ձեռն ա_
րատաւոր քահանային. զի թէպէտ և
քահանայն' որ անարժան մատուցա_
նէ զպատարագն, հուրն ոչ շիջանի,
և որդն ոչ մեռանի, այլ պատարագն
ընդունելի է. քանզի անդ ուր մար
մին և արիւն տն պատարագի, անդ
ոչ է պղծութե օրինակ: զի թէ զորդի
թագաւորին բարձցէ ոք 'ի վր ձե_
ռաց իւրոյ եթովպացի, կամ գօղի,
կամ բորոտ, կամ աղտեղի ձեռօք,
գանեայցին այնպի թագաւորէն. այլ
փառքն և պատիւ որդւոյ թագաւո
րին ոչ պղծի, և ոչ եպեր ինչ ընկալ
ցի: և դարձեալ ինքն ճշմարիտն ած,
ոչ պարշէր 'ի մեղաւորաց, և ոչ զնս
պիղծ համարէր. այլ հանապազ ընդ
նս ուտէր և ըմպէր, և նք ընդ նմա
ուտէին և ըմպէին, եթէ ոչ հաւա_
տային ուտելովն և ըմպելովն ոչ սրբ
բէին,

թելին, այլև տանջելին չարաչար․ այն
պէս հարատեւոր քահանային՝ հոգին
սբ ոչ դարձի ՚ի պղծութիւն իւր, և ոչ նա
մատուցանելովն զպատարագն սրբի
հար լինի, այլ չարաչար տանջի․ և
եթէ մեղօքն զոր գործեալ իցէ՝ տան
ջեսցի միայն, այլ անարժանապէս մա
տուցանելովն, և առաւելապէս ան֊
ընթերցելի տանջեսցի։ Իսկ դու եթէ
լուար ՚ի Պօղոսէ, որ ասէ զհացս
զայս, կամ ըմպէ զբաժակս տն ան֊
արժանութբ, պարտական լիցի մարմ
նոյ և արեանն տն․ և որ պարտական
լիցի մարմնոյ և արեանն քի, քաջա֊
յայտ է՝ զի ընդ խաչեցօղսն տանջես
ցի, այլ Թէթևագոյն․ բայց որ անար
ժանութբ հաղորդի, պարտական լիցի
մարմնոյ և արեանն քի․ ով և հրէայքն․
ահա զի ով ասացի, այն որ անար֊
ժանութբ մատուցանէ զպատարագն,
առաւելապէս տանջեսցի աններելի
տանջանօք։ Արդ՝ եթէ որ յա֊
Թոռ Թագաւորի նստի չարագործ ոք,

մի թէ հնար է ուժեք անարգել զնա, եւ ոչ շնուհել զհրամանս նր․ եթէ թէ մեղաւոր ես, ոչ։ Բայց թէ լինի պա-տերազմող եւ իմաստուն եւ արիաբար, որչափ եւս առաւել զայն որ նըստի յաղթութն քն․ զի որչափ եւ մեղաւոր է, չէ պարտ արհամարհել։

(Հորյուն)

Եթէ զմի քահանայ պարտ է ընդ-ունել ո՞չ զմբն եւ խոստովանել։

(Կոփառխոնէ)

Յօրինակէ յայսմանէ հաւանեցուցես զքեզ զոր ինչ ասելոց եմ․ հովիւ, որ է ընդունելի տն ոչխարայն որ ծառ տար եղէ եւ առողջ, եւ ոչ գիտէ հատա նել զերակն, եւ ոչ արբուցանել դեղ հիւանդին եւ ոչ ողջացուցանել, թէ այն որ բորոտ եղէ եւ հիւանդ, եւ գի տէ հատանել զերակսն, եւ արբուցա նել դեղ հիւանդին եւ առողջացուցա նել զհիւանդն․ քաջայայտ է՝ թէ հի ւանդն է ընդունելի․ այսպէս զքահա նայն պարտ է ընտրել․ ոչ զայն որ



մբ է

սբ̃ է եւ անգէտ, այլ զայն՝ որ գիտուն է, թեպէտ և մեղաւոր է։ Իսկ եթէ սբ̃ լինի եւ գիտուն, պարտ է նմա խոստովանիլ․ ապա թէ ոչ, պարտ է գիտուն մեղաւորին խոստովանիլ, քան անգիտին սբ̃յն․ զոր օրինակ ընտիր բժիշկ պարտ է ընտրել․ զի թէ և բիւր վիրօք լցեալ է բժիշկն եւ տկարացեալ հիւանդութբ̃, և գիտեն զնա բազումք՝ զի հմուտ է յարհեստ բժշկութե, ամ̃ տկարք առ նա ընթանան եւ խնդրեն զդեղն․ թէպ̃ եւ՛ ի մահիճս մահու եդեալ կայցէ, եւ ոչ առ այնոսիկ, որ կարի առաւելապս̃ առողջք իցեն եւ ոչ են հմուտք յարհեստ բժշկութե․ այսպ̃ և առ քահանայն, զընտրուի պարտ է առնել։

(Հարցումն)

Ո՞Ր առ ած̃ այնպէս ընդունելի՞ է մեղաւոր քահանայն և գիտնական, քան որ սբ̃ է և անգէտ։

(Պատասխանի)

Այնպէս է՝ ոպ̃ յառաջն ասացաք․



զի

զի հոգւոյն այն է ընդունելի, որ գի-
տէ զհիւանդ ոչխարս առողջացուցա-
նել. թէպէտ և ինքն տկար և բորոտ
իցէ քան զայն՝ որ ոչ գիտէ առողջա-
ցուցանել, և ինքն առողջ և ճարտար
իցէ, այնպէս և առ ած համարեսջիր։
զի ասաց տէրն ցՊետրոս թէ, սիրես
զիս՝ արածեա զոչխարս իմ. արդ՝ որ
գիտէ արածել զոչխարս նր, կնա սի-
րեսցէ. եթէ քահանայն արդար է՝ և
գիտէ զբանս ածային սբ գրոց, գի-
տէ եպիսկոպոս ապաշխարութե ուղղել.
այնպիսին առաւել ընդունելի է ա-
ռաջի այ, քան զմեղաւորն և զգի-
տունն, և քան զսբն և անգէտն. ապա
թէ ոչ՝ զայն իսկ ընունի, որ գիտուն
է՝ թէպէտ և մեղաւոր է և գիտէ դար-
ձուցանել զմեղաւորն ’ի չար ճանապար-
հէն և ուսուցանել. և ըստ գրոց գիտէ
զկարգ ապաշխարութե դնել, որ կա-
րէ սրբել զմեղս։ և այնու որ զմեղա-
ւորն դարձուցանէ, քաւեսցին և յան-
ցանք իւր. ք զի աճեցոյց զքանքարն։
ևլոյն

ելուիցէ 'ի մ̃նէ. ազնիւ ծառայ բա-
րի և հաւատարիմ. որովհետև 'ի սա-
կաւուդ հաւատարիմ ես, 'ի վ̃ր բազ-
մաց կացուցից զքեզ. մուտ յուրա-
խութի տ̃ն քո: Իսկ այն որ արդար է
և գիտուն, և ոչ ուսուցանէ զժողո-
վուրդն և ծածկէ զգիտութի, այնպի-
սին եթէ մեռեալ յարուցանէ եղե-
րինս փոփոխէ և յապաղեալ լինի և
ոչ ուսուցանէ. այլ միայն անձին
իւրոյ. հոգ տայցէ և մ̃ք պահես-
ցէ զանձն իւր. և զպատկեր իւր ա-
նարատ պահեսցէ առ ա̃ծ և ասասցէ.
տ̃ր՝ գիտէի զի այր մի խիստ ես՝ հըն-
ձես, զոր ոչ սերմանեցեր. և ժողովես՝
զոր ոչ սփռեցեր. ա̃յ, եթէ դատես
զայնոսիկ ուր ոչ ես սերմանել յաւե-
տարանն քո. եդու անցեր, մի՛ շնար.
մի՛ գողանար. մի՛ սուտ վկայեր. պատ-
ուեա՛ զհայր քո և զմայր. և սիրեա՛
զընկեր քո՝ իբրև զանձն քո, և յայդ
իսկ միայն պարապեցի, զի զայդ իսկ
միայն կարացի կատարել, և զայլ ոչ



ոչ

ոչ կարացի ուսուցանել. թաքուցի ըզ
վարդապետութիւն իմ և զքահանայու-
թիւ. քանզի երկեայ թէ տանջեալ ես
ով զայնոսիկ՝ որք ոչ լուան զաւե-
տարանն քո. լուիցէ զայս 'ի տ̄ն̄է զի
ասէ. ծառայ չար և վատ, եթէ այդ-
պէս գիտէիր զիս՝ պարտ էր արկա-
նել քեզ զարծաթն իմ 'ի սեղանա-
ւորս. ապա թէ, երկնաւոր յինէն՝ և անձին
քում միայն զգուշացար՝ և զժողո-
վուրդն ոչ ուսուցեր, պարտ էր քեզ
զքահանայութիւն թողուլ յեկեղեցիս՝
զի այլքն էին առնել. և ես եկեալ տո-
կոսիւք պահանջէի զիմս. հանէք ըզ
ծառայդ անպիտան 'ի խաւարն ար-
տաքին. այդպէս իմասցիր վս̄ քահա-
նայի. զի որչափ ևս̄ք է եյամ̄ղէ յու-
սուցանելոյ զժողովուրդն ընդ պոռ-
նիկսն և ընդ չարագործսն, 'ի հուր
գեհեննին տանջեսցի. և որչափ մեղա-
ւոր է և ուսուցանէ զժողովուրդն և
դարձուցանէ 'ի մեղաց, ընդ նոցայն
և զմեղս իւր քաւեսցէ.

(Հարցումն)

Եթէ ոչ է պակասեալ քահանային յու-
սուցանելոյ, և ժողովուրդն ոչ լուեալ
և ոչ դարձեալ, զի՞նչ լինիցի նմա՝
դատապարտի՞ թէ ոչ:

(Պատասխանի)

Զոր օրինակ տայցէ ոք զմանուկ իւր
'ի վարժանոց և նա ոչ ուսանի, պարտ
է քննել և իմանալ, եթէ ոչ է պակա
սեալ յուսուցանելոյ զցայգ և զցերեկ
և տուն տալոյ նմա յարաժամ՝ և նա
ոչ եառ 'ի միտ և ոչ ուսաւ. քաջայայտ
է՝ զի մանկանն պարտ է բարկանալ
և զնա դատանել. ապա թէ 'ի շաբաթն
մի անգամ է ասացեալ կամ երկուս,
և ստէպ ստէպ ոչ է ուսուցեալ. այլ
յապաղեալ, վարդապետին բարկա-
ցեալ խռովեսցի. քանզի ոչ եթէ քա
հանային պարտ է մի անգամ ուսու-
ցանել 'ի շաբաթն կամ երկուս. այլ
հանապազ և յարաժամ օրըստօրէ 'ի
տանէ և 'ի եկեղեցի. քանզի ձկնորսքն
յորժամ արկանեն զուռկանս իւրեանց
'ի ծովն,

'ի ծովն, և ձուկն ոչ անկանի, մի թէ այլ ո՛չ ևս արկանեն ։ կամ հովիւն յորժամ արբուցանէ դեղն խոլթայէլ հօտին և առ ժամայն ոչ ողջանայ, մի թէ այլ ո՛չ արբուցանէ․ նոյնպէս և բժիշկն առ հիւանդն ոչ դադարի յարբուցանելոյ զդեղն՝ մինչև մեռանի, կամ ողջանայ․ այնպէս պարտ է քահանային՝ ուսուցանել անդադար մինչև մեռանի, կամ դառնայ 'ի գործոյն չարեաց։

(Հարցումն)

Եթէ ո՛չ լսէ աղաչանաց և պաղատանաց, զի՛նչ պարտ է առնել․ խոստութէ բանադրել, և արտաքսել յեկեղեցւոյն, և նզովե՛լ, թէ ոչ։

(Պատասխանէ)

Ոչ։ քանզի հովիւն պարսաքարիւն զմոլորեալ ոչխարն ո՛չ կարէ հարկանելովն արկանել 'ի փարախն, այլ ողորմանօք և աղաղակելով․ և զհիւանդացեալսն ոչ հարկանէ, այլ ածեալ զձեռամբ հատանէ զերակն․ ապա թէ



հար

հարկանէ զմոլորեալն եպարսաքարէ, ո՛չ ապաքէն բնաւ մոլորիցի եգա-զանաբեկ լեցի, և համարս տալոց է տն ոչխարաց: Այսպէս և զմեղաւորն եթէ արտաքսես յեկեղեցւոյն և անար-գես, բնաւին խստանայ և ապստամ-բեալ կորնչի: այլ պարտ է արտասուել ելալ առաջի նր եաղաչել, և այսպէս ուսուցանել: զի յորժամ տեսանիցէ որ լայ եապաշաւէ, զղջայ 'ի միտս իւր, եասէ. եթէ անձն օտար այնպէս լայ 'ի վր իմ, ես ընդէր ոչ լայցեմ և ոչ զղջացայց 'ի վր չարեաց իմոց. և որպ բժիշկ՝ զի յորժամ հիւանդին արբու-ցանելոց իցէ զդեղն, թէ բարկութբ և անարգանօք ջանայ արբուցանել, եոչ լուիցէ հիւանդն եարբիցէ, բա-զում անգամ հանդիպի մեռանել. և եպերեսցի բժիշկն վն կեղելոյս ըղ հիւանդն. այլ սովորութի է բժշկայն՝ ողոքանօք եաղաչանօք արբուցանել զդեղն հիւանդաց. և հոլովեայ աղ-արկանել, եբերել զոչխարս մոլորեալ 'ի խա-

'ի փարախն ։ և քահանային այնպէս առնել զմեղաւորն ։

(Յորդորումն)

Զի՞նչ պարտ է հաւասար մեղաւորաց ամի տարածանել զդրունս եկեղեցւոյ ։

(Պատասխանի)

Մեք այսպէս լուաք և այսպէս ուսաք յաւետարանչացն սրբոց ։ զի ինքն տէրն մեր և ԱԾՆ՝ յորոյ անուն հաստատեցաւ հիմն եկեղեցեաց, ոչ գարշեցաւ 'ի մեղաւորաց ։ Այլ արդ՝ եթէ նա ինքն ճշմարտութիւն այնպէս էր, և էր իսկ սրտագէտ, և դիտէր զայնոսիկ՝ որք գային առ նա ապաշխարութեամբ, և դիտէր որք գային կեղծաւորութեամբ, այլ հաւասար զամենն ընդունէր, և ընդ նոսա ուտէր և բազմէր ։ ո՞րչափ ևս առաւելապէս մեք՝ որ հող եմք և մոխիր՝ գարշիմք 'ի մեղաւորէն, և կամ ջանամք զեկեղեցի գարշեցուցանել ։ զի ո՛չ աթոռն մեծագոյն է քան զդթագաւորն, և ո՛չ տաճարն բարձրագոյն քան զարքային բնակել խոտարին ։



Արդ

Արդ՝ եթէ տեսանիցես զոք բազմեալ ընդ արքայի՝ մի թէ կարծես դու ար համարհել զնա եւ վարել 'ի տաճարէն եւ ասել թէ, ոչ ես արժանի կոխել այսր: Ո՜հ դարձեալ՝ նախ իսկ արարիչն սրտագէտ էր՝ որպէս ասացի. եւ գիտէր զեկեալն զղջմամբ՝ եւ զեկեալն կեղծաւորութբ՝ եւ ոչ դարշէր, որչափ եւ առաւել մեք քահնայքս՝ եւ ոչ գիտեմք եթէ յապաշխարութն գայցէ եւ եթէ անզղջութբ, զի արգելցուք զնա յեկեղեցւոյ։ Ո՜հ Քս ասաց, ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս. եւ եթէ նա վասն մեղաւորաց մարմնացաւ, քաջայայտ է՝ զի եկեղեցի վն մեղաւորաց հիմնարկեցաւ։ Ասա դու ցիս. Քսն 'ի տուն մեղաւորաց մտանելն է խոնարհագոյն, թէ մեղաւորի մը տանելն 'ի տաճարն քո. թագաւորն մտեալ 'ի տուն մեղանչականին՝ զի դարձուսցէ զաքսորեալն՝ վերագոյն է եթէ ծառայն մտեալ 'ի տուն թագաւորին. ինձ այսպս թուի թէ՝ ար



դե-

գելուլն յեկեղեցւոյն, քան թէ առա_
քինութիւն՝ մնասիցէ քհնյին։ զի եթէ
հնար էր ապրիլ ոչխարաց՝ 'ի բերա_
նոյ գայլոց առանց փարախի, կամ
առանց հովուի, 'ի ճարակել և ոչ
մոլորել, ապա փարախ ո՛չ ստանային
Այնպէս՝ թէ հնար էր մեղաւորաց
առանց քահանայի ապրել, և կամ
առանց եկեղեցւոյ ժողովել, նա ինքն
ած՝ ո՛չ էր զայս օրինադրեալ. և եթէ
հնար էր առանց ուսանելոյ և վարդա
պետի՝ գիր ուսանիլ, ապա աշակեր
տելոյ չէր պէտս. և թէ հնար էր ա_
ռանց քահանայի վարդապետելոյ և
եկեղեցւոյ՝ մեղաւորին դառնալ 'ի մե
ղաց, չէր քահանայ կարգեալ և եկե
ղեցիք հաստատեալ. իսկ եթէ եկե_
ղեցիք և քահանայք վն մեղաւորաց
կարգեցան՝ զի ուսուցանէ քհնյն և
ժողովէ 'ի փարախն. եդու 'ի բաց հա
լածես, և արտամերժես 'ի փարախէն,
զի՞նչ տացես պատասխանի իսկ։ ասա՛
դու. առ թագաւորք և իշխանք վն

 ում

ում բարեխօսէն. զմ̃ս մեղանչականին։ իսկ եթէ զմեղանչականն՝ 'ի տանէ քումմէ 'ի բաց հալածես՝ եւ անարգես, առաջի Թագաւորին զի ո՞րդ համար Ձակկիս վս̃ նորա բարեխօսել։

(Դորդութն)

Լուաք յամծայրին գրոց՝ զի ասէ Տր̃ն ցՄովսէս եւ յԵրեմիայ, եթէ մի՛ աղաչեք վս̃ ժողովրդեան այդորիկ, զի ո՛չ լուայց ձեզ. զի չարք են եւ անպիտանք։

(Պատասխանի)

Ցիրաւի ասայեր. այլ լո՛ւր դու ըզ պատասխանիսդ, եւ հաւանեա՛ յօրէնակէն։ Օրէնքն 'ի ժամանակս Մովսիսի՝ չարին չար հատուցանէր, եւ ակն ընդ ական, եւ ատամն ընդ ատաման. եւ ժողովուրդն այլեւս բազում անարդեցին զՄովսէս, այլ նա՝ որպէս թէ 'ի Քրիստէ ուսեալ՝ զոր ոչ իսկ էր տեսեալ, ասէր. Տ՛ր՝ եթէ թողուս ժողովրդեանդ այդորիկ՝ թողցես. ապա թէ ոչ՝ եւ զիս ջնջեա՛ 'ի դպրութէ քումմէ կենաց։ Արդ՝ եթէ զմարդարէսն

օրինակեցեր, ուսիր յօրինակէն՝ զոր
խնդրեցեր. եթէ քեզ մեղանչէ մարդ
աղօթես վ՟ն նր առ ա՟ծ յաղագս բա
րեկենդանութ՟ե ։ զի Մովսէս՝ Երե-
միայ՝ և Սամուէլ, վ՟ն մարմնոյ բա-
րեկենդանու՟ե բարեխօսէին, և ոչ վ՟ն
հոգւոյ ն՟ց ։ զՍամուէլ անարգեցին
և թագաւոր խնդրեցին ։ զՄովսէս
ուրացան և գլուխ որթոյ պաշտեցին։
և նոքա անդադար վ՟ն ն՟ց բարեխօ
սու՟ե ոչ դադարէին առ ՚ի յաղաչել
զՏ՟ր ։ եղուկ ուսիր յօրինակէդ, եյոր
ժամ քեզ մեղանչեն, աղաչեա զՏ՟ր
վ՟ն յանցանաց ն՟ց թողու՟ե և վ՟ն կե-
նաց ն՟ց բարեկենդանու՟ե ։ եյորժամ
Ա՟յ մեղանչեն՝ աղաչեա զԱ՟ծ վասն
յանցանաց ն՟ց թողութ՟ե, եկատարե
ցեր զմովսեսէն, եեղեր պսակաւոր.
եկատարեցեր զՔ՟ն, զի ոչ անցեր
եղբօրն քո մօրոս եապրեր ՚ի դժոխոյն ։

(Հորդորակ)

Պարտ է զմեղաւորն բռնութ՟ ածել
յեկեղեցին ։

(Պատուիրանք)

Մի՛ բռնութ̄ արկանել, և մի՛ զեկ̄ն արտաքսել · բայց և այլ ինչ ասեմ· յորժամ տեսանես զժողովուրդն քո թէ ո՛չ մտանէ յեկեղեցին, և ո՛չ հաղորդի 'ի պատուական մարմնոյ և յարենէն · Նախ պարտ է քննել և ո՛չ անտես առնել։ զոր օրինակ յորժամ տեսանես հովուին զոչխարս, զի ոչ արածի՝ ստուգապէս պարտ է իմանալ· զի թէ հիւանդ է՝ 'ի դէպ է քննել· և թէ 'ի ներքս է ցաւն՝ պարտ է դեղ արբուցանել, զի առողջասցի · և թէ արտաքոյ իցէ՝ զերակն հատանել։ Այսպէս՝ և քեզ քահանայիդ, զայն՝ որ ոչ ճաշակէ 'ի սեղանոյն ս̄բ, թէ 'ի ներքս է պատճառն, ք̄՝ վ̄ս յանցանացն, պարտ է ուսուցանել և ածել 'ի խոստովանութ̄ն, և տալ զդեղն ապաշխարութ̄ · ապա թէ արտաքոյ է պատճառն՝ ք̄, և թէ խէթ ինչ ունի ընդ ընկերին՝ պարտ է հաշտեցուցանել զն̄ս, և արժանաւոր առնել սեղա

նոյն ՚ի ՔԻ . եւ այդպիսի որակաւ պարտ
է վարել քհնյին հանապազ օր գործել։
(Տօրքյուռնի)

Լուաք յառաքելական կանոնաց թէ՝
պարտ է արտաքոյ դրանն պահել զՔԴ
մեղաւորն , ըստ գոյից յանցանացն ։
(Վարդանէ)

Բարուոք ասացեր . Լուաք եղայս ՚ի ՏԷ
որ ասէ . եթէ ածիցէ ոք ապտակ յաջ
ծնօտ քո , դարձո՛ նմա և զմիւսն . և
որ ՚ի կարգին է ասող՝ եթէ դու զայն
կատարեցեր , պահանջէ ՚ի նմանէ զայդ։
ապա եթէ դու զայդ ոչ կատարես ,
եւ համարձակեսցես կալ առաջի սեղա
նոյն , և զՔԻ պտրգես , և զինքն
մատուցանես , և ընդունիս ՚ի քեզ բո
վանդակ՝ որ քեզ հրամայեաց զայդ
առնել , և ո՛չ կատարես՝ այլ արհա
մարհես զնա , եւ համարձակիս ընդու
նել զնա զոր արհամարհեցեր . եւ զմիւսն
և ո՛չ արտաքոյ բեմին թողուս կալ
յաղօթս։ Ասա՛ դու ինձ . թէ ոք հը
րամանազանց լինի թագաւորին՝ հնար

ինչ իցէ ամենեւին մերձ լինել՚ի նմա
ուր աթոռն է արքունական, եւ հուպ
լինել ՚ի նա, ոչ. այլ ՚ի գաւիթս թա
գաւորին անճնար է կանգնիլ: արդ՝
եթէ դու անյեր զհրամանս թագա
ւորին, եւ համարձակիս կալ առաջի
նր՝ եւ հուպ լինել, եւ բովանդակ ըն
դունել զնա, եւ նա ներեսցէ քեզ,
կարես եւ զմիւս այլ մեղանչականն ՚ի
գաւթէ թագաւորին հալածել՚ի բաց,
ոչ ասէ: ապա այնպէս զքեզ համա_
րեա: արդ՝ յորժամ դիմեալ գայ մե_
ղաւորն յեկեղեցին՝ ոչ է պարտ ար_
գելուլ. այլ ընդունել:

(Հարցումն)

Իսկ եթէ խիղճ ինչ ՚ի մտի ունիցի,
եւ ոչ ճաշակէ զՏն յանցանացն:

(Պատասխանի)

Ոչ ասէ հարկիւ, այլ և ոչ անտես
պարտ է առնել. նաև ոչ պարտ է
գովել անդրէն, թէ բարւոք գործէ՝
զի ոչ հաղորդի. և իբրև զերկիւղած
մեծարեսցէ զայնպիսին: Ասա՛ դուցես՝

եթէ տեսանիցէ հովիւն զոչխարն ոչ ճարակել ինչ, մի՛թէ գուլեսցէ զնա, ևանտես արասցէ․ այլ թէ իմասցի՝ զի հիւանդ է, դեղ արբուցանէ՝ զի ա-ռողջասցի․ այնպէս և քահանային պարտ է առնել։

(Հարցումն)

Եթէ ոք համարձակեսցի ՚ի մատչել առանց երկիւղի և ՚ի սուրբ սեղանոյն ճաշակել, պարտ է առանց խոստովա-նութեան տալ նմա զպատուական մար-մին և զարիւնն քի՞ թէ ոչ։

(Պատասխանի)

Եթէ գիտէ քահանայն եթէ յանցա-ւոր է և յանդգնի համարձակապէս, չէ պարտ տալ․ ևեթէ տայ, պարտա-կան է արեանն քի։ Իսկ քահանայն որ սուղ ինչ ժողովուրդ ստացեալ է պարտ է քննել զմատուցեալսն․ իսկ որ ՚ի կաթուղիկէ եկեղեցի ձեռնար-կեալ իցէ, զիա՞րդ հնար իցէ զայնչափ ամբոխս քննել և իմանալ․ վասնորոյ կարգեցին զսարկաւագունսն աղաղա-



կել

կեալ ևասել. որք ոչ էք կարող հաղոր-
դիլ. առ դրունս ելէք և աղօթեցէք:

(Հարցումն)

Մեծապէս հոգածուն քահանայն
այդպէս ապաշաճագոյն է որոշել յա-
նապատս, քա՞ն թէ կալ յեկեղեցիս:

(Պատասխանի)

Որ քահանայէ օծեալ եթողու և-
րոշի յանապատ, ինձ այսպէս թուի
թէ դատապարտի, քան թէ օգտի:
զի յորժամ յարեաւ քս՝ ասաց ցպետ-
րոս եթէ, սիրե՞ս զիս, արածեա զոչ-
խարս իմ. և ոչ ասաց թէ ե՛լ յանապտս
և կամ պահս պահեա. կամ լուծս ինչ
այլ ծանրագոյնս կրեա՛ց, այլ թէ ա-
րածեա զոչխարս իմ. իսկ անապատա-
ցիքն բազումք խոտաճարակք են.
և այլք շաբաթս ձգեն, և ոմանք բա-
զում աւուրս անցուցանեն, և լուծս
ծանրագոյնս կրեցին զբազմաց և ոչ
զանուճանս նց լուծաք: իսկ զպետրոսի
անունն և զպօղոսի, ՚ի սկեւթ և ՚ի հռն
դիկք և հաճատայեալք. ա՜մ դիտեն



եձա

եճանաչէին․ ծեր եւ տղայ, եւ ամենայն հասակ․ եւ զի՞նչ արարին․ մի թէ յանապատս բնակեցան․ կամ խոտաճարակք եղեն․ կամ կրօնաւորական վարուք ճգնեցան․ ո՛չ։ այլ զի՞նչ արարին․ զոչխարս արածեցին․ քաղաքէ 'ի քաղաք շրջեցան, եւ զքրիստոս աստուած քարոզեցին․ զմոլորեալս յաստուածպաշտութիւն դարձուցին․ եւ զքահանայս 'ի տեղիս իւրեանց կարգեցին, զի նոցա հետեւողք լինիցին եւ զփառս նոցա ժառանգեսցեն․ եւ նոցա լիցին նմանօղք, որպէս եւ նոքա քրիստոսի ըստ երանելոյն պօղոսի։ իսկ եթէ ոք զիշխանութիւն քահանայութեան ոչ է ստացեալ եւ որոշի յանապատի եւ ճգնի ճգնութիւնս խստակրօնս, մեծապէս պսակի յաստուծոյ։

(Հարցումն)

Եթէ ոք արասցէ մեղս բազումս կամ սակաւ, եւ խոստովանեսցի եւ ոչ եւս այլ գործեսցէ զայն, ճնար իցէ՞ աւանց ապաշխարութեան թողութիւն ընդունիլ թէ ոչ։

(Պատասխանի)

Մարգարէն դաւիթ ասէ. խոտորեա՛ 'ի չարէ, և արա՛ զբարի: առանց գործոց բարեաց ոչ ինչ օգուտ որ թողու զմեղսն. և արդ՝ ոչ ասացի քեզ մարդ որ գործեալ իցէ զմեղս, և դարձեալ թողու զմեղսն զայն, և այլ ոչ ևս արասցէ զայն, և բարի ինչ ոչ գործիցէ. այլ ասացից քեզ. զայր մի որ յորում վայնէ ամենևին ոչ իցէ և զմեղս ոչ ինչ իցէ գործեալ և բարի չէ ինչ արարեալ, դու զինչ համարեսցիս զնա, անասուն ասէ: իսկ այն՝ որ յորում վայնէ մեղս ոչ իցէ գործեալ և բարի ինչ ոչ իցէ արարեալ, անպատուն համարեսցիս. որչափ ևս առաւել ապա այն՝ որ մեղս գործեալ իցէ և բարի և ոչ մի ինչ. յայտ է թէ վատթարագոյն ևս իցէ քան զանասուն:

(Հարցումն)

Խոյն ինչ մեղք, որ կարէ կալ առաջի ապաշխարութեան: (Պատասխանի)

Լոմաք ասէ զինչ եղև պոռնկին և



այլոց

այլոց բազմաց, զի զ յանցանս մեծա_
մեծս քաւեցին ճշմարիտ ապաշխա_
րութ՟բ · Եւ Եզեկիէլ մարգարէն ասէ·
անօրէնն եթէ դառնայ յա՟մ անօրէ
նութ՟է իւրմէ զոր արարեալ իցէ եւ պա
հիցէ զպատուիրանս իմ, և արասցէ
արդարութ՟ի եւ ողորմութ՟ի, ա՟մ յանցանք
ն՟ր զոր գործեալ իցէ, եւ ա՟մ անօրէ_
նութիւնք իւր զոր անօրինեալ իցէ, մի՛
յիշեսցի · այլ արդարութ՟բ իւրով զոր
արար, կեցցէ · մի թէ կամելո՞վ կա_
միմ զմահ մեղաւորին · այլ զդառ_
նալն ն՟ր ասէ տ՟ր ։

(Հարցումն)

Է՞ առաքինութ՟ի որ առաւել է քան
զողորմութ՟ի առատապէս ։

(Պատասխանի)

Յերանելոյն Յոբայ անտի ուսաք·
զի համբերութ՟ի վշտացն աւելի եւ վե
րագոյն է քան զողորմ՟ի · զի նա յոր
ժամ զառատապ՟ ողորմութ՟ի գործէր,
սա՟կյ ոչ համարեցաւ զայն իւր ա_
ռաւելապէս արդարութ՟ի ։ Իսկ յոր

 ժամ

ժամ համբերէց 'ի մէջ եկեղ վշտայն
ապա յաղթեաց սատնյի, եւ էր հռչա
կեցաւ ընդ ամ տիեզերս։

(Հորգունի)

Ոչ քան զհամբերութիւն, իցէ այլ
առաքինութիւն բարձրագոյն։

(Պ[illegible])

Սէր ընկերին բարձրագոյն է. քն, ան
ոխակալութն. արդ՝ զայսոսիկ զերկս ա
ռաքինութիւս 'ի մի վայր ժողովեալ
Պօղոս զսէրն առաւել արարեալ ամի
եւ օգտակար քան զայլն. ասէ ոչ եթէ
զառատապէս զողորմութն ասացեալ
միայն առանց սիրոյ ոչ ինչ օգտի.
քանզի այսպէս ասէ թէ, զամ ինչս
իմ ջամբեցից աղքատաց եւ սէր ոչ ու
նիցիմ, ոչ ինչ օգտիմ։ զի սէրն վե
րագոյն է քան զհամբերութն. զի համ
բերութն վշտայն հեշտագոյն է քան
զայրումն հրոյ. այլ զսէրն վերագոյն
ասաց, քան զհամբերելն այրեցման։

(Հորգունի)

Եթէ ոք զրկեսցէ զոք եւ տանէ ագա

 հու

հունի և յայնմանէ բաշխէ առատաձեռն աղքատաց, է՞ ընդունելի առ Աստուած թէ ոչ:

(Պատասխանի)

Ոչ. այլ այնպէս է, որպէս թէ շուն ոք մորթիցէ առաջի Աստուծոյ. քանզի Աստուած ատէ զզրկողն, և զաւազակն, և զվաշխառութիւն. արդ՝ զի՞նչ օգուտ մարդ զինքն մերկացուցանել և զմիւսն զգեցուցանել, այնպիսւոյն անընդունելի է ողորմութիւն զոր առնէ առաջի Աստուծոյ. և ոչ եթէ այն միայն իցէ անընդունելի զոր ՚ի զրկանացն առնէ և յագահութէ, այլև այն, զոր ՚ի բուռն արդար վաստակոցն առնէ, պիղծ համարեսցի վասն խառնելոյն ընդ զրկանսն, և ընդ ագահութիւնսն: Ապա զի՞նչ լինիցի օրհնութիւն յորժամ բաշխեցուցանեն այնպիսիքն զկարօտեալսն, և զմերկսն, և զգեցուցանեն և կերակրեն, և նոքա միաբան օրհնեսցեն: Լուր՝ արդեօք եթէ հարցանես՝ Աստուած յարդար վաստակոյ հրամայեաց առնել զողորմութիւն և զաղքատս կերակրել. իսկ յորժամ զկարօ



տու

տուն աղքատին նուացուցմք, մի թէ
եպիրեսցէ զնա աղքատն եթէ ՚ի յա
փշտակութէ կերակրէ զնս, ոչ այլ
օրհնեսցէ: բայց ած ոչ ընդունի, այլ
բարկանայ ՚ի վերայ նր· զի հրամայեաց
արդար վաստակոց տալ աղքատաց,
ևնա արհամարհեաց զհրամանս նր
եբաշխէց յաւարառութէ և ՚ի զրկանաց:
Զոր օրինակ թագաւոր ոք հրամայէ
սպասաւորի իւրոյ հաց ՚ի նաշխոյ կազ
մել եգինի անուշահոտ եանապական
պատրաստել, ևկերակրել ևարբուցա
նել կարօտելոց եղբարց իւրոց: Իսկ
սպասաւոր թագաւորին խառնիցէ ը
նաշխին աւազ· և յանապակն ջուր· և
ընդ միսն խառնէ արիւն· ևփոխէ և
այնու կերակրեսցէ զկարօտեալսն·
բայց նդ իսկ քաղցելոցն և կարօտե_
լոցն, կարի անուշահամ թուեսցին
կերակուրքն, և օրհնեսցեն զմատակա
րարն որ է սպասաւորն: Իսկ թագա
ւորն յորժամ իմանայ, չարաչար տան
ջեսցէ զմատակարարն· այնպէս և ած


առնէ

տանէ այնմ, որ խառնէ զգլխանս ըն-
կերց, որ յագահութէ և յափշտակութէ
'ի վաշխից տոկոսեաց ընդ ինչս իւր,
զոր ստացել է յարդար վաստակոց և
տացէ զայն կարօտելոց և քաղցելոց:

(Հոբյուն.)

Ըմնայն սպանութե, մի է և նմ շնու-
թիւն, եթէ այլ մեծամեծաց և այլ է
աղքատաց:

(Պատասխանէ)

Մի է. եթէ սպանանես զթագաւոր,
եթէ սպանանես պաղքատն, եթէ շը-
նայցէ ոք ընդ թագուհւոյն, և թէ
ոք ընդ աղքատին, բայց 'ի քահանայ
էն կյամուսնոյ նր. ոպ և ինձ թուի:

(Հոբյուն.)

Եթէ մարդիկք բազումք` մի մարդ-
սպանանեն, բաժանի արիւն նր 'ի
վր ամենեն. և սուղ սակաւ հասանէ
ապաշխարութ իւրաքանչիւր առն:

(Պատասխանի)

Ո՛չ այդպէս է իրաւունքն նյ. այլ զոր
օրինակ շնացէ այր մի ընդ կին մի,

 Լուցէ

առցէ ապաշխարութեան շնութեան այնմիկ· և յորժամ բազումք շնան ընդ կին մի իւրաքանչիւր ումեք, շնութիւն մի պահանջեսցէ աստուած· ոչ եւս այր մի շնասցէ ընդ կանայս բազումս՝ յիւրաքանչիւր կնոջէ, շնութեան մի պահանջեսցի 'ի շնացեալ յառնէն յայնմանէ։ Նոյնպէս եւ որք 'ի միասին այր մի սպանանեն, յիւր․քանչիւր առնէ՝ մարդոյ մի արեան պահանջէ աստուած։

(Հարցումն)

Ո՞րպիսի պահք ընդունելի է առ աստուած· քանզի տեսանեմք զոմանս զի զքառասներորդսն պահեսցեն զամենայն եւ այլք զկէսն և այլք 'ի շաբաթէ 'ի շաբաթ, միայն ճաշակեսցեն․ սոյնպէս եւ զտարին ամենայն եւ ոչ մսեղէն ճաշակեն ինչ եւ ոչ այլ ինչ 'ի փափուկ կերակրոց։

(Պատասխանի)

Պահք ոչ եթէ զայն սիրէ աստուած, զոր միայն 'ի կերակրոց զգուշասցի ոք՝ այլ զայն՝ որ զամենայն անդամսն պահիցէ 'ի մեղաց։ քանզի յորժամ ոչ ուտի



ցէ

ցէ ոք , լուծանին անգամքն ա՟մ․
պակասի լոյս աչայն․ վատին ոտքն․
թուլանան ձեռքն․ եւ տկարանայ մար
մինն ա՟մ․ այլ եթէ զաչսն ՚ի ցանկու
թէ ոչ պահեսցէ, եւ զձեռսն ՚ի հարկա
նելոյ եւ ՚ի յափշտակելոյ, եւ զոտսն ՚ի
գնալոյ ՚ի չարիս գործոց մեղաց․ զլե
զուն անարգանաց․ յանիծից․ ՚ի բամ
բասանաց․ յերդմանէ․ սիրտն յոխակա
լութէ․ սանձելով համբերութ՟բ․ եթէ
այսմ ամենեքումբք ոչ պահեսցէ, ու
նայն եւ դատարկ են պահքն որ ՚ի կե
րակրոց․ ապա եթէ պսոսա պահեսցէ՝
ընդ պահելն խուրում ՚ի կերակրոց,
տուածելապէս պայծառացին պահք
նք։ Ապա եթէ որկորն միայն պահի
ցէ, որոյ ակն ունիցի զի պահելով
նք ա՟մ անդամքն ա՟պականին, եւ զայլ
անդամսն ոչ պահեսցէ․ որ եթէ աչք
քո ոչ ցանկայ դեղոյ կամ ընչից՝ ոչ
վատնեսցի․ եւ ձեռք քո եթէ ոչ յա֊
փշտակէ կամ հարկանէ՝ ոչ թուլա֊
նայ․ եւ ոտք քո ոչ գնասցէ ՚ի գործս

չարեաց ոչ վաստեսցի · և լեզու քո՝ եթէ ոչ բամբասէ կամ ոչ անարգէ զոք՝ կամ ոչ անիծանէ՝ կամ ոչ երդնու՝ ոչ լուծանի և ոչ ապականի յայսչանէ, եթէ զայսոսիկ ոչ կապես՝ և ոչ պահեսցես, զիա՞րդ օգտեսցիս: Անդամոցն այն՝ որ եթէ ոչ պահեսցես զամ անդամքդ՝ ը նմին ապականին: եթէ զայն պահես՝ և զայլ անդամսդ որ եթէ կապես և պահես՝ ամենևին ոչ ապականին · իսկ թէ զայն արձակես, զիա՞րդ է քեզ ապրել · և ընդէ՞ր ոչ օգտի 'ի բազում պահոց անտի՝ որով վաստանի և ապականի ամ մարմինն: Սորդ՝ բաւական է մեզ 'ի յիմար կուսանաց անտի ուսանիլ · զի նոքա ոչ օգտեցան · այլ դու՝ եթէ դովեսցես՝ եթէ ոմն պահեաց անսուաղութ զաւուրս շաբաթոյ միոյ, ես ասասցից թէ՝ այսանուն լեզու ունէր · բամբասող, և թշնամանող, և եհատ զայն: Իսկ եթէ զայլ յումեքէ ասասցես՝ եթէ երկու շաբաթ ոչ ճաշակեաց կերակուր, ես

զայն գովեցից՝ որ ունէր ակն ցան-
կայօղ՝ եւփակեաց զնա յախտէն յայն
մանէ։ Եթէ դու ասասցես աւուրք
երից շաբաթու ճգնեցաւ այլ ումն մի,
ես զայն գովեցից՝ որ ունէր ակն ցան
կայօղ, արգելեաց և՚ի բաց եհան ՚ի
մարմնոյ իւրմէ՝ զշնութն, եւպոռնկու-
թն, եւժուժկալութբ պնդեաց զինքն՝
՚ի յաղօթս ։ Եւ եթէ դու զայլ ոք
ասասցես՝ եթէ զչորրորդ շաբաթն
պահեաց ժուժկալութբ՝ ես զայն վե-
րագովեցից՝ որ սովորեցոյց զձեռս
իւր՝ արձակել առատապէս զողորմու-
թն ։ Եւ ասասցես՝ եթէ միւս այլ
ոք զքառասներորդն աւարտեաց ան
սուաղ լինելով, ես զայնմանէ ասա-
ցից՝ որ զաւարտն ամ առաքինութբ
կատարեաց, եւկորզեաց զիւն ընկերին
՚ի սրտէ իւրմէ ։ Զայնպիսի պահս
ընտրեաց Ած ։ ոչ եւ Եսայի ասէ.
ոչ եթէ պահք զայն ընտրեցի՝ որ
քուրձ զգենուս՝ կամ ՚ի վր մոխրոյ
նստիցես, կամ անսուաղ լինիցես, ոչ

սիրեցի առէ զայնպիսի պահք. այլ
եթէ տեսանիցես զոք քաղցեալ՝ բեր
դեա՛ նմա զհաց քո. եզաղքատս ան_
յարկս՝ ա՛ծ ընդ յարկաւ քո. եթէ
տեսանիցես զմերկն՝ զգեցո՛, և ընտա_
նեաց զաւակի քո, զանձն մի՛ արկա_
նիցես. զմուրհակս անիրաւութէ՝ պա
տառեա՛. և լո՛յծ զկնձռուն անիրաւու
թէ վաճառոց. եթէ այս ա̃մ ’ի ձեռն
ստամբերայն ատացան, ո՞ր չար է ես ա_
ռնել այսպ ’ի ձեռն շնորհացս պարտ
է և առաւելապէս ստանալ: Զի՞նչ
ապա. չէ՛ պարտ պահել, քան լինել:
’ի բաց տար: կարի՛ կարևոր է պահքն
և հիմն ա̃մ առաքինութէ. իսկ որ հիմն
արկանէ զպահս, քաջայայտ է շինէ՝
այնու զտուն առաքինութէ: Որդ՝
եթէ հիմն զպահքն արկանես՝ և՛չ
կանգնես զորմունսն աղօթիւք, ա_
ռանց շնութէց եառանց գողութէ. և
ո՛չ ածես ’ի վե՛ր դերանս՝ որ է առանց
զրկանաց և առանց յափշտակութէ,
և ոք լինել ձեռայն. և ո՛չ զառաստաղ


կապես

կապեսցես գործով ողորմութե՝ յար
դար վաստակոց, և՚ի վր ածառս ար
կանել, որ է համբերութին. և պա-
հպանէ անոխակալութե և սիրով։
արդ՝ եթէ այս ամ՝ ՚ի ներքս ոչ ժո
ղովի, հիմն տուն ոչ անուանեսցի,
և ոչ լինիցի բնակարան՝ այլ կ՚ խան
անցաւորաց և ապականեալ անյայտ
լինիցի։ իսկ պահք՝ վս այնր սահմա
նեցան, զի ՚ի բաց հատանէ զախտ շը
նութե և զայլ յանցանս. ապա եթէ
զայն ինչ՝ որ պահքն վս նր սահմա
նեցան՝ ՚ի ներքս համարես, ՚ի պա-
հոցն զի՞նչ շահեսցիս. և զպատճառս
փրկութեն արարեալ պատճառ տան
ջանաց։ Զի որ ՚ի կերակրոյ միայն
պահեսցէ և զայլոցն զանց արասցէ,
թէ և զամ աշուրս հող կերիցէ փո-
խանակ հացի՝ աստէն մարմնովն տան
ջեսցի պիղծ պահօքն. և անդ հոգին
աններելի տանջեսցի ՚ի հուր գեհեննին

(Յորդումն)

Գինին զի՞նչ վնաս արկանէ առաւել



քան

քան զմիս եզայլ փափուկ կերակուր։

(Պտոփոսխոնէ)

Զոր ինչ արար ած 'ի սկզբանէ բարի է. ոմն ասէ դիրն. այնպէս եզգինին բարի արար, եւ ոչ չար. եւ մեզ չէ պարտ զգինին պիղծ համարիլ եւ զած անարգել. այդ դիրն զգինին ոչ խափանէ 'ի մարդոյ. զի թէ խափանելոց էր, ապա ոչ էր ասացեալ մարգարէն թէ, գինի ուրախ առնէ զսիրտ մրդոյ. եւթէ չար էր, քս զնա իւր արեան ոչ էր արարեալ. արդ՝ ոչ եթէ գինին է չար, այլ արբեցութիւն. քան լիցի չար ասել զարարչութիւն ած, այլ բարի է. մի թէ գինին մն արբեցութե տօնած. ապա զի՞նչ պատճառի. զի՞նչ խօսիս եթէ համարիս զգինին մն արբեցութե տօնեալ, ապա զջուրն մն նաւակոծութե համարեա՛ եւ խեղդելոյ զանձինս մարդկան եւ ոչ վասն կենաց։ եւ զհողն չար՝ զի փուշ եւ դժնիկ բերցէ, եւ այլ բոյս մահաբերս բուսուցանէ։ եզերկաթն՝

զի սպանանէ եւ ոչ յայլ պէտս ինչ պի
տանիս վարել. եւ զայլ բազում զոր ա-
րար ած։ կրակն՝ այրէ զմարդիկն ե-
թէ թողուս զպէտս նր ելանել եւ յայ
րումն վարես։ եւ քարինս տաշած՝ զի
պարիսպս եւ որմունս կանգնեսցի. եւ
դու թողեալ զայն՝ քարկոծ առնես
զընկերն, եւ ի հարկանել վարեսցես։
եւ փայտ տաշած՝ զի պտուղ բերցէ՝
եւ վարեսցի ՚ի պէտս շինուէ. եւ դու
զայնու զանց արարեալ՝ վարես զնա
՚ի պէտս նետից եւ գեղարդեանց, զի
զանձինս մարդկան սատակեսցես։ եւ
երկաթն վս այնորիկ տաշած զի սպա
սաւորեսցէ յաղագս օգտուէ մարմ
նոյ քո ՚ի գործս զանազանս. եւ դու
զայլ պէտսն զանց առնցես, եւ ՚ի պէտս
սպանութէ վարեսցես։ այնպէս համա
րեաց եւ զդինին. ած զդինին հրամայ
եաց՝ զի ոչ հայիցէն յադենաս, նոյն
պէս եւ դինոջն. եւ զի զսիրտ մարդոյ
ուրախ առնէ. եւ դու անցանելով Ը̄
չափն եւ ՚ի պէտս արբեցութէ վարես


զպէտս

զպէտս ուրախութեան. և ոչ գիտես և ոչ
զմտաւ ածես թէ որպէս շնութիւն, պոռնը
կութիւն, սպանութիւն, արուագիտութիւն, զը֊
գայթակղութիւն, խափանէ յարքայութէ, նոյն
պէս և արբեցութիւնն։ և ես ասէ զբ[illegible]
տեի, զի արբեցան և ոչ շնացան, և
ոչ թշնամանեցին. այլ ես ասեմ, ոչ
եթէ զայդ մեծ գործել տայ, այլ ա֊
սայի թէ խափանէ յարքայութէ ինքն
միայն. և այլ արբեցութիւն միայն առան
ձին չար է՝ և խափանէ յարքայութէ
և փափկութէ. քանզի և Պօղոս յոր
ժամ զարբեցութիւն 'ի մէջ բերէ, ոչ ա֊
սաց թէ արբեցողն՝ որ զայս ինչ գոր
ծեաց, կամ զայն ինչ, ոչ ժառանգէ
զարքայութիւնն այ. այլ զայնու զամենայն
զանց արարեալ միայնակ զարբեցողն
ասէ։ որպէս եգրեալ է առ Հռօմայեցիսն
ասելով. մի՛ խաբիք. ո՛չ շունք, ո՛չ
գողք, ո՛չ արուագէտք, ո՛չ իգամոլք,
ո՛չ արբեցողք, զարքայութիւնն այ
ժառանգեն. և ընդէր լինի այդ։
Լուր աղաչեմ. զի քան զդիւահարն



վատ

վատթարագոյն է արբեցողն, և քան
զշնացողն դառնագոյն իցէ․ նախ մար
մնոյն, ապա կորստեան հոգւոյն։
քանզի զդիւահարն յորժամ տեսա
նեն բազումք, ողորմին նմա և աշխա
տին և աղաչեն․ ենա թէ համբե
րութ տարցէ նեղութեանն՝ զարքայութին
ընդ վկայսն ժառանգէ։ Իսկ արբե
ցողն՝ պիղծ է առ ած քան զշնացողն․
քանզի որ շնայ, թէպէտ և հոգւոյն
ապականութի է և կորուստ, այլ մար
մնոյն երաշխական ևսնոտի հեշտութի։
Իսկ արբեցողն՝ ըմպէ և սոսկայ ամ
անդամօքն․ դառնայ ստամոքսն․ ան
ախորժ լինի կոկորդն․ ործկայ և
դարձեալ․ այլ ըմպէ և ապա փսխէ․
ապականի ստամոքսն, առյէն ատա
մունքն․ և յորժամ հայի յայն՝ որ սի
րէյն․ իբրև՝ ի յօձէ փախչի՝ ի նմանէ․
տապի իբրև զմեղաւոր․ հծծէ իբրև
զհիւանդ, և իբրև դիւահարի այլա
գունին երեսքն․ աչքն շրջին․ լեզուն
մկտի․ ձեռքն թիւրին․ ոտքն շեղին․

մարմինն ա՟մ լուծանի․ եթէ սորա է,
արհամարհի ՚ի ծառայիցն․ եթէ ծա֊
ռայէ անարգի, գիտեն․ այլև յա՟մ
մարդոյ արհամարհի, անարգեն, ե֊
պերին, պարսաւեն, բամբասին, ՚ի
տղայոց կատակի, ՚ի կանանց նախա֊
տի, և ոչ ողորմին որպ՟ս դիւահարի,
այլ նզովեն ևս։ և ոչ եթէ այնպէս
տանջելովն և նախատ լինելովն, քա֊
ւի ՚ի յանցանաց անտի․ այլև այնու
ա՟միւ զյաւիտենից հուրն ժառան֊
գելոց է։ վ՟ն այսորիկ ոչ է պարտ զգի֊
նին պիղծ ասել, այլ զարբեցութի՟ն և
զանչափութի՟ն ագահութե՟ն։ Ապա ոչ է
պարտ քահանային ըմպել գինի․ ես
զայդ ոչ կարացից պատուիրել․ այլ
որ զգուշանայ քահանայն և ռամիկն,
բարւոք առնէ․ ապա թէ ոչ, զչափ
ւորն ընկալցի․ զի թէ ախտս այս կա
րօղ է յարքայութե՟ն հանել, ապա
պարտ է զգուշանալ ՚ի նմանէ․ քաջա
յայտ է՝ զի ոչ է բարի, այլ չարագոյն
քան զշնութի՟ն ո՟ք լսասցի․ և եթէ



չնու

շնութիւն ապականէ զպատիւ քահա-
նայութե, քաջայայտ է՝ զի առաւել ևս
արբեցութիւն. եթէ ուսուցանօղն այ-
պէս առնէ, զի՞նչ ապա ուսանօղքն.
եթէ վարդապետն յանցանիցէ, զի՞նչ
ապա աշակերտքն. և եթէ առաջ-
նորդն սխալէ, զի՞նչ ապա և ժողո-
վուրդքն: Ա՛յ որոյ պարտ է ամենև
ին փախչիլ յախտէս յայսմանէ, եր-
բև յօձէ սպանողէ. քանզի ինքն իսկ
արբեցութիւն գործ չար է՝ և տայ գոր-
ծել զգործս չարեաց բազումս մեծամեծս:

(Հարցումն)

Ապա և բամբասելն է չար. քանզի և
Պօղոս զբամբասօղն և զարբեցօղն ա-
սէ խափանել յարքայութենէն:

(Պատասխանի)

Այո՛. քանզի ասէ Քրիստոս թէ, որ ասիցէ
ցեղբայր իւր յիմար՝ պարտական է
դատաստանի. և որ ասէ ցեղբայր իւր
մօրոս՝ պարտաւոր լիցի գեհենին. և
դարձեալ ասէ. մի՛ դատէք՝ զի մի՛ դա-
տիցիք. և թէ՝ կեղծաւոր հան նախ

 զգերանն

զգերանն յականէ քումմէ, և ապա
քննեսջիր հանել զշիւղ յական ըն-
կերի քում. այդ ամ յաղագս բամ
բասողացն ասացաւ: և Պօղոս յայտնի
ասէ. ո՛չ շունք, ո՛չ գողք, ո՛չ արբե-
ցողք, ո՛չ բամբասողք զարքայութին
այ ժառանգեն: և վասն ախտիդ-
այդ՝ Մահմետականիչքն ոչ ասացին զա-
նուննն յուդային անարգանօք. ո՞վ սո
վոր է զայնպիսի այր նախատել, թե
յուդա նենգաւորն՝ չարագործն՝ անօ
րէնն, այլ յուդա՝ իսկարիովտացին.
զի մի՛ բամբասելովն՝ հաղորդ լիցին
մեղաց նր: Ո՞ արդ՝ պա՛րտ է խա-
նալ. զի մինն շնայ եղողանայ ևսպա
նանէ՝ և այլ ինչ չարիս գործէ, և
միւսն բամբասէ, ևառ հասարակ տան
ջին. ևզիա՛րդ ոչ է չարդ. զի զախտ՝ որ
դու անձամբ ոչ ես գործեր, 'ի ձեռն
բամբասանաց, 'ի միասին տանջիք:

(Ոսկեբերան).

Ապա յանցանք բազում իցեն 'ի մարդ-
կանէ, պա՛րտ է զանձն յայտնել մարդ-



կան,

կան, զի թերևս զգուշասցին և ապ րեսցին։ Եթէ ոք 'ի նեղութե իցէ և վա ճառէ զինչ իւր առատապէս. և որ գնէ՝ գիտէ թէ առաւելգս իցէ գին իրացն, այնքան զոր խնդրէ վս հար կի սովոյն, և կամ վս նեղութե չարչա րանաց մարմնոյն, և յօժարութե առ նու, և առանց խղճի, զի ոչ լինիցի

այնպիսւոյն։

(Պատասխանի)

Ասէ՝ ոչ ասեմ զայն միայն՝ որ առա տապէս գտանիցէ զվաճառն. այլ թէ և 'ի խիղճ գտանիցէ և ծածկեսցէ զնա 'ի տանէ իրացն՝ դատապարտի. այնպս և որ վս հարկի նեղութե մարմնոյն գտանէ զվաճառն և ոչ խնայէ 'ի տէր իրացն, և զառաջնորդն նմա ծախիցէ՝ այնպէս համարեսցի նա, եթէ գտեալ զայն 'ի խղճոցի անդ, յայտնապս ա ռաջի տն իւրոյ յափշտակիցէ 'ի նմա նէ. և ոչ եգիտ, և տէրն իւր ոչ ետես։ քանզի թագաւորք՝ կորուսանեն ինչս թագուհս, և քահանայս հուշակեն, և ինչս

խոստանան, եւ բազումք գտանեն զկո
րուսեալն․ եւ ս͞ ահի դատաստանին՝
ոչ թաքուցանեն, այլ յայտնեն․ եւ
բազումք ՚ի ձեռն ագահութե͞ ուրա-
նան՝ եւ ոչ յայտնեն։ Իսկ որք ոչ ծած
կեն այլ յայտնեն, վարձս բազումս
առցեն․ իբր թէ՝ տուեալ զայն յընչից
իւրոց ՚ի ձեռս աղքատաց։ Իսկ այն՝
որ ծածկեաց եւ ոչ յայտնեաց, այն-
պէս համարեսցի նմա, իբր թէ՝ գողա
ցաւ եւ ծածկեաց։ այնպէս եւ այն որ
զվաճառն առատա͞պս գտանէ ՚ի պատ
ճառանաց բազում եւ ոչ խնայեսցէ,
այլ առանց խղճի առնէ․ կամ ոչ լի
նի վաճառոյն հմուտ վաճառօղն եւ
տխմար․ եւ ՚ի ձեռն սովրոյն առատա͞պս
վաճառէ․ կամ վ͞ս նեղութե͞ մարմնոյն
զի ապրեսցի ՚ի տանջանացն․ եւ դնօղն
գիտէ զգին իրացն ստուգապէս՝ եւ ոչ
խնայէ, այլ առնու իսկ խաբօղ հա-
մարեսցի։ Ու՞ մեղք յետ ամբարտա͞ւա
նութե͞ յառաջին խաբէութի͞ է՝ որ խա-
բեաց օձն զեւայ։ Ապա եթէ քաղ



ցեալ

ցեալ էցէ, եւ վ͞ս հարկի սովոյն առա
տապէս վաճառեսցէ, եղու ոչ խնայ
եսցես, այլ առնուս առանց խղճի.
այնպէս համարեսցիս իբրեւ զայն՝ որ
աղքատին ոչ տայ, այլեւ առնու եւս
'ի նմանէ: Նա՜ քանզի մեծատունն՝
աղքատին ինչ ոչ ետ. բայց եւ ոչ էառ
'ի նմանէ. եւ այնպէս սպապակէր 'ի մէջ
հոյն, մինչ զի կաթիլ մի ջրոյ ծագիւ
ճկոյթանն կարօտանայր. ապա որ առ
նու յաղքատէն եւ զրկէ զնա, զի՞նչ
արդեօք լինիցի. ո՞չ ապաքէն չարա
չար տանջեսցի. այնպէս եւ այն համա
րեսցի, որ զաղքատն 'ի վաճառն զըր
կեսցէ: Իսկ այն որ վ͞ս արեան իւ-
րում, եւ կամ վ͞ս գերու͞է վաճառէ
առատատա͞պս, եղնօղն ոչ խնայէ, այն
պէս համարեսցի՝ եթէ զգերի վա-
րեալն զրկեաց. կամ զայն որ 'ի սպան
մանէ երկեաւ, կամ 'ի տանջանաց. եւ
նա 'ի սպանանելն յորդորեաց եւ 'ի
տանջելն:          (Որբյու-ձն)
Եթէ ոք գտանէ ինչս եւ քարոզն բո-

զոքէ և դատողն խորէ և զկեանս տացէ աղքատաց, օգտի՞ այնպիսին թէ ոչ։

(Պատասխանի)

Եթէ բողոքն ոչ բողոքէ, եզր ընչիցն ոչ ճանաչիցէ, թէ եզամ դատէրն ծախիցէ 'ի պէտս կարօտելոց, դատապարտի և ոչ օգտի. թէպէտ յափշտակել զինչս մարդոյ թէպէտ գողանալ. այլ թէպէտ եդաւեր և ոչ դարձուցանես անդրէն, այնպէս համարեսցի որպէս զյափշտակեալն. այլև 'ի քոյոց ար-դար վաստակոյ եթէ տացես՝ ոչ ինչ օգտեսցիս. եթէ զդատեալն ոչ հատուցանես, եզ յափշտակէլն եզրկեալն թէ եզչորեքկին ոչ հատուցանես ըս զակքէին, դոնէա զառեալն թերևս հատո՛ւ՝ եւսպա տուր 'ի քոյոց վաստակոցն, և ընդունելի լիցի։

(Հարցումն)

Զիա՞րդ համարեսցի ողորմութիւն որ չունի. կամ՝ այն՝ որ ինչ սակաւ ստացեալ է, կամ այն՝ որ այլ առաւելոց, կամ որ մեծատուննէ, կամ որ բնաւ յոյժ փարթամ է։

(Պատասխանի)

Պէսպէս իցէ ասել յաղագս այդմիկ։ իցեն մեծատունք զի ստացեալ են ինչս բազումս, եւ զինուորս յաղագս պատերազմաց։ Արդ՝ պարտ է զպէտս կենաց զինուորացն պատրաստել, եւ ապա զայլն առատապէս բաշխել աղքատաց եւ կարօտելոց։ ոչ որպէս փարիսեցին՝ որ զտասանորդս միայն տային, այլ առաւելապէս եւ ըստ հրամանի Տեառն՝ որ ասէ, թէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր առաւել քան զդպրաց եւ զփարիսեցւոցն, ոչ մտանէք յարքայութիւն Աստուծոյ։ Իսկ որ փարթամ իցէ եւ ոչ է ստացեալ զինուորս եւ ստորականս ՚ի պէտս պատերազմաց. այլ ունիցի որդիս եւ ազգականս, որպէս եւ պահանջէ գութ եւ բնութիւն մարդկան, պարտ է ածել ՚ի մէջ զամենայն ինչս իւր, եւ զատել զբաժինս որդւոց իւրոց եւ ազգականաց՝ ըստ մարգարէին բանի որ ասէ. եւ յընտանեաց զաւակի քո զակն մի՛ արկանիցես. եւ զբաժին անձին իւրոյ զա-



տու

տուցանել. և զպայըն ա՟մ տալ աղքատաց
ևմի՛ պահել և շտեմարանել ագահու-
թ՟ե. զաւէլորդս ընչից։ Իսկ որ չքա-
ւորն իցէ՝ ևմիայն տամբ խուրով բա-
ւականասցի, ամ յամէ զոր ինչ և
տալ կարասցէ ընդունելի է. ապա և-
թէ պակասեցուցանէ զիւր մասն և
տալ աղքատաց, կարի իսկ մեծապէս
պսակեսցի։ Իսկ որ բնաւ չքաւոր է՝
և յայնժամնէ զիւրն հնարեսցի ինչ 'ի
պատճառ կենաց ևտաշէ անտի, այն
պէս համարեսցի նմա՝ ո՟պ մեծատանն
որ զքազում ինչս տայցէ։ քանզի որ
ստացեալ ունէր բիւր տաղանդ ոս-
կւոյ, ևորս ստացեալ է փոքր տասն՝ և
բաշխեսցէն զայն աղքատաց, հաւա
սար համարեսցի առ ա՟ծ. և զայս յայտ
արասցէ երկու լումայն այրւոյն՝ զոր
էարկ 'ի գանձանակն։ Զի ո՟պ մեծա
տունն, որ զա՟մ ինչս իւր ետ աղքա-
տաց, այնպէս և չքաւորն զիւրն ա՟մ։
Իսկ՝ որ առաւել քան զպէտս իւր
ստանայ՝ և առաւել քան զպէտս որ-

դեաց, արծաթասէր է այնպիսին: և
Պօղոս զարծաթասէրն՝ կռապաշտ է
ասացեալ. քանզի արմատ և մայր է
ա՟մ չարեաց: զի աստի ծնանին զրկու-
թի՟, ագահութի՟, անիրաւութի՟, յափշ-
տակութի՟, անողորմութի՟, ատելութի՟.
քանզի արծաթասէրն՝ ատէ զմեծա-
տունն, ատէ և զաղքատն: Զմեծա-
տունն ատէ, զի զա՟մ ինչս նո՟ ցան-
կայ արկանել ’ի գանձս իւր: Զաղ-
քատն ատէ, զի մի՛ եկեալ խնդրեսցէ
ինչ ’ի նմանէ: Զտուօղն ատէ, զի մի՛
դուցէ քան զոր ինչ եբերն՝ աւելի
ևս խնդրեսցէ ’ի նմանէ: Զխնդրօղն
ատէ, զի ամենևին մի՛ պահանջեսցէ
ինչ ’ի նմանէ. ծառայ է ընչից իւրոց
և ոչ տէր. զի ոչ ’ի ոմնէ երկնչի ծա-
ռայն հուպ լինել նմա, այնպէս և
արծաթասէրն յինչս իւր մերձենալ
ոչ իշխէ:

(Հարցուածն)

Եթէ մեռանի ոք և կտակ գրէ, զի
զա՟մ ինչս իւր տացեն աղքատաց,

ունի՞ վարձս արծաթակերն թէ ոչ։

(Պօղոսեանէ)

Ո՛չ կարծեմ ոչ ունի․ քանզի այն՝ որ ՚ի մահճիս մահու անկանի եւ կտակ գրէ, զի զա՛մ ինչս իւր տայցէ աղքատաց․ պէսպէս իցէ իմանալ զայն պիտանացն․ զի եթէ ունիցի ոք երամակս ՚ի ծնունդս, եւ խաշինս եւ արջառս եւայլ ինչ զոր ժողովեսցէ վաստակոց․ եւ հանդիպի մեռանել եւ ունէր սովորութի՛ն յա՛մէ տալ աղքատաց ՚ի կենդանութե՛ իւրում․ եթէ ՚ի ժամանակի մահուն կտակ ոչ տայցէ յետ մնացելոցն վա՛ն աղքատաց, զայնպիսւոյն թէ զող գողանայ, կամ այլազգիք յափշտակեն․ եթէ այլ ոք առնուցու զա՛մ, ա՛ծ իւր հոգւոյն համարի․ ո՛չ թէ ձեռօք իւրովք ետ աղքատաց․ վա՛ն զի թէ լեալ էր ՚ի կենդանութե՛, եւ զայն եւս յիւրաքանչիւր տարւոջ տրճեալ էր կարօտելոց․ սակայն որչափ տալոցն իւրով արժանաւորեալ էր պատուոյ եւ հանդստեան, որչափ ա-

 ձեռին

ճեցին եւունք ընչից նոր. թէ տացեն
մնացորդքն եւ եթէ ոչ տացեն՝ Ած
այն չափովն առաւելագոյնս պատուհաս
ցէ զնա ՚ի կեանս յաւիտենից։ Ապա
թէ արծաթ սիրութեան ըմբռնեալ էր
եւ ոչ ունէր սովորութիւն տալ թէ եւ ինքն
իսկ ՚ի ժամ մահուան զամ ինչս իւր
բաշխեսցէ՝ հազիւ օգտեսցի. թող թէ
կտակ արասցէ, զի տայցեն աղքատաց։
Զի որ կտակ արասցէ՝ եւ ձեռօք իւ
րովք ոչ տայցէ, զայն իսկ ածէ զմը
տաւ. զի թէ ապրեսցի՝ վայելեսցէ
մարմնովն։ Այլ զի հնար ոչ է առնուլ
ընդ իւր զամ. վասն այնորիկ ասէ տալ
զայն աղքատաց։ Ոսկ. երանելին ասէ.
գանձէ եւ ոչ գիտէ ում ժողովէ։
Զի ոչ թէ ՚ի մեռանելն իւրում՝ առ
ցէ ընդ իւր զամ։ Այլ արդ՝ յորժամ
զմտաւ ածէ՝ թէ իմ ոչ է, եւ ընդ իս
հնար ոչ իցէ տանիլ եւ ապա տայցէ,
զինչ օգտեսցի։ Զոր օրինակ եթէ
ոք ստացեալ է ինչս բազումս եւ խնդ
րեսցէ ոք ՚ի նմանէ զամ օր, եւ նա ոչ
տայ.

տայ · ապա յետոյ մեռանի և Թողու զամ ինչս իւր, և ապա եկեալ յափշ տակեսցէ խնդրողն, որոնեսցէ զնա, ևչ։ այնպէս ևզայն համարեա՛։

(Հ[illegible])

Ահ կխարդ ոչ օգտի յորժամ որդիքն նր յետ մնացք նր առնեն վս նր ո ղորմութն առատապէս և պատարագ։

(Պատարագին)

Պատարագն յոյժ օգտէ մեղաւորին. զի թէ 'ի կենդանութ որ ոչ էին հաշտա ցեալ 'ի ձեռն զոհիցն և արեամբ պա տարագացն, ակն ունէին հանդիստ գտանել ննջեցեալքն. որչափ ևս ա ռաւել ապա 'ի ձեռն որդւոյն այ, որ վս ամ մեղաւորաց զենաւ և մա տուցաւ հօր պատարագ. ինքն է որ մատչի, և ինքն է որ մատուցանի, և ինքն է որ ընդունի. և յորժամ յիշի անդ ննջեցեալքն, օգտի մեծապէս եթէ ոք բարեպաշտութբ մեռանիցի. ապա եթէ ոք մեղօք և ամբարշտութբ մեռանի, փակեալ է ած նմա զամ



փրկու

փրկութն։ Իսկ յաղագս ողորմութե զոր
առնեն նմա, կարծեմ թէ ոչ օգտես-
ցի ինչ։ Զոր օրինակ եթէ ոք ստա-
ցեալ իցէ ինչս բազումս և ոչ է տըր-
ւեալ անտի բնաւ կարօտելոց. և ոչ
ընծայս մատուցեալ Թագաւորին. ա-
պա յորժամ մեռանի, ժառանգորդք նո-
ինչս բազումս տայեն Թագաւորին,
և այլ խնդրողացն, ո՛չ համարեսցի
երախտիս. երթեալոյն՝ եթէ տուողին.
քաջայայտ է եթէ տուողին։ Ապա ե-
թէ ոք ոչ իցէ թողեալ ինչս բզ̃ումս
և մեռանի, և որ յետոյ մնասցէ յընչից
իւրոց՝ յաճախապէս տացէ. զոր օրի-
նակ Թագաւորն արկանէ զոք 'ի բան-
տի վս̃ մեղաց իւրոց՝ և տարեալ ոք
ինչս բազումս, տայէ Թագաւորին.
և աղաչէ զԹագաւորն՝ զի արձակեսցէ
զնա 'ի կապանաց բանտին. նաև թէ
ևս լուծիցէ նմա։ Ապա եթէ զինչսն
զայն զոր Թագաւորն խնդրեալ է 'ի
նմանէ, և նա ոչ ետ. և վս̃ այնպիսի ար-
կեալ իցէ զնա 'ի բանտ. և զայն տա-



ցէ՝

ցէ՝ ոչ լուծիցէ․ զի ակամայ տայ՝ զոր
կամաւ իւրով ոչ ետն։

(Հորդուհն)

Իսկ որոյ սիրտն ողորմած է և գալա րի՝ և աղէտն յորդորէ տալ և այնպիսին տայ աղքատաց, ընդունելի է․ եթէ այն որ սիրտն ոչ է ողորմած, և բնութեն կապէ զտալն, և նա յաղթէ բնութեան վասն ահի գեհենին, առնէ զողորմութիւն աղքատաց։

(Պոփոսխոսի)

Երանի ասէ ողորմածաց, զի նոքա զողորմութիւն գտցեն։ Այլ է որ ի բնութենէ առաքինութիւն, և այլ է որ մարտնչի ընդ բնութեան և յաղթէ․ քան զի առաքինութիւն՝ մարտ խնդրէ․ և եթէ յաղթէ մարտին՝ ապա պսակի։
Ոչ եթէ ա՛ւարտեմ զայնպիսին, որ բնութեամբ ողորմած լինի․ զի զայնպիսին բնութեամբ յորդորէ յառնել և առանց դիմամարտութեան յաղթէ պատերազմին․ և յաղագս ներքինեացն ուսուցանէ մեզ բանք սբ Աւետարանին։

 Ըն

Են ասէ ներքինիք՝ որ յորովայնէ
եղեն ներքինիք․ և են ներքինիք՝ որ
վ̅ս̅ արքայութ̅ե̅ ա̅յ̅ արարին զանձինս
իւրեանց ներքինիս։ մինն ՚ի բնութ̅է̅,
և միւսն բռնադատեալ ՚ի բնութ̅է̅ն, և
այնպէս դիմամարտեալ յաղթեաց
ախտին․ զոր օրինակ չ՚նկայ ոք կնոջ
գեղոյ՝ և նա ընդդէմ կայ ցանկութ̅ե̅
և յաղթէ և ոչ կատարէ զգործ շնութ̅ե̅,
կամ այլ ինչ ցանկութ̅ե̅ն Ճակն․ այն
պէս և որ ցանկայ ընչից և յաղթէ, և
զայն տայ աղքատաց։

(Հարցումն)

Եթէ տայ ոք ինչս աղքատաց, և նա
զտուեալն ընդունիցի, ելնու զկարօ
տութ̅ի̅ իւր՝ որ ինչ և իցէ իւր բաց ՚ի
կերակրոյ․ և տուողին պէտս ինչ ոչ
իցէ, զի՞նչ համարեսցի այնպիսւոյն
տուրքն։

(Պատասխանի)

Ո՞վ պատարագն կայենի, որ զանպի
տանն եղմտխտն մատուցանէր․ զոր
օրինակ ՚ի տեղւոջ միոյ լինիցի նիւթս
ինչ

ինչ բազում որ ոչ է ՚ի պէտս մարդ-
կան, այնպէս և ՚ի տեղւոջ մի՝ այլ զի
ոչ լինիցի անդ բնաւ ևտայցէ անտի
նմա. և նա որ էառն մեծամ՟ս ուրա
խանայ ՚ի վ՟րա ն՟ր. և տոճողէն ամենևին
ոչ երևեսցի բնաւ թերութ՟ի կամ
տալն դժուարութ՟ի: Ապ՟ եթէ ոք ու-
նիցի որդի խեղ և անդամալոյծ, և
կամ բորոտ կամ գոյժ: Ոչ միւս այլ
ոմն որդի գեղեցիկ և վայելուչ և ա-
րիաբար՝ և երկոքեան մեռանիցին.
ապա՝ եթէ ՚ի վ՟րա գեղեցիկ մանկանն
համբերեսցէ արիաբար՝ և դիմամար
տի գթոյն եզոհութ՟ առանց սգոյ և
կոծելոյ տայ՝ մ՟յ պսակեսցի ո՟պ զե-
րանելին Յոբ: Իսկ այն որ զորդին
անդամալոյծ ևդոդի, ոչ ապաշաւէ
և ոչ լայ. և ոչ խռովլին ազիք իւր ՚ի
վ՟րա ն՟ր, և զորոյն ոչ տոչորէ զնա. և
վ՟ս այնորիկ ոչ լայ և ոչ կոծի. մի թէ
զայն իսկ յաղագս առաքինութ՟ն հա
մարեսցի ա՟ծ. ո՛չ: այնպէս և զայն հա
մարեաց, որ զայն իսկ տացէ ազգա-



տաց,

տաց, որ 'ի պէտս իւր ինչ ոչ իցէ։

(Տուրգուտն)

Զբազում տեսաք զի թողին զինչս եզանողեայս՝ որ շատ եւ որ սակաւ, եւ երթեալ կրօնաւորեցան, եւ այլք յափշտակեցին զայն․ արդ՝ ո՞չ էր լաւագոյն բաշխել զայն աղքատաց․ քան աւար տալ այլոց։

(Պատասխանի)

Ո՞վ ասացի զի այն իրքն որ 'ի պէտս մարմնոյն ոչ էր եւ զայն տալ աղքատաց, ոչ համարեսցի ողորմութիւն առաջի այ, այնպէս եւ այդ․ քանզի թէ սիրէր նա զինչս իւր եւ 'ի պէտս էր նմա, սակայն չէր թողեալ․ եւ եթէ աղքատաց էր բաշխեալ, այնու առաւել վարձս ոչ էր առեալ․ այլ այնպիսին եթող զամս եւզինչս զայս ընդ ամիս ո՞վ զշինուածս տան եւզքարինս․ այնպէս եւզոսկին եւզարծաթն եւզայլ ինչս մեծագինս իբրեւ զքարինս համարեցաւ՝ եւ զքարինս տալ աղքատաց, զի՞նչ վարձք իցէ․ իսկ այնպիսին լաւ հա



մարե

մարեցաւ վ՟ս ք՟ի աղքատանալ, քան
զաղքատս կերակրել։
(Հորյ–Ժն)

Իսկ որք զինչս ոչ թողին․ այլ ա-
ռեալ զկէսն ետուն աղքատաց, և զդ
կէսն առեալ ետուն 'ի վանս հուշա-
կաւորս և անդ կատարեցան, այնպի
սեացն զի՞նչ իցէ պարգևս։
(Պատասխանի)

Զոր օրինակ՝ թագաւորք ոչ եթէ
զինուորօք պատերազմողականօք մի
այն բաւական առնէին, զի յաղթե-
ցին մարտին․ այլ ունեն ոմանք ա՟վէ
րակացուք քաղաքաց․ ոմանք ժողո
վրդեան, ոմանք 'ի վ՟ր սպասաւորու-
թե, ոմանք 'ի վ՟ր գանձուց, և այլք
'ի վ՟ր ընչից։ ոմանք 'ի վ՟ր երամակաց,
և այլք բազումք 'ի վ՟ր բ՟զ՟ում իրաց․
և ա՟մ՟ք՟ն վ՟ս հաճոյիմ լինելոյ պատ
ուին 'ի թագաւորէն։ Նոյնպ՟ս և որք
կամեցան առաքինութ՟բ ծառայել
զ՟յ՟ · ոմանք արհամարհեցին զ՟ա՟ս՟
և որ ինչ յ՟ա՟խս, 'ի նոյնէ ա՟ծ ողորմու



թն

Թէ ոչ պահպանիցէ։ Իսկ ոմանք սիրե
ցին զԱծ և առաւտապէս ողորմութե
առաքինիք երևեցան․ աստէն վայե
լեցին կենօքս այս, և անդ զյաւիտե
նականն ընկալցին․ որպէս երանելին
հարքն Յօբ․ Աբրահամ․ Դաւիթ,
և այլ թագաւորք․ և ոմանք բանին
ըստ Աւետարանական որպ ասաց ցՊետրոս
եթէ, սիրես զիս՝ արածեա զխաշինս
իմ։ Եւ որք սիրեցին ստանալ վանս, և
ժողովել եղբարս, և աճեցուցանել
այնու զքանքարն, և ժողովելէլքն վայ
ելեն ձգնութե զկեանսն յաւիտենից։
Եւ առանց արդեանց՝ ոչ է հնար ըս
տանալ վանք, և կերակրել զեղբարսն,
պարտ է անդ ամ իրայ պէտս լի
նիլ ոսկւոյ և ամ ընչից, զի վաճա
ռեալ ծախեսցեն ՚ի պէտս կենդանու
թե մարմնոյ։ Եւ ոչ եթէ այն՝ որ թո
ղու զբաղմունս Աի և զկէս ընչիցն տա
ցէ կարօտելոց, և զկէսն ՚ի պէտս վա
նացն՝ առաքինի լինի․ այլ և ամ ոք
որ իցեն յաշխս և տացեն ինչս բազումս

՚ի պէտս

’ի պէտս վանաց վարձս քաղումս առ-
ցեն յայլ։

(Հարցումն)

Զի՞նչ լաւագոյն իցէ. աղքատա՞ց
տալ, եթէ քահանայից և վանաց։

(Պատասխանի)

Եթէ քո՞ զաղքատս եղբարս իւր ան-
ոճանեաց, այլ և զքահանայս աթոռա-
կիցս. յորժամ յօժարի ոք զինչս իւր
բաշխել աղքատաց, չէ՛ պարտ և զքա-
հանայս անտես առնել. և յորժամ՝ քա-
հանայից տայ, չէ՛ պարտ զաղքատս
անտես առնել։ Իսկ եթէ երկոցունցն
ոչ է բաւական տալ, ապա լաւ է
յաղքատն տալ։ Զի եթէ զաղքատն
բազումք կերակրեն՝ և զքահանայս
անտես արասցեն ասելով. ոչ են քա-
հանայքդ կարօտ կերակրոյ։ Զի սո-
վորութի՟ է ա՟մ՝ մարդոյ առաւելա՟պս
պատուել զքահանայն՝ քան զաղ-
քատն. նա իսկ եթէ զաղքատն կերակ-
րեսցէ և քահանայն ո՛չ, այլ համա-
րեսցի զպատիւ քահանայից հաւա-

 սար

սար կերակրելոյ աղքատին։

(Հորյուհն)

Արդ՝ լաւ է աբեղայ լինել, եթէ ընդ ամուսնոյ բնակել և առնել զգործս բարիս։

(Պորտուխոնէ)

Բազում ինչ է 'ի պէտս այդմիկ իրաց ասացեալ։ Արդ՝ բազում է պատերազմ սմին ընդ ազգս մարդկան. և առաւելապէս ընդ ջոկս կրօնաւորաց և առաւելապէս ախտին շնութեան մարտնչի ընդ բազումս. և իցեն ոմանք ճականք զի ամուսնին են, եղեռևս առաւելապէս շնան. և են ոմանք զի բաժական լինին ամուսնին, և ոչ պահեն զանկողինս իւրեանց։ Այլ են ոմանք զի ոչ ամուսնանան, և այնպէս վարեն զկեանս իւրեանց, իբր թէ՝ ամուսնացեալք իցեն. մանաւանդ թէ այլ ևս վատթարագոյն և անկարգ վարուք. և այնպէս յաղթեալ գտանին 'ի սմին յաղագս անառակութեան իւրեանց։ Իսկ որք ամուսնացեալք իցեն,

ցեն, հնար է ապրիլ 'ի մարտիկս յայս
յանէ. Եւ եթէ այլ ինչ առաքինութիւն
ստացեալ իցէ, վայելեսցէ այնու ըզ
կեանսն յաւիտենից։ Իսկ որ կրօնա
ւոր լինի՝ եւ զամենայն առաքինութիւնս գոր
ծեսցէ՝ եւ այն աստիճան պատուի եւս առա
լէ, յարքայութեան 'ի սմանէ. եւ այլ բազում
ինչ իցէ լաւ կրօնաւորաց քան զաշխարհա
կանաց։ Զի աշխարհականք առանց լծոյ
կրօնաւորաց, կարողանան վայելել
զկեանսն յաւիտենից. բայց կրօնա
ւորն եթէ աշխարհական գործով զբաղես
ցի, եւ ոչ կայ 'ի կարգի սահմանադրու
թեան սրբոյ հարցն, զոր մեզ աւանդե
ցին. ապա յայտ է թէ դատապարտես
ցի։ Են ոմանք զի յորժամ տեսանի
ցեն զայր ոք՝ զի իցէ առաքինի եւ բա
րեգործ, ապաստան լինելով յառա
քինութիւն այն, եւ ապա յորդորեն
զնա լինել աբեղայ. եւ յորժամ լինիցի
ոչ կարէ կրել զկարգ կրօնաւորու
թեան, եւ այնու յառաջին փառացն ան
կանիցի եւ դատապարտեսցի 'ի դատաս

 տանին

տանին աղ՟որ. զոր օրինակ իշխավար
ուք՝ յորժամ տեսանիցէ զէշ իւր՝ զի
թարձեալ տանիցի տասն արդոյ ցո-
րենոյ, եւ վաղէ երագ երագ. եւ նա վըս
տահացեալ 'ի զօրութի իւրոյն, յաւել-
լադրէ 'ի բեռն նր, եւ նա ոչ զօրէ տա
նիլ զնմ. այլ կործեալ ընդ մէջն հա
տանի այնպիսեն խստութ գաղանա-
կան գործէց՝ եւ 'ի մինե իւրմէ անար
գեսցի: այնպէս եւ այն որ զառաքինի
ուք յորդորէ լինիլ աբեղայ. եւ յոր
ժամ ոչ զօրէ կրել զկարգ աբեղայ
ութեանն, նա փառաց եւ պատուոյ
կրօնաւորութեն ոչ հասանէ, եւ առա
ջին փառայն կործանի՝ զոր առաքի
նութեն իւրով ստացեալ: Ս՟ Ծեր
ասէ զառաջին առաքինութին կորու
սանէ: Լուր ասէ՝ եթէ հարցանես եւ
յառակէ յայսմանէ, հաւանեցուցից
զքեզ: Զոր օրինակ լինիցի թագա-
ւորի սպասաւորս բազումս 'ի պէտս
սպասաւորութեանս. իցեն ոմանք 'ի
փառս մեծագոյնս, եւ կան հանապազ


առա

առաջի Թագաւորին․ իցեն եւ այլք ո-
մանք ցածագոյն, եւ որըստորէ ապա
տեսանիցեն զԹագաւորն․ եւ այլք խո-
նարհագոյն, եւ յամիսն միայն տեսա-
նիցեն զարքայն։ Եւ կէսք 'ի տարուոջն
միայն տեսանիցեն․ այլ 'ի վ՟ր ա՟մ՟ն
սփռեալ է ողորմութ՟ն Թագաւորին՝
եւ վայելէին զկեանս իւրեանց ուրա-
խութ՟բ։ Իսկ եթէ ոք յայնցանէ ոչ
հաճանեսցի ցածագոյն փառացն այն-
միկ եւ վայելմանն․ այլ ցանկայ ընդ-
մեծամեծս դասաւորիլ եւ հանապազ
լինել առաջի Թագաւորին․ եւ երթեալ
յանձն առնուցու զի մեծագոյն ծա-
ռայութ՟ն արասցէ նմա, եւ խոստանայ
մեծգոյն չափս բերել Թագաւորին․
եւ ապա սկսեալ եւ ոչ կարասցէ կատա-
րել զըսպասաւորութ՟ն զայն․ եւ բար-
կացեալ Թագաւորն աքսորեալ կոր-
ծանեսցէ զնա․ ահա առաջին
փառացն անկաւ, եւ յետին
փառացն ոչ հա-
սաւ։

(Հարցումն)

Ընդէ՞ր ապա ասաց Ք͞ս թէ, որ ոչ թողու զհայր իւր և զմայր, զկին և զագարակ, չէ ինձ արժանի։

(Պատասխանի)

Ասաց թէ, զոր Ա͞ծ զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ։ Ո՛չ այդպէս ասացեալ է զի իւրաքանչիւր վայրապար թողուցու զկին իւր և զորդիս, և զհայր իւր և զմայր։ Զի թէ այդպէս էցէ թողուլն ո՛պ դու կարծես, ապա բազումք թողեն զհայր և զմայր, և գնացին 'ի պեսպես գործս։ Թէ այդպէս էր թողուլն ո՛պ դու կարծես, ապա զկինն միայն էր ասացեալ և ոչ զհայր և զմայր. այլ ոչ այդպէս, այլ ո՛պ ասէ Ք͞ս. որ կորուսանէ զանձն իւր, եգիտ զնա. և որ գտանէ զանձն իւր, կորոյս զնա։ Արդ՝ ո՞վ կորուսանէ զանձն իւր. կամ ո՞ որ ոչ գտանէ. կամ զի՞արդ հնար է ումեք զանձն իւր կորուսանել. կամ զի՞արդ հնար է ոչ գտանել զօրհանապազ ընդ իւր

ունի ա՟մ մարդ։ Այլ կորուսանէին
այսպէս էին․ զի որպ՟ս թէ ոչ է ստա_
ցեալ մարմին, այնպէս հոգս արա_
ցէ անձին իւրում․ եւ առաւել սիրես
ցէ զգործս ա՟յ՝ եւ զգործ հոգւոյ իւ_
րոյ, քան զգործ մարմնոյ իւրոյ․ այն
պէս եւ այն՝ որ ասէ․ եթէ ոչ թողու
զհայր իւր եւ զմայր՝ ոչ է իմ արժանի․
Նաեւ զկին եւ զագարակ։ Այսպ՟ ասէ․
մի՛ սիրեսցես այնպ՟ զկին քո, զի զա՟մ
ինչս նմա տացես՝ եւ քն՟ ոչ․ կամ սի
րել առաւելապ՟ս զհայր կամ զմայր
քան զք՟ս ։ որպ՟ եւ ինքն ասէ թէ, որ
սիրէ զհայր կամ զմայր առաւել քան
զիս՝ չէ ինձ արժանի․ ո՞չ ապաքէն
ասէ գիր, սիրեա՛ զհայր քո եւ զմայր,
եւ աստ ասէ թէ՝ թո՛ղ զհայր քո եւ զմայր
անդ ասէ՝ զոր ա՟ծ զուգեաց, մարդ
մի՛ մեկնեսցէ, եւ աստ՝ թողուլ ասէ։
Զի՞նչ էիցէ ապա ասացեալս․ ոչ եթէ
ուրանալ եւ ատել, այլ եւ ոչ զա՟մ սէր
առ ն՟ս հաճաքել եւ զինչս, եւ զք՟ս ան
տես առնել․ եւ այնպէս ոչ բաժանել

զոր ած զուգեաց. այլ և ո՛չ թողուլ
զպատուէրանս տն, և կապել բնաւ
ընդ ամուսին ։ Իսկ եթէ կրօնաւո-
րաց միայն է պատրաստել արքայու-
թիւնն երկնից՝ և կանամբեացն ո՛չ,
ապա սուտ էին վայելողք նր։ Ո՛չ
ապաքէն նահապետքն ած կանամ-
բիք էին. Մովսէս, Դաւիթ, և այլ
ած մարգարէքն. եղարձել Ենովք
Նոյ, և առաքեալքն. այլ ո՛չ էին այդպ։
բայց վկայութբ սբ գրոց՝ և հրամա-
նաւ առաջնորդաց՝ արժան է առնել
զած զկամսն նյ . այլ կրօնաւորաց
լուծն ծանրագոյն էր. մեռուցանել
պարտ է նց զցանկութիւն մարմնոյ.
ո՛չ եթէ զի ոչ ուտիցեն, այլ զոր օրի
նակ մեռեալն՝ եթէ անարգես զնա,
ոչ վրդովանայ. եթէ բամբասես սուտ,
ոչ խօսի և ոչ դժուարանայ. եթէ
հարկանես՝ ոչ դարձուցանէ զերեսս
իւր. եթէ պատուես՝ ոչ հպարտանայ.
եթէ տեսանէ դէղ երեսաց՝ ոչ ցան-
կայ. եթէ ապտակես՝ ընդդէմ ոչ դառ-
նայ

նայ, եւ ոչ ոխս պահեսցէ. եթէ մեծա րես՝ ո՛չ փքանայ. քանզի կրօնաւոր՝ որ աստ պատուոյ ցանկանայցէ՝ յանանց եւ յանվախճան բարեացն զրկեսցի:

Ոչ զի՞նչ աստայից ցանկալ պատուոյ, այլ թէ բռնութ հարկեն ՚ի պատուել՝ պարտ է հրաժարել. զի յորժամ այսմ ոչ ցանկայ, յանանց եւ անսպառ պատուոյն այն հասանիցէ եւ փառացն:

Այնպիսի է լուծ կրօնաւորացն. մի՛ խնդրեր փառք ՚ի մարդկանէ. մի՛ ցանկար ոսկւոյ. մի՛ արծաթոյ. մի՛ նախանձ չար ունել ընդ ումեք. մի՛ ըստանար ստացուած ինչ. մի՛ ձի. մի՛ ջորի. եւ մի՛ ինչս մեծագինս: Եթէ անսցեն քեզ՝ չնայցես, խոստովանեա՛ եւ ասա՛, այո՛: եւ մի՛ երդնուցուս՝ որ չափ եւ սուտ ասեն. թէ ասեն սպաներ, սոյնպէս յանձին կա՛լ. ո՛չ է պարտ հրաժարել, այլ խոստովանել. եթէ հարկանելով հարկանեն, համբերեա՛. եւ այլն ամ որ ինչ ՚ի կարգին է, զոր մերն հրամայեաց: Իսկ եթէ աշխար_



հական

հական ոք՝ զայս մտմ ոչ արասցէ. այլ
պարտ է ստանալ նմա ձիս և ջորիս,
ոսկի և արծաթ, զի վարեսցէ 'ի պէտս
հիւծելոց, և արասցէ պատերազմ. այլև
'ի պէտս սպասաւորաց իւրոց պարտ է
գնալ 'ի հանդէսս. պարտ է նստիլ
նախագահ. զի անհնարին է թագաւ-
որի, կամ իշխանի, կամ դատաւորի,
կամ մատակարարի, կամ տանուտէրն,
կամ այլ ոք յայսպիսեացս այն, այլ
վերագոյն նստել։ Իսկ յայսպիսեացս
աստի զոր թուեցաք, եթէ ոչ չնայ,
ոչ սպանանէ, ոչ զրկէ, ոչ սուտ վը
կայէ, ոչ արբենայ, ոչ աղահէ, ոչ
նախանձի ընդ ընկերին, և ոխս ընկե
րին ոչ պահէ, և զնախատութիւն և
զհպարտութիւն յանձնէ 'ի բաց ձգէ.
և որպէս պարտ է, ողորմութիւն գործեսցէ,
նա ասէն վայելէ կենօքս այսուիկ,
և անդ՝ զկեանսն յաւիտենականս ժա
ռանգեսցէ. միթէ կարիցէ ասել թէ,
թագաւորն Կոստանդիանոս ոչ ու-
նէր ձիս և ջորիս, և ոչ գանձս բազումս.



ոչ

ո՛չ եթէ պղնձի գօտի միայն ստացեալ
էր, այլ թագաւ՟ ոսկւով պայծառա-
գունիւ՟ զարդարեալ, եւ կամբք պա-
տուականօք, եւ եդեալ 'ի գլուխ ի-
րում. նաեւ զբազումս խրատէր նստել
բարձրագահ՝ պճնելովք. եւ բիւրք
բիւրուց առաջի նր՟ երկիրպագանէին՝
եւ հազարք հազարաց պաշտէին զնա.
եւ ասա զթագաւորութիս անցաւորս
վայելեաց, եւ նդ զանանց թագաւո-
րութն։ Նոյնպէս եւ թքրն Թէոթոս
եւայլք բազումք. եւ զի որդ, լուր.
զի առատամիտ ողորմութն արարին.
եթէ ոք մեղանչէր նց, անտես առ-
նէին. եթէ այլոց մեղանչէին, մեծա-
պէս վրէժ խնդրէին. զոք 'ի մարդկա-
նէ ոչ զրկէին. հեզութն եւ խոնար-
հութն ստացեալ ունէին. զաղօթս
եւ զպահս անտես ոչ առնէին. ո՛չ ար-
բենային եւ ո՛չ շնային. ո՛չ նախանձէ-
ին ընչ՝ց մեծամեծաց. զքահանայս
սիրէին. զեկեղեցիս պատուէին. մե-
ղանչականին բարի գործէին։



եղև

Ուղև երբեմն՝ զի առաքէց Կոստան-
դիանոս բարեպաշտ արքայն զօրինակ
պատկերի իւրոյ 'ի Թեսաղոնիկեցիսն՝
զի երկիրպագանիցեն նմա, և նոքա
ծուղրեալ քարկոծ արարին զպատ-
կերն զայն. և եկեալ պատմեցին ար-
քային, և այլ բանս ինչ չարախօսէին
զնոցանէ, ո՜վ սովորութիւն է խօսել
այնպիսեացն, զի զայրացուցանիցեն
զԹագաւորն 'ի վ՟ր նց: իսկ նա Հե-
ռեալ իւրովք շօշափէր զճակատն
եզերեսս իւր, և ասէր. ո՞չ գտանեմ
աստ վիրաւորութիւն ինչ. և զի՞
ասէք՝ եթէ հարին քարամբք զպատ
կերս քո. և այնպիսի առաքինութեն
վարեալ զԹագաւորութեն իւր՝ զա՟մ
աւուրս կենաց իւրոց, և զարքայու-
թեն երկնից ժառանգեալ է 'ի Ք՟ս
Յ՟ս 'ի տ՟ր մեր որ է օրհնեալ յա՟տ՟նս:

(Դարձուած)

Զի՞ որդ ասէ Ք՟ս թէ, դիւրին է մալ
խոյ ընդ ծակ ասղան մտանել, քան
մեծատանն յարքայութեն ա՟յ մտանել:

(Պատասխանի)

Զոր ասէքդ իմացաք հաստուքեցաք 'ի զօրութէ դրոց· զի առ Նախանձու մարդկան ասաց զայդ քո՛· զոր օրի նակ՝ եղեալ լինի ուրեք, իրս ինչ սքանչելիս պատուհական, և թագաւ որն ասասցէ՝ եթէ որ զայդ իրս կարէ առնուլ, նա է այր սքանչելի, և նա ժառանգեսցէ զթագաւորութիւն իմ· բայց անհնար է ումեք գործել զայդ· և որք լսեն՝ իւրաքանչիւր ոք ջան դի ցէ առնուլ զիրսն զայն՝ և հասանել պատուոյն· սոյնպէս և քո զայդ վն այդորիկ ասաց, զի այդպս Նախանձ 'ի մէջ անկանի, և ամ մարդ ջանս դնէ առնել զբարիս· քանզի դիտէ քո՝ թէ բազում մեծատունք ժառանգեալ են զարքայութին երկնից։ Նախ յառաջագոյն· որպ Աբրահամ· Իսահակ· Յակոբ· Յովսէփ· Դաւիթ· և այլք բազումք· բայց վն այնմիկ ասաց՝ զի այնպէս զարմանալի է յոյժ յորժամ մեծատունն գործ ինչ բարի

վն արքայութե արասցէ, եբրև ընդ-
ծակ ասղանն մտանել, այնպէս զար-
մանալի է. ո՞չ այլ ուր ասէ. քանզի
նել և անձուկ է ճանապարհն որ տա-
նի 'ի կեանսն. այնպ նեղուբ՝ և շատ
պարտ է մաշել մալխոյն, և ապա ան-
ցանել ընդ ծակ ասղանն. և այնպէս
նեղութբ պարտ է մեզ՝ մտանել յար-
քայութին երկնից:

(Հարցումն)

Ե՟ ապա յորժամ այդպիս դժուարաւ
մտանել մեծատունն յարքայութիւնն
երկնից, ընդէ՞ր ասեն թէ՝ հարըս-
տութին յայ է:

(Պատասխանէ)

Ամենայն հարստութի չէ յայ. ում
կամի տայ ած հարստութի. և այն՝
սէր է յայ, և հատուցումն է առաքի-
նութե. բազումք 'ի հաւատացելոց
խորհին 'ի սիրտս իւրեանց՝ և արասցեն
ողորմութի. պահք, և աղօթք, և այլ
առաքինութի. զի տայցէ նմա ած
հարստութի. և ած ըստ խնդրուածոցն՝

նց, զի զխնդրուածս նց անտես ոչ
արասցէ՝ զի մարդասէր է։ Եւ են ո-
մանք՝ զի բազում մեղօք լի իցեն՝ և
սիրեն զաշխարհս, բայց զի և ունիցին
յինքեանս գործ մի ինչ բարի, վն
այնորիկ տուցէ ած հարստութն 'ի կեանս
այս, զի անդ՝ զտանջանս ընկալցին։
Լինիցին դարձեալ և այլ ոմանք՝ առա
քինիք, հեզք, և խոնարհք, և ածա-
սերք, և բարի բնութիւնք, ոպ և քս
ասէ. խնդրեցէք նախ զարքայութին
այ, և զարդարութն նր, և այդ ամ
յաւելցի ձեզ։ քանզի յորժամ այն-
պիսի լինիցի, խնդայ և ուրախանայ
'ի լինել զպէտս կարօտելոց. և զարդա
րեալ իցէ հիւրասիրութբ և հեզու-
թբ և խոնարհութբ, որպս երանելի
նահապետքն. Յոբ, Աբրահամ, և
այլ նմանիք նոցին. զի այնպիսեացն
ած տայց զհարստութն։ Իսկ եթէ ոք
ընացող իցէ և ագահ՝ որ է կռապշտ,
և արծաթասէր, և ամբարտաւան, և
բարձրամիտ, որ է չարագոյն քանզամ
մեղս

մեղս և լցեալ լինին շտեմարանք նց՟
ամ՟ ալետոյիւք մարմնոյ, և դու ասես
թէ՝ ած՟ տայ այնպիսեացն զհարստու-
թիւն. ապա դիտեմք զբազումս՝ որք
թողին զած՟՝ եպաշտեցին զգործս ձե-
ռաց իւրեանց, և զայլ ինչ արարածս
վատթարագոյնս. բայց ոչ ամ՟ հարըս-
տութիւն յայ՟ է, և ոչ ամ՟ աղքատութիւն,
այլ ոմանց 'ի տանց հայրենեաց, ո-
մանց 'ի զրկանաց, ոմանց յափշտակու-
թէ, ոմանց յանդուլ և անդադար վաս-
տակոց. և ոմանք ջանս բազումս դի-
ցեն, տոկոսիք եւ վաշխառուօք՝ և այնպս՟
հարստանան. և դու համարձակիս
ասել թէ, ած՟ ետ նմա զհարստութիւն.
և զԱբրահամ և զՅովսէփ և զԴա-
ւիթ ինեւրքս բերես օրինակ. արդ-
ցոյց դու զոք՝ լինել իբրև զԱբրա-
համ հիւրասէր և ածասէր, և ապա
զհարստութիւն այնպիսւոյն յայ՟ ասաս-
ցես լինել. և զայ՟ ասասցես ոչ թէ
դարշելի յաղքատէ անուն, և ոչ տայ նմա
հարստութիւն. կամ ակն առնու 'ի մե-
ծա

ծառանէն՝ և նմա տայ. քանզի բա-
զում արդարք տեսանեմք 'ի մէջ քա-
ղաքայ՝ աղքատք. և բազում մեղաւ-
որք՝ զի են մեծատունք. ապա թէ
ա̃յ էր, և ա̃ծ զհարստութի̃ւ փոխարէն
արդարութե̃ նր̃ տայր, ապա պարտ
էր արդարոցն ա̃մի՝ մեծատուն լինել,
և մեղաւորացն ա̃մի՝ աղքա̃տնալ. բայց
զի՞նչս՝ ա̃ծ հասարակաց տուեալ է.
մեծատանց և աղքա̃տց, մեղաւորաց և
արդարոց. զի զարեգակն և զլուսին
և զանձրևս որ հաւասար ամենեցուն
ծագէ, և ամենեցուն ածէ՝ և տայ:

(Հարցումն)

Ա̃ է՞ր այլազգիք լինէին 'ի հարս-
տութի̃ս, և մեք հնազանդեցելքս 'ի քս̃
բազում անգամ 'ի հալածանս և յաղ-
քատութիւնս:

(Պատասխանի)

Որք ա̃ծապաշտ կարծեն զինքեանս՝
և զորդի ո՛չ ճանաչեն. ո̃պ հագարա-
ցիք՝ և իսմայելացիք, զոր ա̃ծ միան-
գամ օրհնեաց որպէս լուճաք 'ի գիրս.


ա̃ծ

Ած զաւրութեամբ եղայլ նահապետսն
մարմնական օրհնութ օրհնէց, այսպէս
ասելով յաւրութեամբ· բազմութ բազ
մացուցանեմ զզաւակ քո իբրև զաս.
տեղս երկնից, որ զնշան՝ եղնտրէլսն
նշանակէ· և իբրև զաւազ առ եզր
ծովուն, զանհամարսն՝ և զանթիւսն
գուշակելով։ և Իսահակ՝ օրհնեաց
զՅակոբ և ասէ, տացէ քեզ Ած ըղ
ցօղ երկնից՝ և զպարարտութն երկրի·
եւայլն որ 'ի կարգին· և այլ ամ օրհ
նութին նախնեաց՝ յաղագս մարմնոյ
լինէին· զի յայնժամ արքայութին
փակեալ էր և դժոխքն բացեալ, զի
զկնի ասոտ վայելմանս, իջանելոց
էին 'ի դժոխս· զի քն զդժոխս աւե_
րելոց էր, եղնո ազատելոց· զի զժա_
մանակն զայն մինչև 'ի գալուստն քի՝
հոգիք արդարոց՝ և այլոցն ամենուն՝
սպառնալեօք դժոխոյն դառնութե
մեծ կրէին· վն այնորիկ՝ ամ նց ըղ.
ժամանակն զայն մինչև 'ի գալուստն
քր փոխանակ դառնութե դժոխոյն,

զվայելուչս մարմնոյն ասա՛ շնորհեաց
նց։ Իսկ յորժամ եկն Քս՟՝ և մարմնա
ցաւ, և աւերեաց զդժոխս, և եբաց
զարքայութիւն, բարեգործացն զայն
խոստացաւ՝ զոր ակն ոչ ետես, և ունկն
ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ ան
կաւ, զայն պատրաստեաց ած՟ սիրե
լեաց իւրոյ. և զմարմնական վայե-
լուչս անտես արարեալ։ Արդ՝ օրհ
նութիւն տն՟՝ ոչ սպառեսցի 'ի զաւա
կացն օրհնելոց մինչև 'ի կատարած.
բայց վն՟ զի ոչ հաւատայցին յորդի,
ժառանգեսցեն զդժոխսն. և ով ինձ
թուի, վն՟ այնորիկ ոչ օրհնեաց զնս՟
վայելմամբ արքայութե՟ն. զի զայնո
սիկ՝ որ նախ քան զգալուստն Քի՟
որ ինքն էր ազատելոց. և զի մի՛ այ
նոցիկ որք 'ի Քս՟ ոչ էին հաւատա
ցեալք նք՟ վայելեսցեն յարքյուե՟.
զի թէ յարքայութե՟ն զնս՟ օրհնեալ
էր, անհնարին էր ստել հրամանացն նր՟
որ ասացն թէ, երկինք և երկիր անց
ցեն՝ և բանք իմ ո՛չ անցցեն. և վայե


լէին

լէին ամենեքեան յանանց բարիսն՝ տուանց հաճատալոյ յանձնառելի մարմաւորութեն նր. և վս զի բանք նր ոչ անցանեն, մնայ օրհնութին նր'ի վր զաճակաց նր, և լինիցին աստ 'ի բարեկենդանութե՝ և անդ ժառանգեսցեն զդժոխսն՝ զոր եթարձ օրէնքն. և ժառանգեսցեն՝ որք յօրինօքն իցեն։

(Հորացիոս)

Բազումք թողուն զանեղի բնակութե իւրեանց, զի անդ բնակել իցեն մարդիկք չարագործք, և երթիցեն անդ՝ ուր մարդիկք բարեգործք իցեն, օգուտ ինչ 'ի զգաստուէ յայնմանէ։

(Պոփոխանէ)

Բարւոք է զգաստանալ յայնմի տեղւոջէ, այլ զարխաբարն ոչ խափանէ՝ եւոչ մի ինչ վտանգ. իսկ զդանդաղն և զխօթամիտն և ոչ մի ինչ նախանձ յարուցանէ. և յառակէ յայսմանէ հաճան արարից զքեզ, և ապա զօրինակս 'ի մէջ ածից, որ բնակեալ էին 'ի մէջ չարագործաց և ոչ վնասեցան.

 Այլք

և այլք որ բնակեալ էին 'ի մէջ բարե
գործաց և ոչ ինչ օգտեցան ։ Արդ՝
եթէ ոք ո՛չ լինիցի արիաբար պատե
րազմօղ, և բնակեսցէ 'ի մէջ արիա
բար արանց. մի թէ հնար ինչ իցէ՞
յորժամ նոքա պատերազմին և յաղ
թեն՝ նա կարիցէ արիաբար լինել, և
յաղթօղ պատերազմօղ. և կամ արիա
բար ոք՝ որ բնակեալ իցէ 'ի մէջ վա
տասրտաց և խօլթացելոց, և 'ի ժամա
նակի պատերազմաց խօլթամիտ լինել՝
և վատասիրտ և դանդաղկոտ, ոչ ասէ։
Այնպէս և զայնոսիկ համարեայց. մա
նաւանդ՝ զոր օրինակ վատն և դան
դաղն՝ բնակեալ 'ի մէջ արիաբարաց՝
և փախուցեալ լինիցի յերեսաց թշնա
մւոյն՝ նախատի և քամահի յամենեցունց
յանկյցանէ. որպէս և արիաբարն՝ որ բնա
կեալն է 'ի մէջ վատանց և խօլթից՝
յորժամ պատերազմի և յաղթէ, գո
վի յամենեցունց. և ակն ամենեցուն՝ 'ի նա
լինին. և գնա ճանաչեն ամենեքեան
արիաբար՝ և հնազանդին նմա. այնպէս

եւ վատասիրտն՝ այսպէս եւ ծաղր եւ արհա_
մարեալ համարեսցի նա, եւ զնա միայն
ճանաչեն վատասիրտք եւ դանդաղք.
դորին աղապատէ եւ այնոքիկ՝ որ ոչ են
արիաբար ՚ի բարեգործութ՟ն, այլ
դանդաղ եւ խօթամիտ՝ օգտին եւ ոչինչ,
բնակելովն ընդ բարեգործս՝ եւ առա_
քինիս. եւ այնոքիկ՝ որք արդարք են
եւ բարեգործք՝ եւ առաքինիք, ոչ վը_
նասին, բնակելովն ՚ի մէջ արանց չա_
րագործաց։ Զոր օրինակ՝ Յովսէփ
ոչ վնասեցաւ ՚ի մէջ չարագործաց եգ_
գիպտացւոցն։ Ոչ Յովսէփ եւ Նիկո_
դիմոս՝ ՚ի մէջ ա̃ծուրաց քհ̃նյիցն։
Ոչ Դանիէլ եւ երեք Մանկունքն՝
՚ի մէջ բաբելացւոցն. եւ ոչ Ղովտ ՚ի
մէջ սոդոմայեցւոցն. այլեւ զի՞նչ օգտե_
ցան Ոփնի եւ Փինեհեզ՝ որք էին որ_
դիք Հեղեայ մարգարէի, բնակեալ
ը̄ մարգարէի հօրն իւրեանց. կամ
զի՞նչ օգտեցաւ յուդայ, բնակելովն
ընդ քի̃՝ եւ ընդ աշակերտսն։ Նաեւ
սակայն՝ պարկեշտանալ պարտ է,

և զգաստանալ՝ և զգուշանալ 'ի տե-
ղւոջէ 'ի տեղի, և զլաւագոյն տեղին
ընտրել. Թերևս կամ նախանձելովն
զգաստասցի՝ կամ երկնչելովն 'ի մէջ
բարեգործաց պատրաստեսցի 'ի մե-
ղաց, և զղջասցի։

(Հորդու-Հ.)

Բարկութիւն և վեհագոյն յանցանք
լիցին, եթէ չարին չար հատուցանել
ընկեր ընկերին։

(Պոփուխոնէ)

Բարկանայք՝ և մի՛ մեղանչէք ասէ.
զբարկութիւն ոչ ասաց թէ մեղայք,
այլ թէ բարկանայք և մի՛ մեղանչէք.
այսինքն, թէ յորժամ բարկանայք՝
մի՛ զբարկութիւն 'ի միտ պահեսջիք և
ջանաս չար հատուցանել ճարասցես
մեղջզոր ինչ ասէք 'ի խնդրոս ձեր զըղ-
ջայարուք. յորժամ բարկանաս ու-
մեք նանկանիս 'ի վր մահճաց քոյ
եղերևս բարկութիւն վառեալ իցես.
և խորհիս 'ի սիրտ քում եթէ վաղիւն
զայս ինչ և զայն ինչ արարից նմա.

զայն յանկողինս քո գղջացեր, և մի՛
մեղանչէր առնելովն չար։ ահա զի
բարկանալն ոչ է մեղանք․ այլ յոր-
ժամ՝ բարկանաս և զբարկութին պա-
հես ևչար հատուցանես․ քանզի բնաւ
չբարկանալ հրեշտակաց է միայն։ իսկ
՚ի բարկութն մնալ հանապազ սատա-
նայի է գործդ այդ․ համարձակիմ՝ ա-
սել թէ, և ոչ հրեշտակք լինիցին ա-
ռանց բարկութե զոր լուաք եղեալ
առ Զաքարիայ մարգարէն․ քանզի ոչ
հաւատաց զի կին նորա Եղիսաբեթ
անցել էր զաւուրբք իւր, և ինքն յոյժ
ծերացեալ էր․ անհնար համարեցաւ
լինել զաւակ յինքեանց և ոչ հաւա-
տաց․ և վս այնորիկ պապանձեցոյց
զնա ինն ամսեան ժամանակաւ և այն
պէս բարկացաւ նմա հրեշտակն․
զիա՞րդ ապա հնար է մարմնոյ և ա-
րեան լինել առանց բարկութե․ այլ սա
կայն եթէ բնաւ ոչ բարկանայ ոք՝ կա-
րի լաւագոյն է․ ապա թէ ոչ՝ լաւ է
բարկանալ և ոչ մնալ ՚ի բարկութեն․



այլ

այլ ընթանալ առ այն՝ որում բարկա-ցեալն, և առնուլ թողութիւն ՚ի նմանէ։

(Հորդորումն)

Որ ունի ոխս ընդ ընկերին վերահո-րելոյն՝ մեղանչական ինքն պարտ է ըն-թանալ և առնուլ թողութիւն, եթէ որ վերահորեցեալն և տրտմեցեալն։

(Պատասխանի)

Տէ՛րն ասաց. եթէ ո՛չ թողուցուք մարդ-կան զյանցանս նց, և ոչ Հայրն եր-կնաւոր թողցէ ձեզ զյանցանս ձեր։ Եւ ոչ ասաց եթէ որ մեղանչէ և ոչ առ-նէ թողութիւն յայնմանէ որում մեղան, այլ ասէ նմա թողուլ զպատարագն և ընթանալ թողութիւն խնդրել. մեք ա-սէ ոչ այդպէս ուսաք զի արար տէրն մեր. քանզի կարի յոյժ մեղաք նմա. և ոչ եթէ չարիս և յանցանս միայն գործեցաք, այլ թողաք զարարիչն՝ և պաշտեցաք զարարածս. և ոչ եթէ զոսկի միայն պաշտեցաք, այլ զգազա-նաց և անասնոց երկրպագանէաք. և յորժամ զայս ամենայն արարաք՝ ոչ ասա-



ցաք

ցաք թէ տ̃ր մեղաք՝ զի չարիս մեծա
մեծս արարաք․ արդ՝ խնայեա՛ ՚ի ծա_
ռայս քո եւ թողուլ շնորհեա՛ մեղու_
ցելոյս ։ եւ ապա նա այնպէս եկն եւ
մարմնացաւ վ̃ն մեր՝ եւ խաչի համբե
րեաց, չարչարեցաւ եւ մեռաւ․ այլ ա_
ռաւել եւս ՚ի չարիս յաճախեաք․ եւ
նա վ̃ն այնպիսեաց մեղանչականաց
եւ չարագործաց խոնարհեցաւ ՚ի բարձ
րունք երկնից․ զծառայի առեալ զկեր
պարանս եւ մահու համբերեաց ։ Եւ
դարձեալ մինչ ՚ի խաչին էր, ոչ եթէ
նոքա որ խաչեցողքն էին ասացին ե_
թէ մեղաք, թող մեղուցելոցս․ եւ նա
ապա ասացեալ․ հայր՝ թող դոցա զի
ոչ գիտեն զինչ գործեն․ այլ նոքա
առաւելապէս յաճախէին ՚ի չարչա_
րանս, եւ այպն առնէին եւ եղեգամբ
ծեծէին զգլուխ նր̃։ Այլ նա վ̃ն նց̃
աղաչէր եւ ասէր․ հայր՝ թող դոցա․
այլ ասեն նա ա̃ծ էր եւ կարող էր առ_
նել զա̃մ․ եւ արդ՝ ոչ եթէ վ̃ն այնորիկ
արարեալ զայն՝ զի ա̃յ այնմս պարտ


էր

էր առնել. կամ թէ գովեսցես զնա, եթէ առաքինութ͞բ գործեաց. այլ կը դու ուսանիցես։ Իսկ եթէ ասես զի մ͞ծ էր եւ գիտէր զի յաղթելոց էր մահու. եւս առաւել այնորիկ արարել զայն. եւարդ՝ դու հայեաց ՚ի ծառայակիցն քո ՚ի Ստեփաննոս, եթէ զիարդ ասէր վ͞ս քարկոծողաց իւրոց. Տ͞ր մի համարիր ս͞ց զայս մեղս։ Եւ Պետրոս եւ Պօղոս եւ այլք բազումք զնոյն արարին։ Ապա արդ՝ զիարդ ոչ իցէ ապիրատութիւն. զի մ͞ծ վ͞ս մեղանչականաց իւրոց խոնարհեալ ՚ի բարձրութ͞է երկնից եւ առեալ զկերպարանս ծառայի, եւ մեռաւ վ͞ս ն͞ց մարմնով. եւ դու ՚ի տանէ քումմէ ոչ խոնարհիս գնալ առ մեղանչականն քո։ այլ ասես թէ պա՛րտ է նմա գալ որ մեղաւն. եւ բազումք զայս ասասցեն որ են մեղուցեալ են եւ վիրաւորեալ, եթէ մեծ ազգի իցեմ եւ իշխան. եւ կամ եթէ քահանայ եմ, նմա պա՛րտ է գալ առիս եւ առնուլ թողութ͞ի։ Ո՛չ իմ. եթէ

Թագաւոր ոք կամ իշխան կամ մա-
տակարար, եզայս օրէնս եդեալ էր զի
առնէր ա՟մ մարդ. ապա թէ ո՛չ տան
ջէր, ո՛չ ապաքէն երկնչէիր յոյժ.
եւ դարձեալ օրինակ ես ունէիր. եթէ
նա որ վերագոյն եւ բարձրագոյն է
քան զիս, այդպէս արարեալ. ապա
եւ ինձ պարտ է այնպ՟ առնել. որչափ
ես առաւել ապա զոր ա՟ծն երկնի
եւ երկրի արարեալ եւ քեզ ուսուցեալ
զի արասցես. ապա թէ ո՛չ դատապար
տիս. եւ զծառայակցին պատուէրանն
վերագոյն ունիցիս քան զա՟ն. եւ զմար
դոյն քան զա՟յ. եւ 'ի մարմնական տան
ջանաց առաւելապէս երկնչիս. որ առ
ժամանակ մի է՝ եւ առնես զհրամանս
ծառայակցաց քոց, քան զտանջանս
հոգւոյ քո որ յաւիտեանս յաւիտե
նից տանջեսցի. եւ արհամարհես զա՟ծ
եւ ոչ առնես զհրամանս նր. այլ ասես
թէ ազնիւ աւելի իցեմ քան զնա. ո՞ր
չափ եւ մեծագոյն իցես եւ որդի մեծաց,
այլ ոչ երբեւ զա՟ծ եւ որդին ա՟յ. եւ



նա

նա առ մեղանչականս իւր խոնարհե֊
ցաւ, եւ դու առ ծառայակիցն քո ոչ
խոնարհիս ։ 'Ի բա՛ց տար զչար ամ֊
բարտաւանութիւնդ, և զգեցիր զխոնար֊
հութիւն. և արդ՝ սակայն յորժամ մեղան֊
չականն գայցէ, պա՛րտ է առնել թո֊
ղութիւն. առաւելապէս լաւագոյն է քան
զայնոսիկ՝ որք ոչ առնեն թողութիւն
բնաւ, յորժամ գայցեն մեղանչա֊
կանքն և անկանիցին առ ոտս նոցա և
խնդրեն թողութիւն. այնպիսեացն չարա֊
չար է և չարագոյն տանջանքն յորմէ
թողութիւն խնդրէ՝ և ոչ առնէ։ Այնպէս
և որում մեղանչեն և նա յառաջէ և
խնդրէ թողութիւն 'ի մեղանչականէն,
վերագոյն է սրտակն։

(Հարցումն)

Եթէ քահանային մեղանչէ ոք, այն֊
պէս պարտ է առնել. և եթէ 'ի քա֊
հանայէն պարտ է խնդրել թողութիւն
և ոչ քահանայն 'ի մեղանչականէն։

(Պատասխանի)

Տէ՛ր ոչ ապաց թէ, յորժամ մատու֊

 ցանես

ցանես զպատարագն'ի վր̅ սեղանոյն,
պա՛րտ է քեզ գնալ հաշտիլ ը̅ նա,
և ապա մատուցանել զպատարագն,
այլ թէ՝ մատուցանիցես զպատ̅րագն
քո'ի վր̅ սեղանոյն, և անդ յիշեցես՝
եթէ եղբայր քո ունիցի ինչ խէթ
զքէն, թո՛ղ զպատարագն 'ի վր̅ սեղա
նոյն՝ և երթ նախ հաշտեաց ընդ եղ
բօր քում, և ապա եկեալ մատուս_
ջիր զպատարագն քո։ Զի ասաց քս̅
թէ, որ ածէ ապտակ յաջ ծնօտ քո,
մատո՛ նմա և զմիւսն. այդ առաւե̅լ
խոնարհութի̅ է քան զայն՝ որ թողու̅
խնդրէ 'ի մեղանչականէ իւրմէ. ապա
եթէ զայդ ոչ արասցէ՝ պատուիրա_
նազանց է։ Իսկ եթէ քահանայն յա̅ծ
հայեսցի՝ և 'ի պատուիրանս նր̅ լինի
ցի, ևպսակացն ևփառացն ակնունի
ցի, որ վս̅ այսմ առաքինութե̅ զոր
ասացաք վայելելոց է, նա պա՛րտ է
բազում անգամ՝ երթալ և անկանիլ
առ ոտս մեղանչականին. ապա եթէ
'ի փառս մարդկան հայեսցի՝ և ըզ

 փառսն

փառսն ա͞յ անտես արասցէ, այլա
պա́րտ է մեղանչականին ը̈նթանալ.
առ քահանայն՝ եւ առ ա͞մ մարդ. ա-
պա եթէ որպէս ք͞ս ասաց թէ, որք
խնդրեն զփառս 'ի մարդկանէ, նոքա
զփառս ա͞յ ոչ խնդրեն. նա ո͞պ ասա-
ցի այդպէս պա́րտ է առնել:

(Հարցումն)

Արդ՝ ո՞չ ասեմ զ͞ձականն ոք ոխ ու-
նել ընդ եղբարս, այլ թէ ք͞հնայք
ունիցին ոխ ընդ եղբարս եւ առնիցեն
պատարագ:

(Պատասխանի)

'Ի լսելոյ միայն զայդոսիկ սասանիմ,
թո՛ղ թէ կատարել զչարագոյն յան-
ցանքդ զայդ տեսանել կամ լսել: զի
եթէ քահանայն առաջնորդ է ժողո-
վրդեանն՝ եւ զաւետարանն ընթեռ-
նու ն͞յ յա͞մ ժամ, եւ ինքն ոչ կատա-
րէ զհրամայեալսն, զի՞նչ լինիցի ար-
դեօք: Արդ՝ ո͞պ թէ հակառակուճ
ինչ լինիցի 'ի մէջ մարդկան՝ եւ սրով
մարտնչիցեն ընդ միմեանս, եւ կամ

 քարամբ

քարամբ հալածեն զերեարս։ Ո՜հ յարուցէլ ով դաստիարակ որդւոյ Թագաւորի և առնուցու 'ի գիրկս իւր զնոյն ինքն զորդի Թագաւորին իբրև զասպար եմտանէ 'ի մէջ նց̄. եւ իւրաքանչիւր դաս երկնիչին քար արձակել, գուցէ հարկանի յորդի Թագաւորին, եչարչար տանջին. եւ յորժամ նոքա լուեն 'ի պատերազմելոյ ը̄ միմեանս՝ ելինիցի խաղաղութի̄, եւ ապա դաստիարակն քարամբ հարկանիցէ զորդի Թագաւորի. ո՞չ ապաքէն նախ քան զԹագաւորն՝ նոքա որ ընդ միմեանս մարտնչէին, ջանայցեն կործանել զդաստիարակն զայն և սատացեն ցնա. եթէ մեք մարտուցէլքս ը̄ միմեանս յահէ որդւոյ Թագաւորին զոր բարձեալ ունէիր 'ի գիրկդ քո, մեզ հաշտիլ ը̄ միմեանս բողոքէիր։ Եւ մեք լուեալ յերեարս քարս հարկանելոյ, մի՛ գուցէ հարկանիցի յորդի Թագաւորին և մեք տուժեսցուք. արդ՝ յորմէ մեք երկէք առնել զայն



դու

դու արարեր, ևապա Թագաւորն չա
րաչար տանջէ զնա։ Նոյնպէս և քա_
հանայի առնուլ զանձատարանն 'ի վր̄
գրկաց իւրոց՝ և քարոզէ ոխակալացն
ևասէ. եթէ ոչ հաշտիք ը̄ միմեանս,
ապա արհամարհէք զՔս̄. որ պատ_
ուիրեաց հաշտիլ ընդ ընկերին, և
նոքա լուիցեն քահանային՝ և երկրն
չին պահել զոխն, գուցէ արհամար
հի որդին այ̄. և հաշտի իւր̄քանչիւր
ոք ընդ եղբօր իւրում. և յորժամ նք̄
հաշտին՝ և լինիցի խաղաղութ̄ 'ի մէջ
նց̄՝ ևապա քահանայն ոխս պահե_
ցէ, քաջայայտ է՝ թէ նա արհամար
հեաց զորդին այ̄ որ ունէր 'ի գրկի
իւրում ևնովաւ քարոզէր մեզ առ_
նել խաղաղութ̄։ Ո՛չ ապաքէն աղար
տեն զնա ամ̄քն ևարհամարհեն, և
ած̄ զնա չարաչար տանջեսցէ. քանզի
թէ այլ ինչ յանցանս արարեալ իցէ
քահանային 'ի ծածուկ, և ոչ գիտէ
ոք զըստոյգն կամ զըղտոյսն գոյ նե
րումն թողուն̄։ Իսկ յորժամ վըձես



ցե

ցի ոք ընդ ումեք եւ ոխս պահեսցէ, վ̄ն այնորիկ արհամարհի 'ի ժողովր դենէն եւ աղաւթի, զի վճռի 'ի ծածուկ երբէք ոչ լինիցի · եւ յանցանքս այս վերագոյն է քան զա̄մ մեղս եւ չար, զի զա̄մ առաքինութս աղարտէ · վ̄ն այնորիկ 'ի ժամանակի պատարագին յուշ առնէ քահանային թողուլ զնա 'ի վ̄ր սեղանոյ, եւ երթալ հաշտիլ ը̄ ընկերին · եւ զայն որ պատուիրէ թէ թո՛ղ, եւ հաշտեաց ընդ ընկերին, զնա պատճառս առնէ բարեխօսութ̄ե եւ ա_ ղաչանաց ։ Ինձ այսպէս թուի թէ ը̄ խաչահանուանն համարեսցի այնպի_ սին, զի 'ի վ̄ր սեղանոյն արհամարհէց զնա եւ անարգեաց ։

(Հարցումն)

Ապա քանի՞ անգամ պարտ է թո_ ղուլ ընկերին ։

(Պատասխանի)

Պետրոս եօթն անգամ ասաց · այլ քս̄ եօթանասնեկին եօթն, որ չորս հարիւր եւ իննսուն · այլ սակայն մեք

զՊետրոսին արասցուք, եթէ զքէ՞ն
ոչ կարասցուք առնել ։ Ի՞ ընդէր
ոչ հինգ հարիւր անգամ ասաց՝ այլ
չորս հարիւր և ինննսուն. քանզի պետ
րոս եօթն անգամ ա՜ց. և գիտաց թէ
այնչափ շատ ասացի զեօթն անգամն։
վա՜ այնորիկ քա՜ յանձնեալ ասէ ա՛վ
Պետրէ՝ եթէ կարծիցես թէ շատ ա
սացեր և բազ̅մ թ՜եցաւ քեզ զոր ասա
ցեր իրդ. այլ եթէ հայեսցիս՝ իսյսակն
առաքինութ̅եդ վայդ., ոչ եթէ եօթն
անգամ պարտ է թողուլ ընկերին,
այլ եօթանասնեկին եօթն։ Զի եթէ
ասէր թագաւոր ոք՝ եթէ թողուս
եղբօր քում հազար անգամ, մեծա
պէս պատուեմ զքեզ՝ և զարքայու
թիւս իմ տաց քեզ. ո՞չ ապաքէն զնա
աղաչէիր և անկանէիր յոտս նր̅ և
համբուրէիր, մինչև հաշտէր ը̅ քեզ
զի վայելէիր մարմնով զխոստմունս
արքայութե̅ն և զփառս թագաւորին,
որ այսօր վայելէիր և վաղիւն անցա
նէր։ Որչափ ևս առաւել ապա պարտ է

 զհրա

զհրամանս տ՟ն կատարել՝ որ հրամա
նատուն տ՟ծ է, եւ խոստմունքն անան
ցական յաւիտենս յաւիտենից. եւ
վայելմունքն վախճան ոչ ունին՝ զոր
վայելելոց ես ՚ի ձեռն թողուե՟ եղբօր
քո։ Զի թէ բիւրապատիկ յանցանս
արարեալ իցես՝ եւ զյանցանս եղբօր
քո ջնջեսցես ՚ի սրտէ քումմէ, ահա
մաքրեցեր զա՟մ յանցանս քո, եւ ե-
ղեր արժանի արքայութե՟ն. վ՟ զի
պսակն այդպէս իցէ. արդ՝ ասաց ք՟ս.
ոչ եթէ եօթն անգամ, այլ եօթա-
նասնեկին եօթն պարտ է թողուլ ըն
կերին եթէ մեղիցէ քեզ. թողլ ասէ
եւ խնդրեսցի թողուե՟՝ նմա ոչ հաշտե
ցաւ։ Նաեւ այլ եւս անկեր մինչեւ հաշ
տեսցի. զի եւ այն իսկ մեղանք իցէ
յորժամ թողութի՟ խնդրես նմա ոչ
թողուս. սակայն եւ եթէ եօթն անգամ
ոչ է հնար մեղանչել քեզ եղբօրն, այ
դու համարեա՛, զի եօթն անգամ ան
կանիցիս յոտս նր՟։ Ապ՟ եթէ ոչ թո-
ղու քեզ եօթն անգամ, մեղաւ քեզ.



զայն

զայնպիսին պարտ է հանապազ աղա
չել եթողութին խնդրել, մինչև քրն
կատարեսցի եօթանասնեկին եօթն,
եկամ մինչև մեռանիցի ։ արդ՝ եթէ
հաշտի, շահեցար զընկերն. ապա թէ
ոչ՝ նա ժառանգեսցէ զհուրն անշէջ,
եղու զկեանսն յաւիտենականս ։ Զի
թէ Թագաւորին մեղանք ինչ ոմանք
գործեալ իցեն՝ և ասէ Թագաւորն,
եթէ դնասջիք դուք ընդ միմեանս
հաշտեցարուք, ես՝ զինչ յանցանք
ինձ արարեալ էք, թողից ձեզ. և տաց
ձեզ զարքայութին իմ. ապա թէ ոչ,
չարաչար տանջեցից զձեզ. որ թողու
թին առնէր՝ վայելէր զարքայութին.
և որ ոչ առնէր՝ տանջէր չարաչար.
այնպէս եղայս ինչ համարեաց. արդ՝
եթէ դու լի սրտիւ հաշտիս ընդ ընկե
րին՝ շահեցար զարքայութին նորա.
որ ասաց թէ, թողէք՝ եթողցի ձեզ.
և եթէ նա ոչ առնէ քեզ թողութին,
ժառանգէ զտանջանսն . զի ասաց.
եթէ ոչ թողուցուք զյանցանս մարդ

կան՝ ևոչ հայրն ձեր երկնաւոր թողցէ ձեզ զյանցանս ձեր։

(Հարցումն)

Եթէ մատնէ ոք զընկեր իւր 'ի չար․ եթէ սուտ՝ և եթէ ճշմարիտ, համասար դատին, եթէ ըստ յանցանացն։

(Պատասխանի)

Պէսպէս իցեն մատնելութիւնք․ ոմանք գողանան ինչս, և ոմանք խօսին չար անարգանս մեծամեծաց․ ոմանք գողանան զինչս չքաւորաց, ոմանք զինչս մեծամեծաց, և ոմանք զինչս զրկողաց։ Արդ՝ եթէ տեսանիցէ ոք զի գողանայ այր ոմն զինչս չքաւորին՝ և ասասցէ տն իւրում, ոչ դատապարտի, քանզի չքաւորի է։ Իսկ եթէ ոք առցէ զինչս մեծատանց և մատնեսցէ ոք, զայնպիսին դատապարտի․ վս զի յաղագս երախտեաց մատնեաց՝ զի բարի գտանիցէ 'ի նմանէ 'ի ձեռն մատնութեան․ այնպիսին թէ յիրաւի մատնեսցէ և եթէ յանիրաւի՝ դատապարտի։ Իսկ եթէ ոք յանցանս գործեսցէ և

մատնեսցէ ոք զնա՞ որ է յաղագս հօ
գւոյ, դատապարտի. որչափ ևս ա֊
ռաւել ապա յաղագս մարմնոյ. քանզի
զի թէ իւրաւ մատնեսցէ ոք՝ նա ոչ
յայտնէ զծածկեալն, այլ ջանայ խո
րել. քաջայայտ է՝ զի տանջեսցի չա֊
րաչար: Իսկ եթէ յանիրաւի՝ մատնես
ցէ սոյնպէս, վասն զի ոչ ունիցի զի տա
ցէ տեառն, տանջեսցի անդրէն չա֊
րաչար: Զի թէ բամբասելն չար է՝
եթէ յիրաւի և եթէ յանիրաւի, ուր
ոչ տանջանք մարմնոյ. որչափ ևս ա֊
ռաւել մատնելն՝ ուր տանջանք իցէ:
Իսկ զմեղս եթէ մատնեսցէ ոք՝ դա֊
տապարտի. քանզի այլ է յանցանք
գործելն ՚ի ծածուկ, և այլ է գործելն
լրբութեամբ: Իսկ այն՝ որ ՚ի ծածուկ գոր
ծէ ահուբեկ լինելով, մի՛ դուցէ յայտ
նեսցի, նա ոչ յանձանէ ՚ի չարիս յան
ցանաց: Իսկ իբրև յանդիմանի՝ ան֊
ցանէ զամօթ մարմնոյ անառակութեան՝
ստանայ առաւելապէս, և լրբեսցի ՚ի
մեղս՝ և գործէ անպատկառելի. և

Մատնիչն հաղորդ է նո՛ր յանցանացն՝ զինչ և գործեսցէ։

(Հորացիոս)

Յորժամ ոք մեռանիցի՝ 'ի մահիճս լաւագոյն է մեռանիլ, եթէ չարաչար մահուամբ։

(Պոփոսխոնի)

Մահ մեղաւորին չար է առաւել մարդկա ցն։ Իսկ արդարոյն չարաչար մահն՝ ոչ լինի վնաս։ քանզի որ առաջինին է՝ եթէ չարաչար մեռանիցի ; եթէ գահավէժ լինիցի, եթէ գազանաբեկ լինիցի, եթէ թշնամիք ուտիցեն ; և եթէ 'ի հուր այրեսցին՝ և գազանք կերիցեն , և եթէ այլ ինչ չարաչար մահուամբ մեռանիցի, և հոգի նորա պայծառացեալ է առաջի նոյ։ Իսկ որ մեղօք մեռանիցի՝ եթէ բիւրս պատ ուհասցեն զմահ նո՛ր, և բիւր ջահս լուցեալ պայծառացուցանեն շուրջ զնովաւ. և քահանայք և կրօնաւորք սաղմոսիւք թաղեսցեն, ոչ ինչ օգտեսցի։ քանզի զինչ օգտէց մահ մեծատանն՝

որ այնչափ փառօք մեռաւ. կամ
զի՞նչ վնաս Ղազարոսի աղքատին ե-
ղեւ՝ որ սովամահ եղեւ. եւ զի՞նչ լինե-
լի մահ չարագոյն քան զսովամահն
լինել: Բայց ասասցէք եայլ ի՞նչ յայտ-
նապէս: Զի՞նչ լինիցի այլ մահ վատ-
թարագոյն քան զկղերապետին յով-
հաննու. ո՞չ ապաքէն զգլուխ նորա
այսպէն արարէլ աղջկան միոյ ի ձեռն
սրոյ հատանելով և զմարմին նր, և ար
տաքոյ արկեալ ՚ի մէջ աղբից. և յե-
տոյ յուլիանոս ամբարիշտն յորժամ
չարչարէր զարտեմէս վկայ, էջ հուր
և խորտակէց զբագինսն ՚ի սեբաստիա.
Նա չարացեալ բարկութ իւրով, փո
րեալ եհան զոսկերս Եղիսէի մարգա
րէին, և զոսկերս Կղերապետին զմնա-
ցեալսն ՚ի կեսարիայ, և այրեալ հո-
սեաց. Մի թէ վնաս ինչ եղև Կղերա-
պետին. այնպէս համարեա՛ց և զամ
մահ արդարոյ: արդ՝ որ առաքինի
են՝ որչափ և չարաչար մեռանին, ոչ
ինչ վնասի հոգի նր: Իսկ որ մեղօք՝


որչափ

ողջախ և՚իմաստնին մեռանի ապատ_
ումը մեծապէս, ոչ ինչ օգտի ամենևին ։

(Հերդոս)

Լաւագո՞յն է շինել զեկեղեցի, եթէ զայն աղքատաց տալ ։

(Կոստանդինէ)

Արդ՝ իմացայք ՚ի պոռնկէ անտի․ զի յոր ինչ փափագի բնութիւն տոհոգին, զայն ընդունի ած․ եթէ փափագի շինել զեկեղեցի, մի՛ հատաներ ըզ յոյս նր ասասացես թէ, լա՛ւ է տալ աղքատաց․ զի յոր ինչ կյօժարի բնութի մարդոյն առնել՝ զայն ընդունի ած ։ Արդ՝ զմեզ զաշխարս համարի ած՝ եզեկեղեցին փարախ․ եթէ միւսն արածէ զաշխարսն՝ և միւսն կերակրէ, և միւսն այլ փարախ շինեսցէ, զի անդ ժողովեսցին ոչխարքն, և առանց մընասու մնասցեն ՚ի յափշտակել գայլոյն ։ Իսկ՝ որ կարող իցէ կերակրել զաղքատս՝ և շինել զեկեղեցի, կարի՛ ընդունելի է․ ապա եթէ զայն միայն ստացե՟լ իցէ, զի զեկեղեցին շինեսցէ ։



արդ՝

արդ՝ զերոյն զայն՝ զոր շինէ եկեղեցի՝
այնպէս ընդունի ա̃ծ, եթէ ետ զայն
աղքատաց: Զի՞նչ պէտս էր քն օծա
նել խաղողով. յոր ինչ յօժարեցաւ կինն՝
զայն ընդունեցաւ ա̃ծ:

(Հարցումն)

Տեսանեմք զոմանս զի տանջելոց են
'ի մարդկանէ յաղագս մեղանաց իւրեանց,
զի հնարին տալ զա̃մ ինչս իւրեանց,
զի ապրեսցեն 'ի տանջանաց անտի.
եթէ այնու ոչ փրկեն՝ զորդիս իւ-
րեանց ծախեսցեն. արդ՝ զի՞նչ փրձք
իցեն նմա:

(Պատասխանի)

Ինձ այսպէս թուի, եթէ չարաչար
դատապարտի այնպիսին. քանզի յա̃մ
ժամ լուեալ զպատուէր տն Աւետա
րանին որ ասէ թէ, կամիս կատարեալ
լինել՝ վաճառեա զինչս քո, և տուր
աղքատաց. ևնա վն անանց կենացն
եանվախճան բարեացն. զոր ակն ոչ
ետես, և ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ
մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց

ած սիրելեաց իւրոց․ եւզայն՝ ոչ եթէ
ամ մի միայն վայելեսցէ՝ կամ տասն,
կամ հազար, կամ բիւր հազար, կամ
զի՛նչ 'ի սկզբանէ աշի մինչեւ ցայսօր
ժամանակի շիթք անձրեւաց իջանեն․
այլ եւս անթիւ եւ յաւիտեանս յաւիտե
նից․ եւ նա վն կենացն այնմիկ՝ եւ ոչ
զկէս ընչից իւրոց սիրեաց տալ աղ
քատաց․ զի վայելէր զայն՝ որ անըս
պառն է։ Եւ վն այսմիկ կենացս՝ որ այ
սօր ապրեսցի 'ի տանջանացս յայս՝ եւ
վաղիւն մեռանիցի, զամ ինչս իւր
ետ յօժարութբ։ այլ թէպէտ եւ ապրե-
ցաւ աստ 'ի սուղ տանջանաց․ սակայն
զտանջանսն զայն ծանրագոյն կրե-
լոց է՝ որ ոչ փարատի յաւիտեանս յա
ւիտենից։ Իսկ եթէ վն իրաց ինչ
ոչ տանջեսցի, այլ վն այլ իմն մեղա
նաց․ կամ վն գողութե, կամ վն սպա
նութե, կամ վն զրկանաց․ եւ համբե-
րեսցէ՝ եւ գոհանայ՝ զամ յանցանս իւր
քաւեսցէ։ Իսկ այնոքիկ՝ որ զորդիս
իւրեանց վաճառեն՝ եւ զանձինս իւ-

 րեանց

րեանց ապրեցուցանելն. ահա զի կո-
րոյս զորդին և այսօր, կամ վաղիւն
մեռանելոց է ստուգապէս, և նա բնաւ
ոչ ապաշաւեաց. և ոչ ելաց, և ոչ կո-
ծեցաւ: Իսկ յորժամ ած տանէին
Թէ միայն լուաբար յուղարկէր զնա,
և ոչ կոծէր և լայր, այլ գոհութ նե-
րէր և օրհնէր զած. քաջայայտ է՝ զի
քաջէր յանցանս նր:

(Հորյուն)

Եթէ ոք ոչ խնայէ յինչս իւր՝ և ա-
րարէ ընթրիս բազում բարեկամաց՝
և որմուն սակաւ արասցէ և աղքա-
տանայ, զի՞նչ լինիցի:

(Պոտոսխոսէ)

Ազգի ազգի իցէ ասել յաղագս այ
դորիկ հարցանելոյ: Արդ՝ եթէ ոք
սովորութ ունիցի յաղագս այդորիկ
հարցանելոյ ասեմ. զի հանապազ հիւր
ընկալութ արասցէ և ոչ ուտէ առանց
օտարաց կերակուր. եթէ տեսանիցէ
զօտար արկանէ առաջի նր սեղան և
ուտիցէ ընդ նմա: Իսկ եթէ ոչ տե-



սանիցէ

սանիցէ զօտար՝ կոչէ 'ի բարեկամաց և
խորախանայ ընդ նմա. և եթէ օտար
տեսանիցէ՝ այնպէս արասցէ և աղքա
տայ, որպէս սովորութիւն է գալ առ դրունս
անտես ոչ արասցէ տալ կերակուր նոցա,
և ոչ առատապէս ողորմութեամբ. որպէս թէ
զամենայն կարօտութիւնս նոցա լնու, այնպիսւոյն
վարձքն բազում է՝ զի և Աբրահամ
օտարասէր էր։ Իսկ եթէ փողովք և
քնարօք խորախանայ՝ զի գովեսցի 'ի
մարդկանէ, և մարմինն փառաւորես
ցի, այնպիսին թէ և զամենայն ինչս իւր
աղքատաց տացէ՝ ոչ ինչ օգտեսցի,
որպէս և յաւետարանէ անտի լուաք.
Թողթէ բարեկամաց վատնեսցէ։ այլ
սակայն՝ թէ զայդ 'ի միտ ոչ դիցէ,
զի գովեսցի 'ի մարդկանէ, և պարզա
բար ինչս իւր ոչ խնայեսցէ յոսկի՝
կամ յարծաթ, և յախտից արծաթ սի
րութենէն 'ի բաց փախեաւ, և ապրես
ցի 'ի տանջանացն՝ որ պատրաստեալ է.
այնպիսեաց արծաթասիրացն ասեմ
վարձք իւրեանց ոչ կորուսանին՝ այլ

օգտեսցին ինչ, մի՛ առատութեանն։

(Հարցումն)

Իսկ եթէ ոք տայցէ ինչս բազում աղքատաց, եզաւակք ընտանեաց իւրոց կարօտք իցեն · լաւագո՛յն է նց̅ տալ, եթէ աղքատաց։

(Պատասխանի)

Լուաք 'ի մարգարէէն զի ասաց մի՛ ողորմութե̃ թէ, բրդեա՛ քաղցելոց ըզ հաց քո · եզաղքատս անյարկս տա՛ր 'ի տուն քո · եյորժամ զայս ասաց, ո՛չ մինչեւ ցայս վայր դադարեց̃, այլ յաւել ասելով · եյընտանեց̃ զաւակի քո զակն մի՛ արկանիցես · այսինքն թէ, յորժամ զնո̃ կարօտ տեսանիցես, անտես մի՛ արասցես, այլ պարտ է զնո̃ նախ տեսանել։

(Հարցումն)

Իսկ գովելի է ողորմածն · արդ՝ մարդասէ՞ր ողորմածն է, եթէ այլ ոք առաքինի։

(Պատասխանի)

Ողորմածն՝ ողորմած կոչեսցի · սակայն

այլ է ողորմածն՝ և այլ է մարդասէրն.
Եր ողորմի աղքատին ասէ ոմն իմաս
տունն՝ փոխ տայ ա̃յ. այսինքն է՝ զի
հատուցանելն նմա փնդրէն: Իսկ մար
դասէրն՝ հաւասար է ա̃յ. Մարդա-
սէր իսկ այն է՝ որ զայն՝ որ ոչ արաս
ցէ նմա բարի՝ հաւասար սիրէ եբրև
զայն՝ որ բարի արարեալ է նմա: ոպ̃
և ինքն Տ̃րն պատուէրէ մեզ ասելով.
բարի արարէք ատելեաց ձերոց. օրհ
նեցէք զանիծիչս ձեր. և լինիջիք
նման հօրն ձերոյ՝ որ յերկինս է:
Իսկ վ̃ն ողորմածաց՝ այսպ̃ ոչ ասաց,
այլ Թէ՝ եկա́յք օրհնեալք հօր իմոյ,
ժառանգեցէ́ք զարքայութի̃ն երկնից:

(Հարցումն)

Ապա ասեն. եթէ անիծանէ ոք ք̃հնյ
կամ կրօնաւոր, ոչ ինչ է վնասն:

(Պատասխանի)

Մեծագոյն վնասն է և չարաչար յոյժ.
զի զա̃մ զմեղս զոր հրամայեալ է մեզ
ա̃ծ՝ Թէ մի՛ անիցես, ևմեք առնեմք՝
պատուէրանազանց եմք, և դատապ̃ր



տիմք

տիմք։ քանզի Ք՟ս ասաց թէ, օրհնե_
ցէք զանիծիչս ձեր․ և Պօղոս ասէ․
օրհնեցէք և մի՛ անիծանէք․ և դու ոչ
լուար Ք՟սի, և ո՛չ Պօղոսի, և անիծա
ցեր՝ դատապարտիս։ Որդ՝ եթէ թա
գաւորն ասէր ցքեզ՝ եւ ո՛ք հարկա
նէր ամենեցուն եասէր․ եթէ ոք ըզ
մեղանչականն իւր անարգեսցէ, կամ
անրծնեսցէ՝ մահու մեռանիցի․ և դու
ասէիր թագաւորին թէ, դու անի
ծեսջիր․ և տայիր սուր ՚ի ձեռս նր,
թէ դու սպան, ո՛չ ապաքէն չարա
չար տանջէր զքեզ եասէր, ես քեզ
պատուէրեցի ոչ անիծանել, եւ չ ըս
պանանել․ ապա թէ ոչ՝ դատապար
տիս, և մահու մեռանիցիս, և դու զիս
յորդորես՝ յանիծանել, և ՚ի սպանա
նել․ և Ա՟ծ զայնպիսիսն՝ չարաչար
դատապարտեսցէ, որք սովորեալք են
ասել ընդ ոմանս, Ա՟ծ անիծէ զքեզ․
եւ Ա՟ծ նզովեսցէ զքեզ։ Մի՛ անմիտ և
անիրաւ․ Ա՟ծ քեզ պատուէր ետ ոչ
անիծանել․ և դու ասասցես՝ եթէ դու



անի

անիծեմ. ո՞չ գիտես՝ թէ զի՞նչ գոր
ծես. զի նա քեզ ասէ. եթէ անիծա-
նես՝ դատապարտիս, եդու՝ զնմ առ-
նես պարտական, եւասես թէ՝ դու ա-
նիծեմ. մե՛ծ դատապարտութիւն գոր
ծես անձին քում. եւ ոչ գիտես, թէ
վն այդորիկ՝ չարաչար տանջիս։

(Հորդունի)

Յորժամ հրամայէ գիր թէ՝ արարէք
թողութիւն մեղանչականաց. ասասցեն ո-
մանք ընդդիմաբանելով թէ, Ած
յուդայի՝ թողութիւն ընդէր ոչ արար։

(Պատասխանի)

Զա՛ր է ասացուածքդ այդ՝ քան զո-
խակալութիւն, եւառաւել չար. մի թէ
Ած ասա՞ց թէ, անդ ո՛չ տանջեսցիս
զմեղաւորն, կամ զչարարարն քո.
կամ զայնոսիկ՝ որ նր մեղանչեն. այլ
ասա՝ ոչ ինքն չար արար յուդայի, եւ
ո՛չ քեզ հրամայէց չար առնել քում
չարարարին. եւարդ՝ կարե՞ս ասել թէ
ասա ոչ արար թողութիւն Ած յուդայի,
եւ այլոց չարարարաց. զի թէ ոչ էր

 թո

թողեալ ն͞ց՝ բացէլ էր երկիր և կլեալ
էր զն͞ս․ առաքէր հուր և կիզէր զն͞ս․
այլ ոչ արար աստ չար ինչ ն͞ց, և ոչ
քեզ հրամայեաց առնել․ և ոչ եթէ
ինքն չար արարեալ ումեք։ Բայց և
Պետրոս յորժամ եհատ զունկն մաղ
քոսի՝ ասաց ք͞ս ցնա թէ, համարի-
ցիս եթէ ո՛չ կարեմ աղաչել զհայր
իմ, և հասուցանիցէ ինձ այժմ աւե-
լի քան զերկոտասան գունդս հրեշ
տակաց։ այլ աստ ոչ արար ն͞ց, և ոչ
եթէ չար միայն չարար ն͞ց, այլ մա-
նաւանդ աղօթէր վասն ն͞ց և ասէր․
հա՛յր՝ թո՛ղ դոցա զի ոչ գիտեն զինչ
գործեն ։ և որ դարձաւ 'ի չարչարո-
ղացն և հաւատացին, էած յարքայու-
թի՛ւն իւր․ և դու զայս ա͞մ լուար և
համարձակիս ասել թէ, ոչ արար ք͞ս
թողու՛թ յուդայի․ կարի յոյժ արար․
և անդ տանջելոց է պա͞մ մեղաւորս՝
և զնա իսկ։ սոյնպէս և մանաւանդ որ
զայսպիսի բանս համարձակին ասել
առաւելապէս դատապարտեսցէ։



Իսկ

Իսկ դու եթէ մեղանչականին քում արասցես թողութի, թողցին ամ յանցանքն քո. նաև թէ այլ ինչ յանցեալ իցէ՝ այնու դատապարտեսցի։

(Տորքուատ)

Եթէ ոք ճանաչէ զոք զի յանցանս գործեալ է 'ի ծածուկ, պարտ է յանդիմանել թէ ոչ։

(Պափասխանէ)

Ո՛չ ամենեքին. այլ պարտ է քահանային ասել, զի նա միայն գիտէ ըզ դեղ հիւանդութ նր։ Իսկ դու յորժամ յանդիմանես զնա եհամբաւէի գործ չարեաց նր եւիմասցի, զի լուր եղեւ յանցանք նր. առնու համարձակութ եանպատկառելի մնասցէ եւլրբի անամաչելի լինիցի այնուհետեւ 'ի մարդկանէ, եւ 'ի մեղս մնասցէ. եւ պատճառ դու եղեր նր յանցանացն. այլ եթէ յանդիմանել կամիցես զնա՝ առ զնա մեկուսի, եթէ ոչ ես յանցաւոր, եւ արտօսրեաւ եւ խրատեաւ աղաչանօք, զի մի՛ այլ եւս գործեսցէ. ապա թէ

 ոչ՝

ոչ՝ յանդիմանել զնա՝ 'ի մէջ ընկերաց
ոչ է պարտ։ ապա թէ ոչ՝ դատապար-
տիս և հաղորդ լինիս նո՟ր յանցանացն.
զի թէ բամբասելն չար է, որչափ
ևս առաւել յանդիմանելն. և ոչ եթէ
որ բամբասէ միայն, այլև որ իգա-
ցուցանէ զլսելիս իւր առ 'ի լսել ըզ
բամբասանս ընկերին։

(Հարցումն)

Ո՞ արդ՝ ո՞չ բամբասելն չար է. այն
պէս և որ լսէ զբամբասանսն չար է։

(Պատասխանի)

Այո՛ այսէ. որ լսել յօժարի, հաղորդ
է բամբասանացս ախտին։ Բամբա-
սանքն չարահոտութի՟ւն է յորժամ ան-
ցանէ ոք 'ի կողմ՟ն յայն ուր իցեն
գարշահոտութի՟ւնք. ո՞չ ապաքէն խնու
զհոտոտելիսն, զի մի՛ լցեալ լինիցի
գարշահոտութե՟ն։ Այնպէս պարտ է
խնուլ զմուտս ականջացն, և ոչ լսել
զգործս գարշելիս։ Արդ՝ զի՞նչ օգ-
տեսցի ոք առ 'ի լսել եթէ այս անուն
շնայ՝ կամ այս անուն պոռնկեցաւ.

միւսն գողացաւ, և միւսն արուեստագետ
եղև։ Արդ՝ եթե գարշահոտութիւն ինչ
ուրեք ծածկեալ իցէ, և որ բերեալ
բանայ և բուրէ զգարշահոտութիւն, ո՞չ
ապաքէն իւրաքանչիւր ոք խնու ըզ
հոտոտելիս իւր և փախչի 'ի տեղւոջէ
յայնմանէ. և զայն որ եբաց՝ բուրեաց
զհոտն զայն 'ի թշնամանեցէն և անար
գեսցեն. այնպէս պարտ է առնել և
վն այնորիկ որ բամբասեաց զընկերն
առ քեզ, խից զունկն քո և պարսա-
ւեա զնա, և ասա. ոչ կամիմ լսել ըզ
բամբասանս եղբօրն, և ապա բարի
լինիցի քեզ յոյժ։

(Հորացիոս)

Եթէ ոք հարկանէ զաղքատն՝ կամ
առցէ ինչ 'ի նմանէ, զի՞նչ լինիցի։

(Պոփոխոնէ)

Մեծատունն այն՝ Թէպէտ և աղքա-
տին ոչ ետ, բայց և ոչ էառ ինչ 'ի
նմանէ. իսկ ապա որ առնու, առա-
ւել ևս մեծապէս և չարաչար տանջի
քան զմեծատունն. և զի՞նչ լինիցի ա-

սէ. այլ չարաչար տանջանս քան զայն՝
որ կարօտանայր կաթիլ մի ջրոյ ՚ի
մէջ հրոյն. կարի այլ չարագոյն տան
ջանք իցէ՝ և առաւել ևս չար։ Իսկ
որ զաղքատն հարկանէ՝ ինձ այսպէս
թուի թէ, ը̅ այնոսիկ համարեսցի՝
որ զքս̅ ապտակեցին։ Զի թէ քս̅ ասաց.
որովհետև արարիք միում եղբարցս
յայսցանէ՝ ինձ արարիք. քաջայայտ
է՝ եթէ բարի արարեր աղքատին՝ քն̅
արարեր. և եթէ զաղքատն ապտակե
ցեր՝ զնա ապտակեցեր. քանզի այնո
քիկ որ զքս̅ ապտակեցին, ոչ ա̅ծ խոս
տովանեցան, և ո՛չ որդի ա̅յ, այլ մո_
լորեցուցիչ. և մե̅ր ուրացութեն՝ առա_
ջելապէս տանջեցին։ Իսկ եթէ զնա
ա̅ծ խոստովանեալ էին, այլ բնաւ ոչ
համարձակեալ էին կատակել ՚ի նա,
թող թէ ապտակել կամ խաչել։ Զի
եթէ թագաւորն Թէոդոս առաքեսցէ
զպատկեր իւր յանտիոք. և նոքա ապ
տակեալ խորտակեցին զնա. ո՞չ ապա_
քէն չարաչար հալածեաց զա̅մ քա_

 ղաքն։

զաւքն։ Եւ արդ՝ քս̄ ոչ այնպէս, այլ
զաղքատս առաքեաց եւ պատուիրեաց
ասելով թէ, որովհետեւ արարիք մի
ում՚ի փոքրկանցս յայսցանէ՝ ինձ ա-
րարիք. եւ դու ապտակես զի՞նչ լի-
նիս. եթէ ոչ ընդ հրէայսն տանջե-
ցիս՝ որ զքս̄ ապտակեցին։ Իսկ եղի-
ցի մեզ եւ սիրովն քի̄ ընդունել զաղ-
քատս եւ զտնանկս, եւ լինել զկարօտու-
թի̄ պիտոյից նց̄ ըստ հրամանի տն̄
մերոյ Յի̄ Քի̄, որ է օրհնեալ
յաւիտեանս
ամէն։

Յիշատակարան տպեցման:

Մէ Գիրքս Այս Ցանկալի՝
Տպեցաւ և՛ ի լոյս ածաւ, կա-
մօք և հաճուէ̃՝ Տ̃ն Յակոբայ արք
Եպիսկոպոսի և Պատրիարգի Կոս-
տանդնու պօլսոյ և Ըջաբան կոչե-
ցելոյ:

Արդեամբք և ծախիւք բարեմիտ
Տրդս Թէոդորոսին, որ գոլով յոյժ
ըղձական այսմիկ գրգեանս մեծաւ
սիրով ետ տպել: Արդ՝ մինչ ճաշա-
կէք ՚ի քաղցրութէ̃ սոյն գրքոյս, յիշես
ջիք ՚ի յաղօթս ձեր զվերոյիշեցեալ
Տրդս Թէոդորոսն՝ եւ զծնօղսն նորին:
Եւ զորդեակն նորաբոյս զԴիոնեսիոսն:
Դձ̃լ վերստին աղերսեմ, զի յիշիցէք
միով շնորհունակ ըղձիւ զԿարապետ
Վրդ̃պտն նորաբողբոջ՝ եւ ձեռնասուն
Աշակերտն և որդեգիրն Երջանիկ
Պատրիարգին. որ հրամանաւ նորին
իւրոյ, յո՛յժ աշխատեցաւ անդադար՝
՚ի սրբագրելն սորա:

Եւ զհարազատ աշխատաւորսն գոր
ծարանիս յիշեցէք ՚ի քս̃: Վերջ:

Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна



